ՀՀ-ն գտնվում է Հարավային Կովկասում, մի տարածաշրջանում, որը ոչ միայն կրում է իրեն ներառող Մեծ Մերձավոր Արևելքի տարածաշրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական, ռազմաքաղաքական, աշխարհատնտեսական և այլ ռազմավարական գործընթացների ու փոփոխությունների ազդեցությունը, այլև ինքը վերածվել է համաաշխարհային ուժային կենտրոնների շահերի մրցակցության ասպարեզի:

Հարավային Կովկասում տիրող ռազմաքաղաքական իրադրության վրա ազդեցություն գործող արտաքին գործընթացներից ու գործոններից նշենք Մեծ Մերձավոր Արևելքում քաղաքական, կրոնական և կրոնադավանական պայքարի սրումը, այդ թվում՝ Իրաքում, Սիրիայում, Եմենում և Լիբիայում, Աֆղանստանում և Միջին Ասիայում տեղի ունեցող արյունահեղ քաղաքացիական պատերազմները, Իրաքի և Սիրիայի որոշ տարածքներում իր բնույթով ահաբեկչական «Իրաքի և Լևանտի Իսլամական Պետության» ստեղծումը և ընդարձակումը՝ Մերձավոր Արևելքից մինչև Հեռավոր Արևելք ձգվող տարածքների ծրագրվող ընդգրկմամբ, թուրք-քրդական դիմակայության, սուննի-շիա և սուննիների միջավայրում հակասությունների սրումը:

Հայաստանի Հանրապետության և Լեռնային Գարաբաղի Հանրապետության անվտանգության համար հույժ կարևոր նշանակություն ունեն Ադրբեջան-Թուրքիա ռազմաքաղաքական առանցքի ամրապնդումը՝ Վրաստանի ներքաշմամբ այն եռանկյունու վերածման փորձերով, Ադրբեջանի կողմից հրադադարի ռեժիմի անընդհատ խախտումները՝ դիվերսիոն խմբերի հանկարծագրողների և անգամ հրետանու կիրառմամբ, տարածաշրջանում սպառնալիցությունների մրցավազքի սանձազերծմամբ և տարբեր միջազգային հարթակներում հարևան պետության ղեկավարի շուրթերով հնչեցված անթաքույց սպառնալիքներով ու տարածքային նկրտումներով հանդերձ: Ընդամենն այդ ամենը տեղի է ունենում ՀՀ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի և գործընկեր ԱՄՆ-ի միջև լարվածության այնպիսի սրմամբ, որը մնան է չհայտարարված «ոչ զինված» պատերազմի: Կարծում ենք, որ Արևմուտք-Իրան հակասությունները ևս լիովին հարթված չեն, և որոշակի աշխարհաքաղաքական գարգացումների դեպքում բացառված չէ դրանց վերածումը հակամարտության:

Ահա ընդհանուր գծերով այսպիսին է ՀՀ-ի շուրջը ձևավորված անվտանգային միջավայրը, որը պարունակում է ՀՀ-ի դեմ ուղղված իրական ռազմական սպառնալիքներ^{*}, և որն իր բարդության, հարափոփոխության ու անորոշության

² Տես «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն», ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007:

^{*} Ռազմական սպառնալիքը միջպետական հարաբերությունների վիճակ է, որի դեպքում գոյություն ունի մրցակցող կողմերի միջև ռազմական (զինված) հակամարտության ծագման անմիջական հնարավորություն, պատերազմի բռնկման բացահայտ հավանականություն (տես «Военный энциклопедический словарь» («ВЭС»). М., 2002, с. 1517):

հետևանքով դժվար կանխատեսելի է, ուստի դրանց վերլուծության ու գնահատման, հեռանկարային կանխատեսումների հավաստիության ապահովման համար պահանջվում է կիրառել վերլուծության ամենաարդիական մեթոդները, ինչպիսիք են սցենարային պլանավորումը, «PESTLE» և «SWOT», «Որոշումների ծառ» և այլ մեթոդներ:

Այս ամենից ակներևորեն բխում է, որ Հայաստանի Հանրապետության համար առաջնային է ազգային անվտանգության ապահովման համակարգի* պաշտպանական բաղադրիչը, քանի որ գոյություն ունեցող ռազմական վտանգներն անմիջականորեն սպառնում են ոչ թե պետության ու հասարակության կենսագործունեության որևէ ոլորտի, այլ մեր պետության, նրա բնակչության ֆիզիկական գոյությանը:

ՌԲստի մեր գերակա խնդիրը պետք է լինի այնպիսի պաշտպանական համակարգի, կամ Պաշտպանության, ստեղծումը, որն ի գործու լինի ոչ միայն ապահովելու մեր ազգի, պետության, հասարակության և քաղաքացու պաշտպանական անվտանգությունը, այլև ներգործելու ՀՀ-ի շուրջը ձևավորված անվտանգային-ռազմաքաղաքական միջավայրի վրա՝ հավանական հակառակորդի գազման միջոցով այն դարձնելով մեր պետության, հասարակության կայուն զարգացման ապահովման տեսակետից բարենպաստ և անվտանգ³:

ՌԲստի Պաշտպանության համակարգի արդյունավետ կազմակերպման համար անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն ռազմական բնույթի սպառնալիքները, այլև դրանց բավական լայն շրջան, այնպես, որ դրանց վերլուծության ու հակամիջոցների ձեռնարկման շնորհիվ հնարավոր լինի ապահովել Պաշտպանության անխափան գործունեությունը: Իսկ ՀՀ-ի նման փոքր պետությունների դեպքում, երբ չկա «պաշտպանության բավականաչափ ռազմավարական խորություն»**, Պաշտպանության համակարգում ընդգրկվում է պետության ամբողջ պաշտպանական հզորությունը***:

* Ազգային անվտանգության ապահովման համակարգի բաղադրատարրերն են՝ ա) անվտանգության արտաքին ու ներքին միջավայրի մասին նոր գիտելիքի ստեղծումը (*ինստակսն քաղադրարարք*), բ) ազգային անվտանգության ապահովման ուղղությամբ գործունեության պլանների մշակումը (*ծրագրային քաղադրարարք*), գ) անվտանգության արտաքին և ներքին միջավայրի վրա ներգործության ռեսուրսների կառուցավորումը (*կառուցողական քաղադրարարք*), դ) ազգային անվտանգության ապահովման համակարգի տարրերի և արտաքին միջավայրի հետ օպտիմալ կապերի հաստատումը (*հաղորդակցային քաղադրարարք*), ե) անվտանգության արտաքին ու ներքին միջավայրի վրա նպատակաուղղված ներգործության իրացումը՝ սպառնալիքների տեղափակման կամ վերացման նպատակով (*կազմակերպական քաղադրարարք*) (տես «Հավելված. Հիմնական տերմիններ և հասկացություններ»: «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության մախագիծ»: «ՀԲ», 2006, հմ. 2, էջ 53–54):

³ Տես *Ս. Մ. Օհանյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանական բարեփոխումները. երկրորդ փուլ: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

** Ռազմաճակատի կամ ռազմադաշտի առջևի գծի և կարևոր արդյունաբերական շրջանների, մայրաքաղաքի կամ բնակչության կուտակման կայրերի միջև եղած տարածությունը (ընդունված է համարել 150–550 կմ, իսկ ՌԳԹ-ում ցամաքային գործերի մարտական գործողությունների շրջանի խորությունը կազմում է 250–300 կմ և ավելի (տես «ԲՅՇ», с. 608)):

*** Պետության (պետությունների դաշնադրության) պաշտպանական, կամ ռազմական,

Արագ փոփոխվող աշխարհում ոչ մի կազմակերպություն, հատկապես՝ այնպիսի գերհամակարգ, ինչպիսին է Պաշտպանությունը, չպետք է սահմանափակվի անցյալի ձեռքբերումներով, այլ պետք է շարժվի շարունակական զարգացման ուղիով՝ մրցակիցների կամ հավանական հակառակորդների նկատմամբ համեմատական առավելություն ձեռք բերելու և պահպանելու համար: Պաշտպանական բնագավառում այս առումով հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է ոչ միայն մշտապես բարձրացնել բանակի մարտունակության ու մարտական պատրաստության, անձնակազմի մասնագիտական հմտությունների ու կրթության մակարդակները, ՉՈՒ-ն ապահովել անհրաժեշտ քանակով ու որակով զենքի և սպառազինության համակարգերով, այլև հասցնել անհրաժեշտ մակարդակի պետության տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական և այլ ոլորտների զարգացման ցուցանիշները: Կարևոր է նաև երկրի պաշտպանության կազմակերպման գործում ռազմական ու քաղաքացիական կառույցների սիներգիկ փոխգործության ապահովումը:

Այդ բոլոր հարցերի օպտիմալ լուծմանը նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետությունում իրականացվող պաշտպանական բարեփոխումները, որոնց տրամաբանությունից բխում է և դրանց մաս կազմում Պաշտպանության արդեն երկրորդ ռազմավարական վերանայումը (ՊՌՎ): ՊՌՎ-ն իրագործվում է անցյալի սխալները պարզելու և վերացնելու միջոցով ներկայիս ձեռքբերումների հիման վրա հեռանկարային նպատակները (որակական ու քանակական պարամետրները) որոշելու ու իրականացնելու համար⁴: Դրա համար պահանջվում է վերահստակեցնել մեր ազգային շահերի դեմ ուղղված ներկա և ապագա սպառնալիքների բնույթն ու ուժգնությունը, որոշակիացնել դրանց չեզոքացման կամ հետմղման համար անհրաժեշտ ուժերն ու միջոցները, հիմք նախապատրաստել Պաշտպանության համակարգի զարգացման 2016–2020 թթ. պլանի մշակման և իրագործման համար, ինչպես նաև խելամիտ կերպով պլանավորել անհրաժեշտ ֆինանսական ու նյութական ռեսուրսները:

Այսպիսով՝ ՊՌՎ գործընթացը նպատակաուղղված է բոլոր մակարդակներում քաղված դասերի վերլուծության և թերությունների շտկման միջոցով Պաշտպանության դիմամիկ զարգացման ապահովմանը: ՊՌՎ երեք հիմնական վեկտորների (նպատակ, միջոցներ, ձևեր) ներդաշնակության ապահովման շնորհիվ հնարավոր են դառնում նաև ռիսկերի խելամիտ կառավարման վերլուծությունը, ինչպես նաև այն կարողությունների պարզումը, որոնք կձևավորվեն ՊՌՎ իրագործման ընթացքում, և որոնք կարող են օգտագործվել ազգային նպատակներին հասնելու համար: Եվ այսպես. ՊՌՎ-ն հնարավորություն է տալիս մշակելու պաշտպանական համակարգի զարգացման ու կատարելագործման հեռանկարային պլան:

հզորությունը նրա նյութական և հոգևոր ուժերի այն մասն է, որը կարող է օգտագործվել կամ օգտագործվում է ռազմաքաղաքական նպատակներին հասնելու համար (տես նույն տեղում, էջ 295):

⁴ Stiu Jennifer M. Taylor, Emily Boggs. Strategic Defense Reviews: Procedures, Frameworks, and Tools to Enhance Future Defense Institution Building Projects. A Report of the CSIS New Defense Approaches Project. CSIS. Washington, D. C., September 2011:

Բացի գուտ ռազմական սպառնալիքներին դիմակայելու խնդրից, պետք է ուշադրության կիզակետում պահել նաև սոցիալ-տնտեսական զարգացման, ռեսուրսների (այդ թվում՝ մարդկային) արդյունավետ կառավարման, ազգային ինքնության պահպանման, պետության ու քաղաքացիական հասարակության օպտիմալ հարաբերությունների ձևավորման, կրթության ու գիտության զարգացման, բարոյահոգեբանական պատրաստության և երիտասարդության հայրենասիրական դաստիարակության, տեղեկության և պահովման, առողջապահության, հաղորդակցության ուղիների ու միջոցների կատարելագործման, կոռուպցիայի դեմ պայքարի, պաշտպանական ծախսերի արդյունավետության մեծացման, շրջակա միջավայրի ու տեղական էկոհամակարգերի պահպանության, ուրբանիզացման հետ կապված հարցերը՝ երկարաժամկետ կտրվածքով դրանց՝ որպես անվտանգության ոլորտում էական ազդեցություն ունեցող գործոնների դիտարկմամբ:

Հետևաբար, անհրաժեշտ է ՀՀ պաշտպանական անվտանգության ապահովման համար կիրառել համակողմանի մոտեցման մոդելը, որտեղ համակարգված ձևով ներգրավված լինեն պետական կառավարման բոլոր մարմինները, և որտեղ մեկ գերատեսչության աշխատանքը կլրացնի մյուսներին: Նման միջգերատեսչական համատեղ աշխատանքի կազմակերպման համար անհրաժեշտ է ցուցաբերել գիտամեթոդաբանական մոտեցում, որտեղ բարձր որակավորում ունեցող ռազմավարագետների մասնակցությամբ պլանավորվի ջանքերի սիներգիկ համադրումը: Ի կատարումն նշվածի՝ տեսականից գործնականի անցնելու նպատակով ՀՀ-ում 2014 թ. պլանավորվեց և 2015 թ. սեպտեմբերին անցկացվեց «Շանթ-2015» ռազմավարական հրամանատարաշտաբային գորավարժությունը՝ պետական կառավարման բոլոր մարմինների մասնակցությամբ, որտեղ ՁՈՒ-ի Գերագույն Գլխավոր Հրամանատարի՝ ՀՀ Նախագահի ղեկավարությամբ փորձարկվեց ռազմական սպառնալիքներին դիմակայելու՝ պետության կարողությունը: Նման գորավարժությունների կազմակերպումն անմիջապես բխում է ՊՌՎ դրույթներից. այն ակնբախ կերպով ի հայտ է բերում առկա բացթողումներն ու հիմք դառնում հետագայում դրանք շտկելու մեխանիզմներ մշակելու համար:

Ինչպես նշվեց, ՀՀ-ի մնացած սուղ մարդկային և նյութական ռեսուրսներ ունեցող և «թեժ կետերից» մեկում գտնվող փոքր պետությունների համար պաշտպանության կազմակերպումն ու իրագործումը համապետական խնդիր է: ՌԻստի ՊՌՎ ընթացքում անհրաժեշտ է հստակեցնել պետական կառավարման մարմինների ներգրավման և դրանց կարողությունների սիներգիկ համադրման հարցը: Դա հնարավորություն կտա պաշտպանական անվտանգության ապահովման գործում ռազմական-պաշտպանական գործիքարանի հետ մեկտեղ (ՁՈՒ-ն՝ իր ապահովման ենթակառուցվածքով) կիրառել նաև պետության այլ հնարավորությունները, ինչպիսիք են, օրինակ, տնտեսական, քաղաքական, դիվանագիտական, տեղեկատվական, տեխնոլոգիական և ազգային հզորության ապահովման այլ գործիքներ: Ազգային հզորության ապահովման բոլոր գործիքների խելացի համադրմամբ և կիրառմամբ է միայն հնարավոր ապահովել տևական հաջողություն-

ներ ներքին և, առավել ևս, արտաքին բացասական գործոններին ու տարատեսակ մարտահրավերներին դիմագրավման գործում: Պատմության ընթացքում քիչ չեն դեպքերը, երբ ազգային հզորության ապահովման գործիքարանի սխալ ընտրությամբ կամ գերակայությունների որոշմամբ ձեռնարկված գործողությունների, հակառակորդի հնարավորությունները թերագնահատելու ու պատերազմի բնույթը ճիշտ չընկալելու պատճառով գերհզոր պետությունները պարտություն են կրել ավելի թույլ հակառակորդներից:

Պետության և հասարակության անվտանգության ապահովման գործում պաշտպանական անվտանգության գերակայությունը ցույց է տալիս, որ ժամանակն է անվտանգության ապահովման երկաստիճան (ազգային անվտանգության ռազմավարություն – ռազմական դոկտրին) մոդելից անցնելու ավելի կատարելագործված եռաստիճան (ազգային անվտանգության ռազմավարություն – պաշտպանական ռազմավարություն – ռազմական դոկտրին) մոդելի, որը կիրառվում է արևմտյան պետություններում, առաջին հերթին՝ մեր գործընկեր ԱՄՆ-ում, և որին անցում է կատարում մեր ռազմավարական դաշնակից Ռուսաստանը⁵: Դա մեզ հնարավորություն կտա ընդհանուր գաղափարի հենքի վրա և միասնական մտահղացմամբ համախմբելու ՀՀ պետական համակարգի ներուժը՝ ի նպաստ ՀՀ ու նրա բնակչության անվտանգության ապահովման:

Անվտանգության ամբողջ համակարգի գործունեության արդյունավետության մեծացման համար կարևոր է ունենալ նաև լավ նախագծված ու կազմակերպված ղեկավարման և կառավարման համակարգեր՝ դրանց խելամիտ տարանջատմամբ: Այս առումով էական դեր է խաղում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության զարգացման պլան» մշակելու և երաշխավորված պաշտպանության արդյունավետության ապահովման նպատակով դրա միջոցով պետական կառավարման բոլոր մարմինների ջանքերը համադրելու մասին որոշումը, որն ընդունվել է ՊՌՎ արդյունքներով: Դեկավարման ու կառավարման տարանջատման արևմտյան մոդելից բացի, մենք շեշտ ենք դնում նաև ՊՆ համակարգում գիտակրթական ներուժի զարգացման վրա, մասնավորապես՝ ՀՀ ՊՆ Ազգային պաշտպանական հետազոտական համալսարանի ստեղծմամբ⁶, ինչը հնարավորություն կտա ստեղծելու նաև ռազմավարական որոշումներ նախապատրաստող ուղեղային կենտրոն:

Պաշտպանության համակարգի արդյունավետ գործունեությունն ապահովելու համար հրամայական պահանջ է համապատասխան օրենսդրական բազայի, այլ կերպ ասած՝ իրավական նորմերի առկայությունը: Այդ բազան պետք է ոչ միայն այսօր հիմք ծառայի Պաշտպանության բոլոր սուբյեկտների արդյունավետ գործունեության համար, այլև անհրաժեշտ նախադրյալներ ստեղծի ամբողջ համակարգի միջնաժամկետ ու երկարաժամկետ զարգացման համար:

⁵ Տես *М. Гаев. Новые условия – новая военная доктрина. «Независимое военное обозрение», 2 февраля 2007:*

⁶ Տես *Ս. Օհանյան*, Ռազմական կրթության համակարգի զարգացումը՝ որպես ՀՀ պաշտպանական համակարգի մեծացման գործոն: «ՀԲ», 2012, հմ. 3:

Պաշտպանության համակարգի կատարելագործման, պետության պաշտպանունակության մակարդակի բարձրացման առումով կարևոր դեր ունեցավ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող ՊՌՎ շրջանակներում այնպիսի նոր գաղափարների ու հայեցակարգերի տեղայնացումը, ինչպիսիք են «Խելամիտ պաշտպանությունը», «Փոքր ուժերով մեծ խնդիրների կատարումը» և «Հրահանգային կառավարման» փոխարեն «Առաջադրանքային կառավարման» («Առաջադրանքով հրամանատրում») մոդելի ներդրումը: Դա հնարավորություն է տալիս արդիականացնելու մեր ՁՈՒ-ի կենսագործունեությունը, մեր բանակային համակարգը դարձնելու միջազգային անվտանգության ապահովման տարբեր համակարգերի ռազմական բաղադրիչների հետ ավելի գործակցելի, ուստի և միջազգային պարտավորությունների կատարմանն ավելի մեծ չափով ունակ: Այսպիսով մեր Ձինված ուժերը նպաստում են այն կարգախոսի իրականացմանը, որ ՀՀ-ն ոչ միայն միջազգային անվտանգության սպառող է, այլև դրա ճարտարապետության ձևավորման ու ամրապնդման ակտիվ մասնակից⁷:

Այսպիսով՝ Հայաստանի Հանրապետությունում արդեն երկրորդ անգամ իրագործվող Պաշտպանության ռազմավարական վերանայումը ոչ միայն թելադրված է լավագույն համաշխարհային փորձով, այլև ներքին և արտաքին իրողություններով պայմանավորված հրամայական է: Այն իրականացվում է ՀՀ տարբեր գերատեսչությունների ու մարմինների միասնական ջանքերով՝ ՀՀ ՊՆ համադասմամբ: ՊՌՎ-ն իրագործվում է աստիճանական սկզբունքով, երբ յուրաքանչյուր քայլ կատարվում է նախորդ քայլի հիմքի վրա:

ՊՌՎ համապետական խնդրի լուծումը նպատակաուղղված է անցյալի դասերի ուսումնասիրության ու գնահատման հիման վրա թույլ տրված սխալների ու բացթողումների բացահայտմամբ ու վերացմամբ այնպիսի Պաշտպանական համակարգի ստեղծմանն ու մշտական կատարելագործմանը, որն ի գործու լինի երաշխավորված կերպով ապահովելու ՀՀ և ԼՂՀ բնակչության ֆիզիկական գոյությունը, բարենպաստ պայմաններ ստեղծելու մեր պետության, հասարակության և անհատի անվտանգ ու կայուն զարգացման համար:

⁷ Տես «ՀՀ Նախագահին առընթեր Ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, ՀՀ Պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանի «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարության ուղենիշները» զեկուցումը ՀՀ ՁՈՒ-ի հրամանատարական կազմի համար»: Ե., 2005, էջ 25:

СУЩНОСТЬ И ЦЕЛИ СТРАТЕГИЧЕСКОГО ПЕРЕСМОТРА ОБОРОНЫ РА

*С. М. ОГАНЯН, генерал-полковник (в отставке), кандидат политических наук,
Министр обороны РА*

РЕЗЮМЕ

Основной функцией любого государства является обеспечение национальной безопасности. Приоритеты национальной безопасности во многом определяются теми угрозами, которые возникают в их внешней и внутрен-

ней безопасностной среде. Армения находится в регионе Южного Кавказа, являющемся ареной приложения совпадающих или соперничающих интересов многих центров силы. В числе основных факторов, влияющих на военно-политическую обстановку на Южном Кавказе, укрепление оси Азербайджан – Турция с попытками ее трансформации в треугольник – с вовлечением Грузии, постоянные нарушения со стороны Азербайджана режима прекращения огня на рубежах соприкосновения с силами АО НКР и на границе с РА, развязанная им гонка вооружений и милитаристическая риторика на уровне первых лиц этого государства, сопровождающаяся актами диверсии и артиллерийскими обстрелами поселений на территории РА и НКР, обострение политической и религиозно-конфессиональной конфронтации на Большом Ближнем Востоке, в первую очередь, в Сирии, Ираке, Ливии, Йемене, Афганистане. В подобной сложной, трудно прогнозируемой геополитической и геостратегической обстановке доминантной для РА является проблема обеспечения оборонной составляющей национальной безопасности.

В целях создания в РА действенной системы обороны, способной не только адекватно реагировать на все возникающие угрозы, но и влиять на военно-политическую обстановку в регионе в целях гарантированного обеспечения благоприятных условий для устойчивого и безопасного развития государства, общества и индивидуума в Армении осуществляются оборонные реформы, одним из важных этапов и эффективных инструментов которых является Стратегический пересмотр обороны (СПО). СПО в РА осуществляется уже во второй раз. Основной целью процесса является, с одной стороны, выявление главных угроз безопасности РА и определение их характера и динамики изменения в краткосрочной и среднесрочной перспективе, с другой – определение необходимых для их парирования и наличествующих людских и материальных ресурсов с выработкой оптимальной стратегии их эффективного использования.

В условиях высокой степени неопределенностей в развитии военно-политических процессов и безопасностной среды в регионе при оценке угроз были использованы самые современные методы и методики анализа, такие, как PESTLE- и SWOT-анализы, сценарное планирование, «Дерево принятия решений» и т. д. Это позволило существенно повысить степень валидности результатов прогнозирования, а следовательно – обеспечить более высокую эффективность планирования развития оборонной системы РА.

Важное место в развитии системы обороны военно-политическое руководство РА отводит воспитанию поколения руководящих кадров–единомышленников, владеющих самыми современными научными знаниями в области политологии национальной безопасности и мастерством их воплощения на практике, совершенствованию систем руководства и управления в

сфере обороны с внедрением приспособленных к местным условиям современных принципов, таких, как «предоставление командиру самостоятельности при выполнении задач» (*Mission Command, Auftragstaktik*), «Решение больших задач малыми силами», «Разумная оборона».

ESSENCE AND OBJECTIVES OF THE RA STRATEGIC DEFENSE REVIEW

S. M. OHANYAN, Colonel-General (retired), PhD in Political Science, RA Defense Minister

SUMMARY

The basic function of a state is to ensure its national security. The national security priorities are largely determined by the threats emerging in the external and internal security environments. Armenia is situated in the South Caucasus region – an arena of coinciding and conflicting interests of many power centers. Here are the key factors affecting the military and political situation in the South Caucasus: entrenchment of Azerbaijan-Turkey axis with attempts of transforming it into a triangle by engaging Georgia; regular violations of the ceasefire regime by Azerbaijan along the line of contact with the NKR Defense Army and on the RA borders; arms race unleashed by Azerbaijan and its militaristic rhetoric at the level of the first persons of the state, accompanied by subversive acts and artillery fire against the inhabited localities of the RA and NKR; escalation of the political and religious-confessional confrontation in the Greater Middle East, primarily in Syria, Iraq, Libya, Yemen, and Afghanistan. The problem of ensuring the defense component of national security becomes dominant for the RA in such a complicated, hard-to-predict geopolitical and geostrategic environment.

In order to build an effective defense system capable of not only adequately responding to all the threats, but also influencing the military and political environment in the region, focused on guaranteeing favorable conditions for the stable and secure development of the state, society, and individual, defense reforms are being implemented in Armenia, and an important stage and efficient tool of which is the Strategic Defense Review (SDR). The SDR is being implemented in the RA for the second time. The primary purpose of the process is, on the one hand, the identification of main threats to the security of the RA and determination of their nature and dynamics in the short- to medium-term perspective, on the other – the definition of the necessary for their parrying and available human and material resources to develop an optimal strategy for their effective use.

Given the high degree of uncertainty in the development of military-political processes and security environment in the region, while assessing the threats, the most up-to-date analysis methods and techniques were used, such as PESTLE and

SWOT-analysis, scenario planning, "Decision Tree" and so on. This has significantly increased the validity of forecast's results, and therefore – ensured greater efficiency of planning the development of the defense system of the RA.

In the defense system's development, the RA military and political leadership assigns an important role to the executive education of the like-minded generation equipped with the most advanced academic knowledge in national security policy studies and the skill of putting them into practice, enhancing the leadership and management systems in the defense sector with the introduction of locally adapted modern principles, such as "Providing the Commander with Independence when Performing Tasks" (Mission Command, Auftragstaktik), "Solution of Big Problems with Small Forces," "Reasonable Defense."

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գ. Է. ՏՈՆՈՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարի առաջին տեղակալ

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ) գործընթացը թեև ակտիվ է իր եզրափակիչ՝ պաշտպանության նկատմամբ ռազմավարական մոտեցման մշակման փուլը: Նախորդ փուլերում անվտանգային միջավայրն ու սպառնալիքները գնահատելու և ռազմավարական պլանավորման նկատառումները (պայմանական նախադրյալները՝ *assumption**) սահմանելու համար օգտագործվել են «SWOT» և «PESTLE» մեթոդները:



Վերանայման փուլերում անհրաժեշտություն է առաջացել սահմանելու պաշտպանության կազմակերպման համար բոլոր պետական գերատեսչությունների համատեղ գործառնական ոլորտները, ինչպես նաև տարանջատելու ղեկավարման՝ հրամանատարման (հրամանատարության) ու կառավարման՝ վերահսկման գործառնությունները: Ինչպես «Խելամիտ պաշտպանության» տեսլականով և «Փոխգործունակություն» կարգախոսով ուղղորդվող ամբողջ գործընթացի, այնպես էլ դրա առանձին փուլերի համար էական նշանակություն ունի առաջարկվող լուծումների ճիշտ «մատուցումը» դրանք կատարողներին, և դա արվում է փոփոխության կենսագործման քայլերի հաջորդականության սկզբունքով:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող Պաշտպանության ռազմավարական վերանայումը մեր պետության պատմության մեջ արդեն երկրորդ անգամ գործընթացն է: Առաջին ՊՌՎ-ն կատարվեց 2008–2010 թթ., և դրա արդյունքը եղավ ՀՀ Զինված ուժերի 2011–2015 թթ. զարգացման պլանի, Սպառազինության ու ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի և մի շարք այլ փաստաթղթերի մշակումը: Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թ. դեկտեմբերի 5-ի կարգադրությամբ պաշտոնապես մեկնարկեց Պաշտպանության երկրորդ ռազմավարական վերանայման միջգերատեսչական գործընթացը¹: Այդ նույն կարգադրությամբ հաստատվեց ՊՌՎ ժամանա-

* Ընթացիկ վիճակի մասին վարկած կամ իրադարձությունների ապագա զարգացման մասին կանխավարկած, որոնք ապացուցում չունենալով հանդերձ կարող են ճիշտ լինել, և որոնք անհրաժեշտ են հրամանատարին՝ իր գործողությունների պլանավորման ժամանակ գնահատումները «եթե–այա» սկզբունքով ավարտին հասցնելու և գործողությունների օպտիմալ սցենար մշակելու համար (տես «Joint Operation Planning. Joint Publication 5-0». U.S. Joint Chiefs of Staff. Washington, 11 August 2011, P. GL-5):

¹ Տես Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թ. դեկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը համակարգող միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու մասին» հմ. ՆԿ-218-Ն կարգադրությունը (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=713139>):

կացույցը, ըստ որի՝ այն պետք է կատարվի երկու փուլով. պլանավորման՝ 2014 – 2015 թթ., և իրագործման՝ 2016–2020 թթ.:

ՊՌ-Վ սկզբունքներն ու մեթոդները ներկայացնելուց առաջ հարկ ենք համարում հստակեցնել այդ գործընթացի նպատակն ու առարկան, հասկանալ ձեռնարկման պատճառը:

ՊՌ-Վ նպատակը, մի կողմից, անվտանգության միջավայրի և սպառնալիքների, մյուս կողմից՝ վերջիններին դիմակայելու համար անհրաժեշտ մարդկային ու նյութական ռեսուրսների գնահատման հիման վրա Պաշտպանության համակարգի հեռանկարային զարգացման ապահովումն է:

Ո՞րն է վերանայման առարկան: Եթե համատեղենք արևելյան և ռուսաստանյան սահմանումները, ապա կարող ենք ասել, որ Պաշտպանությունը պետության ինքնիշխանության, անկախության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության պահպանմանը և դրան պատրաստմանը նպատակաուղղված քաղաքական, տնտեսական, ռազմական, սոցիալական, իրավական և այլ բնույթի միջոցառումների համակարգ է²:

Ինչու՞ է Պաշտպանությունը վերանայվում: Այս հարցին պատասխանելիս պետք է նկատի ունենալ, որ զինված հակամարտության միջոցներում, եղանակներում ու ձևերում տեղի ունեցող արագ փոփոխություններն զգալի ազդեցություն են գործում խաղաղ և պատերազմական ժամանակաշրջաններում զինված ուժերի ղեկավարման ու կառավարման համակարգերի, դրանց պատրաստման վրա: ՌԻստի պետությունում մշտապես պետք է տեղի ունենան պետական ու ռազմական կառավարման մարմինների կատարելագործման, ժամանակակից միջոցներով դրանց ապահովման, ինչպես նաև նորմատիվ իրավական նոր փաստաթղթերի ընդունման գործընթացներ: Այս ամենը, հատկապես՝ Հայաստանի Հանրապետության նման ռազմական անվտանգության խնդիրներ ունեցող պետության համար, հանգեցնում է Պաշտպանության կազմակերպման ու իրագործման հետ կապված մի շարք հիմնախնդիրների վերանայման անհրաժեշտության³:

Ինչու՞ է վերանայումը ռազմավարական, այսինքն՝ մեծանշանակ: Բանն այն է, որ վերանայման են ենթարկվում պաշտպանության համակարգաստեղծ պարամետրները, ուստի ՊՌ-Վ-ն անխուսափելիորեն կհանգեցնի համակարգի ռազմավարական մակարդակի փոփոխությունների: Այստեղից և գործընթացի անվանումը:

Այժմ ներկայացնենք ՊՌ-Վ մեթոդները: Հայաստանի Հանրապետության ՊՌ-Վ արդյունավետությունն ապահովելու համար տեղայնացմամբ և մեր խնդիրներին հարմարեցմամբ կիրառվել է Ջոն Բոտերի մշակած մեթոդաբանությունը⁴, որը ենթադրում է հետևյալ ութ հաջորդական քայլերի ձեռնարկում:

² Տես Դ. Ս. Չիլինգարյան, Ա. Ե. Սարգսյան, Պաշտպանական-անվտանգային տերմինների բացատրական հայերեն–ռուսերեն–անգլերեն, ռուսերեն–հայերեն, անգլերեն–հայերեն բառարան: Ե., 2012, էջ 344:

³ Տես В. И. Фролов. Основы управления вооруженными силами. Кафедра стратегии, Военная академия Генерального штаба Вооруженных Сил Российской Федерации, 2001, с. 3:

⁴ Տես John P. Kotter. Leading Change. Boston, 1996, P. 21:

Առաջին քայլը (*Establishing a Sense of Urgency*) անվտանգության միջավայրի և դրա փոփոխման դինամիկայի ուսումնասիրության հիման վրա Պաշտպանության համակարգում փոփոխությունների անհրաժեշտության հիմնավորումն է և կատարողների կողմից դրա գիտակցման ապահովումը: Հայաստանում այդ քայլը կատարված է. պետական կառավարման այն բոլոր մարմինների ղեկավարներն ու աշխատողները, որոնք ներգրավված են ՊՌՎ-ում, գիտակցում են, որ Պաշտպանության համակարգում կա կարողությունների (ուժերի և միջոցների) զարգացման, փոխգործության մեխանիզմների կատարելագործման և գործառույթների հստակեցման անհրաժեշտություն:

Հաջորդ քայլը (*Forming a Powerful Guiding Coalition*) փոփոխություններն ուղղորդող համախոհների «դաշնադրության»՝ դրանք առաջնորդելու բավականաչափ ներուժով և իրավագործությամբ օժտված թիմի կազմավորումն է: Այդ քայլն էլ է կատարված. Հայաստանի Հանրապետության ՊՌՎ-ն համակարգող միջգերատեսչական հանձնաժողովը և դրան կից գործող աշխատանքային խումբը «համապետական նշանակության լուծումների» որոնման թիմային աշխատանքի լավագույն ձևաչափն են:

Դրան հաջորդում է փոփոխությանն ուղղված ջանքերի համախմբմանը միտված տեսլականի ստեղծումը և դրան հասնելու ռազմավարության մշակումը (*Creating a Vision*): Ըստ այդ տեսլականի՝ ՀՀ ՊՌՎ վերջնականապես կը Հայաստանի խելամիտ Պաշտպանության համակարգի կերտումն է, մի համակարգի, որում պետք է ներգրավված լինեն պետության ու հասարակության բոլոր ռեսուրսները: Այս քայլը նույնպես կատարված է:

Չորրորդ քայլը (*Communicating the Vision*) տվյալ տեսլականի ու ռազմավարության տարածումն է ինչպես ՊՆ համակարգում և պետական կառավարման այլ մարմիններում, այնպես էլ հասարակության լայն, հատկապես՝ գիտակրթական շրջաններում, որպեսզի «դաշնադրության» օրինակով արմատավորվի նոր վարվելակերպը: Այս քայլը նույնպես կատարված է:

Հինգերորդ քայլը (*Empowering Others to Act on the Vision*) ենթադրում է Պաշտպանության գերբարդ համակարգում և դրա ենթահամակարգերում փոփոխությունների կատարման համար խոչընդոտների վերացում, տեսլականի իրականացումը խթանող համակարգերի ու կառույցների վերափոխում, նորամուծական գաղափարներով տոգորված, ռիսկի դիմելու, նոր գործելաոճի ու մտածելակերպի պատրաստ և հմուտ անձանց խրախուսում: Հայաստանի ՊՌՎ-ում այս քայլը ևս կատարված է, մասնավորապես՝ պաշտպանության նախարարությունում ՊՌՎ իրականացման համար պատասխանատու ներգերատեսչական աշխատանքային խմբում ներգրավված են նոր մտածողությամբ օժտված, նոր գործելաոճի ընդունակ անձինք, որոնց տրված է իրավագործություն՝ պայքարելու պաշտպանության ոլորտում կաղապարված ու կարծրատիպային մտածելակերպի բոլոր բացասական դրսևորումների դեմ:

Վեցերորդ քայլը (*Planning for and Creating Short-Term Wins*) ՊՌՎ գործընթացում միջանկյալ, բայց և տեսանելի հաջողությունների պլանավորումն ու ապահովումն է՝ տեսլականն իրականացնելու ունակ մարդկանց հետագա փոփոխությունների համար շարժառիթավորելու, ձեռք բերվածով նրանց ոգևորելու

նպատակով: Այս քայլն էլ է կատարված: Այսպես, տեղայնացվել և ներդրվել է «Առաջադրանքային կառավարման» («Հրամանատրում առաջադրանքների միջոցով») հայեցակարգը (*Mission Command; Auftragstaktik*), որը փոխարինելու է եկել «Հրահանգային կառավարման» (*Directive Leadership; Befehlstaktik*) մոդելին և ստորին օդակներին ավելի մեծ իրավասություններ (ինքնուրույնություն) տրամադրելու միջոցով նպաստել է ստորաբաժանումների ընդհանուր կատարողականության մակարդակի էական բարձրացմանը:

Նախավերջին քայլով (*Consolidating Improvements and Producing Still More Change*) ամրապնդվում են ձեռքբերումները և դրանց հիմքի վրա ձեռնարկվում են հետագա փոփոխությունները: Ըստ այդմ, մասնավորապես, գորային կառույցի վերակազմակերպման շրջանակներում հստակորեն տարանջատվել են հրամանատրման (հրամանատվության)՝ ղեկավարման և կառավարման՝ վերահսկողության (շտաբի) գործառույթները:

Վերջին քայլով (*Institutionalizing New Approaches*) նախատեսվում է Պաշտպանության համակարգում մշակված ու ներդրվող նոր գործելաոճի, նոր մոտեցումների և ընթացակարգերի արմատավորում՝ դրանց և ընթացիկ հաջողությունների միջև փոխկապվածության սերտացմամբ: Դա արվելու է ՊՌՎ եզրափակիչ փուլում և արտացոլվելու է 2016–2020 թթ. Պաշտպանության պլանավորման ղեկավար փաստաթղթերում, մասնավորապես՝ «Պաշտպանության զարգացման պլանում»:

ՊՌՎ սկզբունքների ու մեթոդների ընտրության ժամանակ հաշվի են առնվել միջազգային փորձաքննություն անցած առաջադիմական մոտեցումները, որոնք համապատասխանեցվել են Հայաստանի Հանրապետության Պաշտպանության պահանջներին: Ներկայացնենք այդ սկզբունքներով ու մեթոդներով կատարված վերանայումն ըստ աշխատանքային փուլերի:

ՊՌՎ առաջին փուլում կատարվեց անվտանգության միջավայրի ու սպառնալիքների գնահատում: Ի հայտ բերվեցին ՀՀ ռազմական անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները, գնահատվեցին ՀՀ կենսական շահերի սպառնալիքի վրա դրանց ազդեցության աստիճանը և սպառնալիքի իրականացման հավանականությունը, ազդեցության աստիճանի և իրականացման հավանականության փոփոխման դինամիկան, փոփոխության համար անհրաժեշտ ժամանակը, ինչպես նաև սպառնալիքներին հակազդեցություն գործելու Հայաստանի կարողությունը: Վերլուծության հատուկ՝ «*SWOT Analysis*», մեթոդաբանությամբ գնահատվեցին Պաշտպանության համակարգի ուժեղ և թույլ կողմերը, ինչպես նաև պաշտպանության նպատակների իրագործմանը նպաստող կամ խոչընդոտող արտաքին գործոնները⁵, ըստ կարևորության դասակարգվեցին նաև անվտանգության շահերը⁶:

ՊՌՎ երկրորդ փուլում մշակվեցին Ռ-ազմավարական պլանավորման նկա-

⁵ Տես «SWOT Analysis. Strategy Skills». Team FME, 2013, P. 8:

⁶ Տես *Richard Yarger*. The Strategic Appraisal: The Key to Effective Strategy. «US Army War College Guide to National Security Issues». Carlisle, PA: Strategic Studies Institute, US Army War College, July 2010, Vol. I, P. 58:

տառումները (պայմանական նախադրույթները): Այս փուլի խնդիրներն էին՝ ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված ռազմական սպառնալիքների իրականացման հնարավոր սցենարների մշակումը, բանակաշինության գործում առկա խնդիրների պարզումը, ՀՀ մարդկային ու նյութական ռեսուրսների, դաշնակցային ու գործընկերային պարտավորությունների վերաբերյալ եզրակացությունները և, վերջապես՝ քաղաքական-հայեցակարգային փաստաթղթերում ու նորմատիվ իրավական ակտերում փոփոխությունների կատարման, նոր ռազմավարությունների մշակման անհրաժեշտության հիմնավորումը:

Ռազմավարական պլանավորման նկատառումներում (պայմանական նախադրույթներ) հաշվի առնվեցին յուրային, չեզոք կողմի և հակառակորդի մոտեցումները, դրանք դիտարկվեցին քաղաքական, տնտեսական, սոցիալական, տեխնոլոգիական, իրավական ու շրջակա միջավայրին առնչվող գործոնների ազդեցության տիրույթում (այսպես կոչված «PESTLE» վերլուծություն): Մասնավորապես՝ կատարվեցին հետևյալ հարցադրումները. որո՞նք են Պաշտպանության համակարգի վրա ազդող հանգուցային քաղաքական, տնտեսական, մշակութային գործոնները, Պաշտպանության համակարգի վրա ազդող տեխնոլոգիական ի՞նչ նորարարություններ կարող են կատարվել առաջիկայում, Պաշտպանության վրա ի՞նչ ազդեցություն են գործում կամ կգործեն ներկայիս և առաջիկայում ընդունվելիք նորմատիվ իրավական ակտերը՝ բնության և շրջակա միջավայրի վրա Պաշտպանության համակարգի փոփոխությունների ազդեցության հաշվառմամբ⁷:

ՊՌՎ երրորդ փուլում սահմանվեցին Պաշտպանության կազմակերպման գործում պետական կառավարման մարմինների դերն ու խնդիրները: Առաջին հերթին ուսումնասիրվեց այն հարցը, թե Պաշտպանության կազմակերպման գործում այդ ոլորտը կանոնակարգող կամ դրան առնչվող ՀՀ գործող օրենսդրությամբ ինչ դեր է վերապահվում յուրաքանչյուր գերատեսչությանը: ՌԻշադրություն դարձվեց հատկապես «Պաշտպանության մասին», «Ջորահավաքային նախապատրաստության և գորահավաքի մասին», «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» և «Քաղաքացիական պաշտպանության մասին» ՀՀ օրենքներին: Հստակեցվեցին նաև այն մտահղացումները, որոնց համապատասխան պետք է կատարվեն պետական կառավարման մարմինների գործառնությունները, նրանց գործելակարգը, մշակվեցին համապատասխան առաջադրանքներ:

ՊՌՎ երրորդ փուլում մշակվեցին նաև պետական մակարդակով կազմված ընդհանուր գործառնությունների և առաջադրանքների ցանկն ու դրանց կատարման նկատմամբ առաջնորդող մոտեցումները և ղեկավար սկզբունքները⁸:

1. Ռազմավարական ղեկավարում և կառավարում (Strategic Command and Control). առաջադրանքները հաջողությամբ ավարտին հասցնելու համար են-

⁷ Տես «PESTLE Analysis. Strategy Skills». Team FME, 2013, P. 7:

⁸ Տես, օրինակ, «Joint Operations. Joint Publication 3-0». U.S. Joint Chiefs of Staff. Washington, 11 August 2011, P. III-I, ինչպես նաև Christopher E. Larsen, Norman M. Wade. The Small Unit Tactics SMARTbook. Leader's Reference Guide to Conducting Tactical Operations. The Lightning Press, 2013:

թակա և լրացուցիչ հատկացված (կցված) ռեսուրսների (ուժերի և միջոցների) նկատմամբ լիազորությունների գործադրման և ղեկավարման միասնություն:

2. Ռազմավարական տեղեկույթ և հետախուզություն (*Strategic Information and Intelligence*). պետության կարիքների՝ քաղաքականության և ռազմավարության, պլանների, ծրագրերի, գործողությունների մշակման համար օտար պետությունների, հակառակորդների կամ հավանական հակառակորդների ուժերի կամ տարրերի, ընդդիմամարտության հնարավոր դաշտի (իրական կամ երևակայական) մասին հետախուզական տվյալների հայթայթում:

3. Ռազմավարական գործողությունների ձեռնարկում (*Conduct Strategic Operations*). հակամարտությունների ծավալման բոլոր փուլերում պետության պաշտպանության նպատակով ձեռնարկվող ռազմավարական անվտանգային օպերացիաների բոլոր մակարդակներում՝ ներքինից մինչև միջազգային, կարողությունների արդյունավետ օգտագործմամբ այդ օպերացիաների ղեկավարում:

4. Ռազմավարական շարժունություն (*Strategic Mobility*). ընդդիմամարտության դաշտում ուժերն արագ կենտրոնացնելու, առավելություն ստանալու նպատակով տարաշարժի միջոցով շահեկան դիրքեր գրավելու կարողություն:

5. Ռազմավարական կարողությունների (ուժերի ու միջոցների) պահպանություն (*Strategic Capability Protection*). այն միջոցների որոշում, հաստատում և ղեկավարում, որոնք կարող են ռազմավարական ռեսուրսները, պետական ենթակառուցվածքը, մոբիլիզացիոն հիմքերը, ծանրության կենտրոնը (*Centers of Gravity*) և տեղեկույթը լավագույնս պաշտպանել սպառնալիքների, հարձակումների, բնական կամ մարդածին վտանգների ազդեցությունից:

6. Նյութական (ռեսուրսային) ապահովում (*Sustain*). ազգային անվտանգության համար պատասխանատու գերատեսչություններին, կառույցներին և ծառայություններին պետական մակարդակով ցուցաբերվող աջակցության և նյութական ապահովման ու սպասարկման ղեկավարում:

7. Ռազմավարական կարողությունների ստեղծում (*Strategic Capability Generation*). հակամարտությունների ամբողջ ընթացքում, հատկապես՝ դրանց սրման փուլում, այնպիսի քաղաքականության և կառուցվածքի հաստատում և ռեսուրսների բաշխում, որոնց շնորհիվ անվտանգային պրոբլեմներով զբաղվող գերատեսչությունները (պետական կառավարման մարմինները) բերվեն ազգային անվտանգության նպատակներին համապատասխանող պատրաստության աստիճանի:

8. Ազգային ռազմավարություն և քաղաքականություն (*National Strategy and Policy*). ազգային անվտանգության նպատակների առաջնորդ՝ գերատեսչությունների (պետական կառավարման մարմինների), միջազգային դերակատարների և հասարակական կազմակերպությունների հետ դրանց համաձայնեցման միջոցով:

ՊՌՎ չորրորդ փուլը նպատակաուղղված էր գորային կառույցի կատարելագործմանը: Այս փուլում սահմանվեց պաշտպանության նախարարությանը և զինված ուժերին վերապահված դերերի և խնդիրների իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցվածքը, տարանջատվեցին ՊՆ և ԶՈՒ-ի ԳՇ գործառույթներն ու պարտականությունները, ըստ ուղղությունների նախա-

նշվեցին պահանջվող ուժերն ու միջոցները: Ջորային կառույցի մշակման աշխատանքների գլխավոր արգասիքը Ջինված ուժերում հրամանատրման՝ ղեկավարման գործառույթների հստակ տարանջատումն է կառավարման՝ վերահսկման գործառույթներից: Տարանջատումը նպատակաուղղված է հրամանների արձակման և կատարման ջանքերի միասնականության, կենտրոնացված պլանավորման և ուղղորդման ու պլանների ապակենտրոնացված կատարման ապահովմանը: Մի կողմից՝ հրամանատրման ու հրամանների կատարման ջանքերի միասնականությունն անհրաժեշտ է պաշտպանության համակարգի գործառման արդյունավետության և օգտակար գործողության գործակցի մեծ արժեքների ապահովման համար, իսկ կենտրոնացված պլանավորումն ու ուղղորդումն էական նշանակություն ունեն գորքերի (ուժերի) գործողությունները վերահսկելու և համադասելու համար: Մյուս կողմից՝ պլանների ապակենտրոնացված կատարումն ունի կարևոր նշանակություն՝ տեղերում ըստ օպերատիվ իրավիճակի նախաձեռնողականություն և ինքնուրույնություն ցուցաբերելու համար նպաստավոր պայմանների ստեղծման տեսանկյունից⁹:

ՊՌՎ վերջին՝ հինգերորդ, փուլում նախատեսվում է մշակել և սահմանակարգել 2016–2020 թթ. Ռազմավարական պլանավորման ղեկավար փաստաթղթերի ամբողջական փաթեթը (դրանում հանգուցային դեր ունի «ՀՀ Պաշտպանության 2016–2020 թթ. զարգացման պլանը»): Այս փուլում ավարտին կհասցվեն Պաշտպանության ռազմավարական վերանայման պլանավորման աշխատանքները, ինչը հիմք կծառայի վերանայման արդյունքներից բխող ծրագրերի իրականացմանն անցնելու համար:

Հինգերորդ փուլում ՊՌՎ գործընթացը եզրափակվելու է պաշտպանության նկատմամբ ռազմավարական մոտեցման մշակմամբ: Նախորդ փուլերի արդյունքների հիման վրա «ՀՀ Պաշտպանության 2016–2020 թթ. զարգացման պլանում» և մյուս ղեկավար փաստաթղթերում կարճանագրվեն Պաշտպանության համակարգի ներկա վիճակը և դրա վերափոխման վերջնարդյունքը¹⁰: Իսկ ներկայիս վիճակից դեպի վերջնարդյունք տանող ամբողջ ուղին անցնելու համար պահանջվում է Պաշտպանության մեջ ներգրավված պետական կառավարման բոլոր մարմինների գործողությունների և ջանքերի համատեղ պլանավորում, կազմակերպում, ամբողջարկում և ներդաշնակեցում:

Այսպիսով՝ միջազգային և հայրենական փորձի հաշվառմամբ ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման շրջանակներում կիրառվող սկզբունքները և մեթոդները նպատակ ունեն ապահովելու Պաշտպանական համակարգի շարունակական և դինամիկ զարգացումը, ինչի շնորհիվ հնարավոր կլինի չեզոքացնել առկա և ապագայի սպառնալիքները, պաշտպանել ազգային անվտանգության հիմնարար արժեքները, կատարել ռազմական բնագավառում ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունները:

⁹ Stu «Doctrine for the Armed Forces of the United States. Joint Publication 1». U.S. Joint Chiefs of Staff. Washington, 25 March 2013, P. IV-2:

¹⁰ Stu «Joint Operation Planning. Joint Publication 5-0». U.S. Joint Chiefs of Staff. Washington, 11 August 2011, P. III-15:

ПРИНЦИПЫ И МЕТОДЫ СТРАТЕГИЧЕСКОГО ПЕРЕСМОТРА ОБОРОНЫ РА

Д. Э. ТОНОЯН, Первый заместитель Министра обороны РА

РЕЗЮМЕ

В декабре 2013 г. по распоряжению Президента РА начался процесс второго Стратегического пересмотра обороны (СПО) РА. Конечной целью этого процесса является создание действенной системы обороны, опирающейся на всю мощь государства и ресурсы общества.

Для обеспечения эффективности СПО РА был использован метод, предложенный Джоном Коттером, который был адаптирован к местным условиям и задачам. Метод предполагает последовательное осуществление ряда шагов, а именно: обоснование необходимости осуществления изменений в системе обороны и обеспечение осознания этой необходимости исполнителями; создание «коалиции» единомышленников, направляющих и осуществляющих эти изменения; формирование общего видения для консолидации усилий по внедрению этих изменений; распространение данного видения и стратегии его осуществления среди исполнителей и в обществе; устранение препятствий для осуществления изменений: ломка стереотипов в мышлении, воспитание кадров с творческим подходом к выполнению своих обязанностей, реформирование структуры и структурных звеньев в целях обеспечения беспрепятственного осуществления изменений; обеспечение текущих, но ощутимых, достижений в процессе СПО для стимулирования деятельности кадров, способных осуществлять эти изменения; закрепление успехов и дальнейшее осуществление изменений на их базе; укоренение в системе обороны нового образа мышления, новых подходов и образа действий.

На первом этапе СПО методом SWOT-анализа были оценены существующие безопасная среда РА и угрозы, а также был сделан прогноз динамики их изменений. На втором этапе были разработаны условные допущения для стратегического планирования. На третьем были определены роли и задачи органов государственного управления в деле организации обороны.

На четвертом этапе СПО была усовершенствована войсковая структура, в частности, было осуществлено разделение систем руководства и управления, т. е. функций и обязанностей МО и Генштаба ВС. На последнем, пятом, этапе будет разработан «План развития Обороны РА на 2016 – 2020 гг.», после чего начнется осуществление программ, базирующихся на результатах СПО.

PRINCIPLES AND METHODS
OF THE RA'S STRATEGIC DEFENSE REVIEW

D. E. TONoyAN, First Deputy Minister of Defense of the Republic of Armenia

SUMMARY

In December 2013, the process of the 2nd Strategic Defense Review (SDR) of the RA was launched by order of the RA's President. The ultimate goal of this process is the development of an effective defense system based on the whole power of the state and public resources.

To ensure the efficiency of the RA's SDR, a method suggested by John Kotter, conforming to the local terms and objectives, was applied. The method presupposes a follow-up implementation of a number of steps, namely: Establishing a Sense of Urgency; Forming a Powerful Guiding Coalition; Creating a Vision; Communicating the Vision: Empowering Others to Act on the Vision; Planning for and Creating Short-Term Wins; Consolidating Improvements and Producing Still More Change; and, Institutionalizing New Approaches.

At the SDR's 1st stage, by using the SWOT-analysis technique, the existing security environment of the RA and the threats were assessed, as well as the forecast of their dynamics was made. At the 2nd stage, conditional assumptions for strategic planning were elaborated. At the 3rd, the roles and responsibilities of the public administration bodies in organizing the defense were defined.

At the SDR's 4th stage, the army structure was enhanced; in particular, the division of the leadership and management was carried out, i.e. the functions and obligations of the MOD and the General Staff of the Armed Forces were distinguished. At the last 5th stage, the RA's Defense Development Plan for 2016–2020 is to be developed. Afterwards, the programs based on the SDR's results are to be implemented.

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Յու. Գ. ԽԱՉԱՏՈՒՐՈՎ, գեներալ-գեղասպետ, ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ պետ



Պատմական փորձը բազմիցս հաստատել է, որ աշխարհն ստիպված է հաշվի նստել ռազմական ուժի հետ, քանի դեռ չեն վերացել այն պետությունները, որոնք գերադասում են միջպետական հարաբերություններում վիճելի հարցերը լուծել ռազմական ուժի կիրառմամբ: Այս պայմաններում յուրաքանչյուր պետության զինված ուժեր պետք է պատրաստ լինեն ռազմաքաղաքական իրադրության զարգացման «վատագույն» սցենարի, երբ նրանցից կպահանջվի գործադրել իրենց ամբողջ ներուժը ագրեսիայի կասեցման, հետմղման, հակառակորդին անընդունելի վնաս պատճառելու համար, այսինքն՝ պետությունը պետք է պատրաստ լինի կիրառելու իր զինված ուժերը: Պետության ՁՈՒ-ի կիրառման սկզբունքները ներկայացված են ռազմավարական պլանավորման փաստաթղթերում՝ որպես այդ պլանավորման կարևոր բաղադրիչ:

«Ռազմավարական պլանավորում» հասկացությունը կազմված է երկու բաղադրիչներից՝ «ռազմավարություն» և «պլանավորում»: Տվյալ դեպքում «ռազմավարություն» հասկացությունը փոխառված է ռազմական ոլորտից: Ռազմական (պատերազմական) ռազմավարությունը ռազմական արվեստի բաղադրիչն է, դրա բարձրագույն ոլորտը, որն ընդգրկում է երկրի ռազմական անվտանգության ապահովման, այդ թվում՝ ժամանակակից պատերազմների բնույթի և ռազմական միջոցներով դրանց կանխման, պաշտպանությանը պետության պատրաստման¹, ընդհանուր առմամբ պատերազմի և ռազմավարական մասշտաբի ռազմական օպերացիաների պլանավորման ու վարման տեսությունն ու պրակտիկան²:

Ինչ վերաբերում է «պլանավորում» հասկացությանը, ապա տարբեր հեղինակներ առաջարկում են տարբեր սահմանումներ: Սակայն եթե առանձնացնենք այն, ինչը դրանցում ընդհանուր է, կարող ենք ասել, որ պլանավորումը մարդկանց հասարակական գործունեության առանձնահատուկ ձև է, կառավարման գերակա գործառույթներից մեկը, պլանների մշակում, այն է՝ համակարգը կոնկրետ վիճակի բերելուն նպատակաուղղված աշխատանքների բովանդակության, հաջորդականության, կատարման եղանակների ու ժամկետների, պատասխանատու և օգնական կատարողների ապահովման միջոցառումների մշակում³: Այլ կերպ ասած՝ պլանավորումը անորոշության հաղթահարման գործիք է:

¹ Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Յու. Գ. Խաչատրյան*, Պաշտպանությանը պետության և նրա Ձինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «ՀԲ», 2012, հմ. 1–2:

² Տես «Военный энциклопедический словарь» («ВЭС»). М., 2002, с. 1450:

³ Տես նույն տեղում, էջ 1155:

Ռազմավարական պլանավորումը ռազմաքաղաքական ու ռազմավարական իրավիճակի վերլուծության և զինված պայքարի վարման նպատակների, ուժերի, միջոցների ու եղանակների որոշման, այդ պայքարի կազմակերպման ու ապահովման գործընթաց է, որի էությունն են օպերատիվ-ռազմավարական հաշվարկումները, կանխատեսումները և համապատասխան ռազմավարական պլանավորման փաստաթղթերի մշակումը⁴: Այլ կերպ ասած՝ ռազմավարական պլանավորումը պաշտպանությանը պետության և ՁՈՒ-ի պատրաստման, ինչպես նաև տարբեր ձևերի ռազմավարական գործողությունների նախապատրաստման կարևոր բաղկացուցիչ մասն է, ՁՈՒ-ի և մյուս գորքերի պատրաստման, կիրառման ու պատերազմում համակողմանի ապահովման կարգի ու եղանակների որոշումը⁵:

Ռազմավարական պլանավորման ամբողջականությունը ապահովվում է այնպիսի գործընթացների սերտ փոխկապվածությամբ, ինչպիսիք են գերակա (գլխավոր) ռազմավարության որոշումը, այդ ռազմավարության իրացման համար անհրաժեշտ ծրագրերի ու պլանների մշակումը, ընթացիկ որոշումների ընդունման և իրագործման միջոցով մշակված պլանի իրականացումը: Այս ամենը պահանջում է համալիր փոխհամաձայնեցված գործունեություն, ինչի շնորհիվ ձևավորվում է ռազմավարական պլանավորման համակարգը: Պենտագոնի սահմանմամբ՝ տվյալ համակարգը (*Joint strategic planning system*) այն առաջնահերթ միջոցներից է, որով Շտաբների պետերի միացյալ կոմիտեի նախագահը, Կոմիտեի մյուս անդամների ու մարտական հրամանատարների հետ խորհրդարկումների արդյունքներով, կատարում է իր կարգավիճակային պարտականությունները՝ ՁՈՒ-ի ռազմավարական կառավարման գործում ԱՄՆ-ի Նախագահին և Պաշտպանության քարտուղարին օգնելու համար⁶:

Ռազմավարական պլանավորումն իրականացնում է Գերագույն (Գլխավոր) շտաբը՝ ՁՈՒ-ի տեսակների և զորատեսակների գլխավոր շտաբների, պաշտպանության նախարարության կենտրոնական վարչությունների, ՁՈՒ-ի թիկունքի շտաբի, ինչպես նաև գործադիր իշխանության այն մարմինների գործակցությամբ, որոնց կազմում կամ որոնց կից կան զինվորական կազմավորումներ:

Ռազմավարական պլանավորումը սովորաբար կատարվում է երկու մակարդակով: Առաջին՝ պատերազմական (ընդհանուր առմամբ պատերազմի համար) մակարդակում այն ներառում է զինված ուժերի ռազմավարական կիրառման, դրանց ռազմավարական ծավալման, զորահավաքային, ռազմավարական միջուկային ուժերի (աստման ուժերի) կիրառման, հակառակորդի օդատիեզերական հարձակման հետմղման ռազմավարական օպերացիայի, ՁՈՒ-ի տեսակների կիրառման, տարբեր տեսակների ռազմավարական (օպերատիվ), հատուկ տեխնի-

⁴ Տես «Война и мир в терминах и определениях». Военно-политический словарь. Под общей ред. Дмитрия Погозина (<http://www.voina-i-mir.ru>):

⁵ Տես «ВЭС», с. 1450:

⁶ Տես «Department of Defense. Dictionary of Military and Associated Terms», 8 November 2010 (As Amended Through 15 March 2013), P. 161:

կական ու թիկունքային ապահովման, կառավարման կազմակերպման պլանների մշակում:

Երկրորդ՝ Ռ-Գ-Թ, մակարդակում ռազմավարական պլանավորումը ներառում է ցամաքային և օվկիանոսային Ռ-Գ-Թ-ներում ռազմավարական օպերացիաների, Ռ-Գ-Թ-ում օդային, հակաօդային, դեսանտային, հակադեսանտային օպերացիաների, շարժունակ ու խաղաղարար ուժերի օպերացիաների, ՁՈՒ-ի տեսակների օպերացիաների պլանների ու ցուցումագրերի (դիրեկտիվների) կազմում: Ռ-ազմավարական պլանավորման համակարգը նաև ներառում է խաղաղ դրություներից պատերազմական վիճակի պետության փոխադրման, պատերազմի տնտեսական, գաղափարախոսական ու դիվանագիտական ապահովման պլանների մշակումը⁷:

Ռ-ազմավարական պլանավորման կարևոր բաղադրիչը *զինված ուժերի կիրառման պլանավորումն* է, որը ներառում է պաշտպանության ոլորտում առաջադրված խնդիրների բովանդակության (խաղաղ ժամանակ, սպառնալից շրջանում և պատերազմական ժամանակ), զինված ուժերի և զորային կազմավորումների կողմից դրանց կատարման հաջողականության, կարգի, ձևերի և եղանակների որոշում (ճշգրտում), փոխգործության համակողմանի ապահովման ու կառավարման կազմակերպում:

Զինված ուժերի կիրառման պլանավորումը կատարվում է վաղօրոք (պատեհաժամորեն) և անմիջականորեն (սպառնալից ժամանակաշրջանում և պատերազմական ժամանակաշրջանում)՝ ճշգրտվելով ագրեսիայի հետմղմանը զինված ուժերի և պետության անմիջական պատրաստման ընթացքում՝ ռազմական անվտանգության ապահովման միասնական համակարգում:

Ընդամին պլանավորման որակի բարելավման ու գորքերի (ուժերի) ռեալ վիճակի և օպերատիվ (մարտական) հնարավորությունների լիարժեք հաշվառման համար կառավարման մարմինները կարող են որոշումների մշակման փուլում մասնակցել վերադաս շտաբի աշխատանքներին՝ ենթակա գորքերի (ուժերի) կիրառման հետ կապված առաջարկությունների ներկայացման միջոցով:

Ռ-ազմավարական պլանավորման համակարգում կարևոր տեղ ունի *ՁՈՒ-ի զարգացման պլանի* մշակումը: Դրանում կանխատեսվող երկարաժամկետ կտրվածքով արտացոլվում են զարգացման նպատակները, խնդիրները, սկզբունքները, ուղղությունները, գերակայությունները և փուլերը: Այսօր փոխվել է պատերազմների բնույթը, ինչը թելադրում է ռազմական (պատերազմական) ռազմավարության մեջ ճշտումներ մտցնելու անհրաժեշտություն, այսինքն՝ պահանջում է ռազմական գործողությունների վարման նոր մեթոդների, զինված ուժերի համալրման և անձնակազմի ուսուցման այլ սկզբունքների ներդրում, նոր տեսակների սպառազինությամբ ու մարտական տեխնիկայով զինում:

Հայաստանի Հանրապետության ռազմաքաղաքական ու ռազմական ղեկավարությունը ևս կարևորում է մեր պետության Զինված ուժերի զարգացման հիմնախնդիրը: Դրա արդիականությունը պայմանավորված է, առաջին հերթին,

⁷ Տես «Война и мир в терминах и определениях»:

աշխարհում տեղի ունեցող քաղաքական, ռազմաքաղաքական, ռազմատնտեսական և ռազմական գործընթացներով, ժամանակակից պատերազմների բնույթի փոփոխմամբ, դրանց վարման նոր եղանակների ի հայտ գալով, ինչը մեր երկրի Ձինված ուժերին առաջադրում է նոր որակական և քանակական պահանջներ: Մյուս կողմից՝ վերջին տարիներին տարածաշրջանում հավասարակշռությունն իր օգտին խախտելու նպատակով Ադրբեջանը ձեռնամուխ է եղել ռազմական ներուժի հետևողական մեծացման, ինչը նշանակում է, որ մեր Ձինված ուժերի մարտունակությունն ու մարտական պատրաստությունը, տեխնիկական և տեխնոլոգիական զինվածությունն ու հնարավորությունները (այդ թվում և ոչ համաչափ) պետք է լինեն համապատասխան մակարդակի վրա:

Ձինված ուժերի զարգացման պլանը միտված է Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի երկարաժամկետ և կայուն զարգացման ապահովմանը. այն իրացվում է հուսալի ռազմական հնարավորությունների ստեղծման, օպտիմալացման, վերակառուցվողման, արդիականացման և ռազմական ինտեգրման միջոցով: Այդ նպատակով Ձինված ուժերի պատրաստության մակարդակը, կառուցվածքը, սպառազինությունն ու ռազմական տեխնիկական համապատասխանեցրել ենք առկա խնդիրներին՝ շեշտը դնելով ոչ թե քանակական, այլ որակական ցուցանիշների ապահովման վրա: Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի զարգացման գործընթացում մենք առաջնորդվում ենք, առաջին հերթին, մեր ազգային շահերով՝ բոլոր հնարավորություններն օգտագործելով ՀՀ ՁՈՒ-ի մարտունակությունն ամրապնդելու համար: ՌԻստի մեր հիմնական խնդիրը ոչ թե ուրիշից այս կամ այն չափանիշի անկշռադատ ընդօրինակումն է, այլ մեր ազգայինի ստեղծումն ու ներդրումը, ընդամին դրանք պետք է լիարժեք կերպով համապատասխանեն ազգային ինքնությանը և, միևնույն ժամանակ, լայն հնարավորություններ ընձեռեն միջազգային համագործակցության համար:

ՁՈՒ-ի զարգացման պլանում մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հետևյալ ուղղություններին:

1. Ձինված ուժերի կազմակերպվածք. առանձին մարտական ու ոչ մարտական (ապահովող) զորամասերի, ստորաբաժանումների, ինչպես նաև զորատեսակների կազմակերպվածքի կատարելագործում:

2. Կառավարման համակարգ:

3. Չորքերի պատրաստման համակարգ:

4. Կադրային քաղաքականություն և ռազմական կրթության համակարգ:

5. Ձինված ուժերի սոցիալական քաղաքականություն, և այլն:

Սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի մշակում: ՀՀ-ում ծրագիրը մշակվել էր առկա և պահանջվող ռազմական հնարավորությունների միջև անհամապատասխանության վերացման, ինչպես նաև Ձինված ուժերի մարտական պատրաստության պահպանման նպատակով: Սպառազինության ու ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրի մշակման ու կիրարկման և այդ ծրագրի քայլ առ քայլ կատարման շնորհիվ մեր Ձինված ուժերը համարվում են ժամանակակից սպառազինությամբ, տեխնիկայով և բավական մեծ քանակով անհրաժեշտ զինամթերքով:

ՀՀ-ում ռազմավարական պլանավորման զարգացման վերլուծությունից երևում է, որ քիչ բան չի արվել: Հիմնական ջանքերը կենտրոնացված են եղել առաջնահերթ կառուցվածքային փոխակերպումների պլանավորման, կազմակերպման և կատարման, ինչպես նաև ռազմական անվտանգության համակարգի բոլոր բաղադրատարրերի որակական պարամետրների բարելավման և արդյունավետության մեծացման նպատակով իրագործվող այլ միջոցառումների վրա:

Կառուցվածքային փոխակերպումներից հետո ուղեգիծ է վերցվել պետության ռազմական անվտանգության համակարգի և դրա բաղադրատարրերի տեխնիկական հագեցվածության, ռեսուրսաապահովման, արհեստավարժության, շարժունության և այլ քանակական ու որակական պարամետրների հետևողական բարելավումը: Դա է պահանջում մեր տարածաշրջանում տիրող փոփոխական ռազմաքաղաքական իրադրությունը, դա է պահանջում 21-րդ դարի իրողությունը:

Այսպիսով՝ ցանկացած պետության գլխավոր խնդիրներից մեկի՝ իր ռազմական-պաշտպանական անվտանգության ապահովման համակողմանի ու հաշվեկշռված լուծման կարևոր պայմաններից է օպտիմալ ռազմավարական պլանավորումը: Դրա հիմնական բաղադրիչները՝ ՁՈՒ-ի կիրառման, զարգացման, տեխնիկական հագեցվածության պլանավորումը և այդ պլանների արդյունավետ իրագործումը, հնարավորություն են տալիս ստեղծելու մի պաշտպանական համակարգ, որն ի գործ է սաստելու հավանական հակառակորդի ռազմատենչ նկրտումները, իսկ ագրեսիայի սանձազերծման դեպքում՝ կասեցնելու և հետ մղելու այն՝ հակառակորդին հասցնելով անընդունելի վնասներ:

ՀՀ-ում ռազմավարական պլանավորումն իրականացվում է պետության ռազմական անվտանգության համակարգի հաշվեկշռված զարգացման նպատակով՝ փոխհամաձայնեցված միջոցառումների իրագործման միջոցով:

ՁՈՒ-ի կիրառման պլանավորման հարցերը շոշափում են պաշտպանությանը պետության պատրաստման բոլոր առումները, այնպես, որ հավանական հակառակորդի կողմից պատերազմի սանձազերծման դեպքում հնարավոր լինի առավելագույնս օգտագործել պետության ամբողջ ներուժը: Ընդամեն պետական և ռազմական բարձրագույն ղեկավարությունն իր ուշադրության կիզակետում է պահում Ձինված ուժերի կիրառման պլանավորումը, որը երկրի պաշտպանունակության ապահովման առավել կարևոր խնդիրներից է:

Ռազմավարական պլանավորման գործում հատուկ դեր ունի ՀՀ ՁՈՒ-ի Գլխավոր շտաբը, քանի որ ռազմական ագրեսիայի դեպքում պետական կառավարման ամբողջ համակարգը և դրա քաղաքական ռազմավարությունը վերակազմակերպվում են ռազմական բաղադրիչի հաշվառմամբ:

К ВОПРОСУ РАЗВИТИЯ СИСТЕМЫ СТРАТЕГИЧЕСКОГО ПЛАНИРОВАНИЯ

Ю. Г. ХАЧАТУРОВ, генерал-полковник, Начальник Генерального штаба ВС РА

РЕЗЮМЕ

Стратегическое планирование – это процесс анализа военно-политической и стратегической обстановки и определения целей, сил, средств и способов ведения вооруженной борьбы, ее организации и обеспечения. Его сущность заключается в проведении оперативно-стратегических расчетов, установлении прогнозов и в разработке соответствующих документов. Построение и совершенствование системы стратегического планирования осуществляются в соответствии с военно-политическими целями государства, оценкой военных угроз и опытом предыдущих войн.

Основным органом, ведущим конкретную разработку и согласование важнейших документов стратегического планирования, является Генеральный штаб. Стратегическое планирование осуществляется Генеральным штабом совместно с центральными управлениями Министерства обороны, а также органами исполнительной власти, в составе которых или при которых имеются другие войска и воинские формирования.

Важными составляющими стратегического планирования являются планирование применения ВС, развития ВС и развития вооружения и военной техники. Вопросы планирования применения ВС касаются всех аспектов подготовки государства к обороне с тем, чтобы в случае развязывания противником войны было обеспечено задействование всей оборонной мощи. Планирование применения вооруженных сил включает процесс определения содержания, последовательности, порядка, форм и способов выполнения вооруженными силами и воинскими формированиями поставленных в области обороны задач (в мирное время, угрожаемый период и военное время), организации взаимодействия, всестороннего обеспечения и управления.

В плане развития ВС особое внимание уделяется развитию следующих направлений: организационной структуры ВС, систем управления и подготовки войск, кадровой политике и военному образованию, социальной политике в ВС и т. д.

Благодаря разработке и введению в действие программы развития вооружения и военной техники вооруженные силы обеспечиваются современным вооружением, военной техникой и боеприпасами.

В РА – в рамках стратегического планирования после структурных преобразований – взят курс на последовательный рост технической оснащенности, ресурсообеспеченности, профессионализма, мобильности, других качественных параметров системы военной безопасности государства и ее компонентов. Этого требует сформировавшаяся вокруг РА военно-политическая обстановка, этого требует новая действительность XXI века.

TO THE ISSUE OF DEVELOPING THE STRATEGIC
PLANNING SYSTEM

*Yu. G. KHACHATOUROV, Colonel General, Chief of the General Staff
of the Armed Forces of the Republic of Armenia*

SUMMARY

Strategic planning is the process of analyzing military-political and strategic environment and defining objectives, powers, means and methods for conducting, organizing, and supporting the armed struggle. Its essence is in operational strategic calculations, forecasts and development of relevant documents. The development of the strategic planning system is carried out in compliance with the state's military-political goals, assessment of military threats, and experience of previous wars.

The main body that develops and coordinates the key strategic planning documents is the General Staff. Strategic planning is carried out by the General Staff together with the central departments of the Ministry of Defense, as well as executive bodies, in the composition of which, or at which there are other troops and military formations.

Important elements of strategic planning are the planning of the use of the Armed Forces, development of the Armed Forces, and of armament and military equipment. The issues of planning the use of the Armed Forces concern all the aspects of the state's preparation for defense so that in case of war the involvement of the entire defense power is ensured. Planning the use of the Armed Forces includes the process of determining the content, sequence, order, forms, and methods of the assigned defense tasks by the Armed Forces and military formations (in peacetime, period of threat, and wartime), organization of interaction, comprehensive support and management.

In terms of the Armed Forces development special attention is paid to the development of the following areas: organizational structure of the Armed Forces, control and troops training system, personnel policy and defense education, social policy in the Armed Forces, etc.

The Armed Forces are provided with the up-to-date weapons, military equipment and ammunition due to the elaboration and enactment of the program of the development of armament and military equipment.

Within the framework of strategic planning after the structural reforms, the Republic of Armenia made for the consistent growth of technical equipment, resource supply, professionalism, mobility and other qualitative parameters of the state's military security system and its components. This is conditioned by the military-political situation around the Republic of Armenia and the new reality of the XXI century.

ՀՀ ՕՐԵՆՍԳՐՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ԼՐԱՅՈՒՄՆԵՐԸ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՐԿՐՈՐԴ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Ա. Ա. ՆԱԶԱՐՅԱՆ, ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

ՀՀ տնտեսական, քաղաքական և սոցիալ-մշակութային ոլորտներում, ինչպես նաև իրավական համակարգում ընթացող բարեփոխումների շրջանակում մշակվում և իրականացվում են նաև այնպիսի համալիր միջոցառումներ, որոնք մեծապես ուղղված են Զինված ուժերի մարտունակության մեծացմանը և առկա մարտահրավերներին դիմակայելու նրանց կարողության ապահովմանը: Նշված բարեփոխումների արդյունավետությունը կախված է մի շարք խնդիրների հաջող լուծումից, որոնցից առաջին հերթին կարելի է նշել ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացի 2014–2015 թվականների շրջափուլի իրագործումը, իրավաքաղաքական հենքի կատարելագործումը, ինչի արդիականության և կարևորության վառ ապացույցն են ՀՀ Կառավարության գերակա խնդիրներին վերաբերող՝ ՀՀ Կառավարության 2014 թվականի հուլիսի 31-ի հմ. 777-Ն¹ և 2015 թվականի հունվարի 15-ի հմ. 111-Ն² որոշումները:



Անցած տարիներին իրականացված ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացն իր արդյունքներով, խնդիրներով և նպատակներով ներկայացված է ՀՀ պաշտպանական բարեփոխումների 2010–2015 թթ. ծրագրում: Պաշտպանական բարեփոխումների համապատասխան ծրագրի համաձայն՝ վերանայման են ենթարկվել երկրի պաշտպանության ոլորտի կատարելագործմանն ուղղված այնպիսի կարևոր ուղղություններ, ինչպիսիք են՝ ՁՈՒ-ի կառավարման համակարգը, պլանավորումը, մասնագիտական ռազմական կրթությունը և սերժանտական համակարգը, զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանությունը և այլն:

Ընդհանուր առմամբ պաշտպանական բարեփոխումների շրջանակում ՀՀ օրենսդրության փոփոխությունների ու լրացումների առաջնային նպատակներն

¹ Տես ՀՀ Կառավարության 2014 թ. հուլիսի 31-ի «Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը ու գերակա խնդիրները հաստատելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2014 թվականի հունվարի 9-ի հմ. 10-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» հմ. 777-Ն որոշումը (<http://www.arlis.am/documentview.aspx?docid=92193>):

² Տես ՀՀ Կառավարության 2015 թ. հունվարի 15-ի «ՀՀ Կառավարության 2015 թվականի գործունեության միջոցառումների ծրագիրը և գերակա խնդիրները հաստատելու մասին» հմ. 111-Ն որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2015, հմ. 16 (1105).1):

են Հայաստանի ռազմական անվտանգության երաշխավորումը և ՀՀ Ձինված ուժերի՝ որպես մրցունակ, մշտապես կատարելագործվող, զարգացման ուղին բռնած կառույցի ամրագրումը:

Վերջին տարիներին ՀՀ օրենսդրության փոփոխությունների և լրացումների միջոցով պետության պաշտպանության կազմակերպման և իրականացման օրենսդրական ապահովման գծով կարևոր նախաձեռնություններից էր «Ձորամասերի և զինվորական հաստատությունների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի նախագծի փաթեթի մշակումը: Այդ օրենքի փաթեթի ընդունմամբ* կկարգավորվեն ՀՀ պաշտպանության նախարարության գործառնների և ռազմաբժշկական, ռազմատնտեսական, ինչպես նաև նախարարության համակարգում գործող մշակութային և լրատվական հաստատությունների գործունեության օրենսդրական խնդիրները: Նշենք նաև, որ մինչ այդ ՀՀ-ում տվյալ իրավահարաբերությունների իրավական կարգավորում չի կատարվել, ուստի և այս ոլորտում եղել է օրենսդրական բաց:

Նշված իրավական ակտի նախագծի ներկայացումն սկսենք այն կարևոր դրույթի շեշտմամբ, որ գործառններն ստեղծվելու են ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով, իսկ ռազմաբժշկական, ռազմատնտեսական, ինչպես նաև պաշտպանության նախարարության համակարգում գործող մշակութային և լրատվական հաստատությունները՝ ՀՀ Կառավարության որոշմամբ:

ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով հաստատվելու են գործառնի կանոնադրությունը, գործունեության նպատակները, խնդիրները և գործառնությանը, կառուցվածքը, թվաքանակը, հանձնվող (ամրացվող) գույքի, այդ թվում՝ զենքի և ռազմամթերքի, կազմը, դրա օգտագործման կարգը, գործունեության հետ կապված այլ հարաբերություններ: Սինչդեռ ՀՀ Կառավարության որոշմամբ ստեղծվող ռազմաբժշկական, ռազմատնտեսական, ինչպես նաև պաշտպանության նախարարության համակարգում գործող մշակութային և լրատվական հաստատությունների անվանումը, գտնվելու վայրը, գործունեության նպատակները, խնդիրները և գործառնությանը սահմանվելու են ՀՀ Կառավարության որոշմամբ, իսկ նշված հաստատությունների կանոնադրության, կառուցվածքի, թվաքանակի, հանձնվող (ամրացվող) գույքի, այդ թվում՝ զենքի և ռազմամթերքի, կազմի, դրա օգտագործման կարգի հաստատման իրավունքը կարող է վերապահվել Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարին:

Ձորամասերը և համապատասխան հաստատություններն ունենալու են ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և գործառնի պայմանական համարով կլոր կնիք, կարող են ունենալ գործառնի պայմանական համարով ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:

Ձորամասերի և համապատասխան հաստատությունների գույքը բաղկացած է լինելու Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից գործառնաին հանձնված (ամրացված) գույքից, որը հաշվառվում է գորա-

* Օրենքն ընդունվել է ԱԺ 2015 թ. հունիսի 22-ի արտահերթ նստաշրջանում՝ խմբագրություն սույն հոդվածի ներկայացումից հետո: – *ԽՆՔ*:

մասի հաշվեկշռում: Չորամասերը և համապատասխան հաստատություններն իրավունք են ունենալու իրենց հանձնված (ամրացված) գույքն ինքնուրույն կերպով օգտագործելու և տնօրինելու, միևնույն ժամանակ իրավունք չեն ունենալու իրենց հանձնված (ամրացված) գույքը կամ դրա նկատմամբ իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու վարձակալության կամ անհատույց օգտագործման կամ հավատարմագրային կառավարման:

Չորամասերը և համապատասխան հաստատությունները Հայաստանի Հանրապետության անուհից կարող են ՀՀ Պաշտպանության նախարարի կողմից վերապահված իրավասությունների սահմաններում ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող, զինվորական ծառայության կամ աշխատանքային իրավահարաբերություններում հանդես գալ որպես կնքվող համապատասխան պայմանագրի կողմ:

Չորամասերի և համապատասխան հաստատությունների պահպանման ծախսերը ֆինանսավորվելու են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցներից, ինչպես նաև օրենքով չարգելված այլ ֆինանսական աղբյուրներից: Ֆինանսական գործառնություններն իրականացվելու են «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով³, ֆինանսական կառավարման և հսկողության գործընթացը կարգավորող այլ օրենքներով ու իրավական ակտերով սահմանված կարգով:

Ասվածն ամփոփելով՝ կարելի է արձանագրել, որ ստեղծվում է նախադեպը չունեցող նոր ձևի պետական հիմնարկ:

Իրավական բարեփոխման կարևոր քայլ կարելի է համարել նաև ««ՀՀ Ձինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը, որի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է զինված ուժերում արհեստավարժ սերժանտական կազմի ընդլայնման և որպես առանձին հրամանատարական օղակի ձևավորման հանգամանքով: Օրենքի նախագծով սահմանվում են գնդի (բրիգադի) և գումարտակի (դիվիզիոնի) սերժանտների, ենթակա սերժանտական կազմի պարտականությունները՝ որպես զինծառայողների ուսուցման, կարգապահության, բարոյահոգեբանական վիճակի, մարտական և մասնագիտական պատրաստման համար պատասխանատու անձանց: Վաշտի ավագի, դասակի հրամանատարի տեղակալի, ջոկի հրամանատարի պաշտոնները փոխարինվում են վաշտի, դասակի և ջոկի սերժանտների պաշտոններով:

Օրենքի նախագծի ընդունումը կխթանի ՀՀ Ձինված ուժերում արհեստավարժ սերժանտական համակարգի կայացման, կրտսեր հրամանատարների դերի մեծացման, պարտականությունների հստակեցման, ենթակա անձնակազմի ճշգրիտ կառավարման գործընթացները:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների իրավական ապահովման շրջանակներում մշակվել է նաև «Ձինապարտության և զինվորական ծառայության մա-

³ Տես «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997 թ. հունիսի 24-ի հմ. ՀՕ-137 օրենքը (<http://www.arlis.am/documentview.aspx?docid=75497>):

սին» ՀՀ օրենքի նախագիծ⁴, որը, ի տարբերություն «Զինապարտության մասին»⁵ և «Զինվորական ծառայություն անցնելու մասին»⁶ ՀՀ օրենքներից, պարունակում է կարգավորման նոր մեխանիզմներ, ինչպես, օրինակ՝ «Զորահավաքային գորակոչը», որը որպես պատերազմի ժամանակ ՀՀ պաշտպանությանը ՀՀ քաղաքացիների մասնակցության սահմանադրական պարտականության բաղադրիչ ներառվել է «զինապարտություն» հասկացության մեջ: Այս օրենսդրական փոփոխության նախագծով սահմանվում են նաև այնպիսի հասկացություններ, ինչպիսիք են «նախագորակոչային տարիքը» և «գորակոչային տարիքը»: Փոփոխությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ «Նախագորակոչային տարիք» տերմինն օգտագործվում է զինվորական հաշվառման (կցագրման) համար նախատեսվող տարիք իմաստով, սակայն կան բազմաթիվ դեպքեր, երբ տարբեր պատճառներով զինապարտները զինվորական հաշվառման են վերցվում 18 տարին լրանալուց հետո:

Առաջին անգամ սահմանվել են պարտադիր զինվորական ծառայություն անցնելու հետ կապված հարաբերությունները, նախատեսվել է, որ պարտադիր զինծառայության ենթակա շարքային կազմի գորակոչն իրականացվում է կենտրոնացված ձևով՝ ՀՀ Պաշտպանության նախարարի հրամանով սահմանված կարգով, իսկ պարտադիր զինծառայության սպայական կազմի գորակոչը՝ վիճակահանությամբ: Մշակվել է շարքային և սպայական կազմերի զինծառայողներին պաշտոնի նշանակելու, զինվորական կոչում շնորհելու կարգը, հստակեցվել են նշված կազմերի զինծառայողներին արձակուրդ տրամադրելու կարգը, բուժման մեջ գտնվելու ժամկետները, առողջական վիճակի պատճառով զինծառայությունից վաղաժամկետ արձակման կարգը: Նշված հիմքով պահեստագործում հաշվառված անձանց համար վերափորձաքննության պարբերականությունը սահմանվել է երեք տարի՝ նախկին հինգ տարվա փոխարեն:

Գրեթե նորովի է սահմանվել պահեստագործում հաշվառման կարգը: Պահեստագործում հաշվառվողների խմբերը բաժանվել են երկու տարիքային ենթախմբի, հստակեցվել է յուրաքանչյուր խմբում հաշվառվող անձանց կարգավիճակը, որպես նոր տեսակի պահեստագորային պատրաստում սահմանվել է պատերազմական ժամանակի հաստիքների կցագրված քաղաքացիներին իրենց հաստիքներով նախատեսված պարտականությունների կատարման գործում պայմանագրային հիմունքներով ներգրավելու հնարավորությունը, հստակեցվել են վարժական հավաքներում, զինվորական (հրամանատարաշտաբային կամ շտաբային) վարժանքներում կամ գորավարժություններում (գորախաղերում) ներգրավման ժամկետներն ու կարգը: Օրենքի նախագծով կարգավորվում և հստակեցվում են նաև զինվորական ծառայության այլ հարաբերություններ:

⁴ Տես «Զինապարտության և զինվորական ծառայության մասին» ՀՀ օրենքի նախագիծը (http://www.mil.am/files/Orenqi%20nax.ZIN_CAR-1.pdf):

⁵ Տես «Զինապարտության մասին» ՀՀ 1998 թ. սեպտեմբերի 16-ի հմ. ՀՕ-250 օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=55534>):

⁶ Տես «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ 2002 թ. հուլիսի 3-ի հմ. ՀՕ-380-Ն օրենքը (<http://www.arlis.am/DocumentView.aspx?docid=72075>):

Ռազմավարական վերանայման շրջանակներում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմական սպառնալիքների գնահատման, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմավարական պլանավորման, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ոլորտում շահառու մարմինների դերի ու առաջադրանքների կարգավորումից բացի, նախատեսվում են նաև «գորային կառույց» հասկացության սահմանման, ռազմավարական պլանավորման փաստաթղթերի մշակման գործընթացներ, և որպես դրանց արդյունք՝ կարող է փոփոխվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Ջիվլած ուժերի Գլխավոր շտաբի կանոնադրությունը, ինչպես նաև կարող են լրացումներ կատարվել «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքում⁷:

Ամփոփելով ասվածը՝ կարող ենք փաստել, որ ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման համատեքստում ՀՀ օրենսդրության փոփոխությունների ու լրացումների հիմնական նպատակը քաղաքացիական վերահսկողության և պաշտպանության պլանավորման ու կառավարման ժողովրդավարական հիմնարար սկզբունքների վրա հիմնված, արդիական ռազմական պահանջներին համապատասխանող, ճկուն և ժամանակակից պաշտպանության համակարգի ստեղծումն է: Այդ համակարգը պետք է ունակ լինի արդյունավետ կերպով ապահովելու Հայաստանի Հանրապետության, հայ ժողովրդի ռազմական անվտանգությունը, ինչպես նաև կատարելու Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունները:

⁷ Տես «Պաշտպանության մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը (<http://www.arlis.am/documentview.aspx?docID=48002>):

ИЗМЕНЕНИЯ И ДОПОЛНЕНИЯ В ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ РА В КОНТЕКСТЕ ВТОРОГО СТРАТЕГИЧЕСКОГО ПЕРЕСМОТРА ОБОРОНЫ РА

А. С. НАЗАРЯН, заместитель Министра обороны РА

РЕЗЮМЕ

Целью изменений и дополнений, осуществленных в законодательстве РА в контексте Стратегического пересмотра обороны, является создание гибкой и современной системы обороны, основанной на фундаментальных демократических принципах гражданского контроля над Вооруженными силами, планирования обороны и управления ею. Проведенный анализ положений проектов законов «О статусе воинских частей и военных заведений», «Об утверждении Устава Внутренней службы ВС» и «О военной обязанности и военной службе» показывает, что все они нацелены на эффективное обеспечение военной безопасности РА и создание условий для выполнения взятых нашим государством международных обязательств.

THE AMENDMENTS AND SUPPLEMENTS IN THE RA
LEGISLATION IN THE CONTEXT OF THE SECOND
STRATEGIC DEFENSE REVIEW

A. S. NAZARYAN, Deputy Minister of Defense of the Republic of Armenia


SUMMARY

The amendments and supplements passed in the Legislation of the Republic of Armenia in the context of Strategic Defense Review aim to build a flexible and contemporary defense system based on the fundamental democratic principles of civil control over the Armed Forces, defense planning and management. The analysis of the provisions of the Bills “On the Status of Military Units and Military Institutions”, “On Approval of the Internal Service Regulations of the Armed Forces” and “On Conscription and Military Service” shows that they are all targeted at the effective provision of military security of the Republic of Armenia and the creation of conditions for meeting international commitments pledged by our state.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ
ԿԱՐԵՎՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ

Լ. Գ. ԱՅՎԱԶՅԱՆ, ՀՀ ՊՆ պաշտպանական քաղաքականության
վարչության պետ, ԶՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական

Պաշտպանության ռազմավարական վերանայու-
մը (ՊՌՎ) իրականացվում է «քաղաքականություն–
ռազմավարություն–պլանավորում» շղթային տրամա-
բանորեն ավելի փոխկապված ձև հաղորդելու համար:
Հիմնվելով գործող օրենսդրությունում և հայեցակար-
գային փաստաթղթերում արդեն ամրագրված արժեք-
ների, վերջնականատակների ու գործառույթների վրա՝
ՊՌՎ ռազմավարության բաղադրիչը սահմանում է
Պաշտպանության նպատակները և դրանց հասնելու
ուղիները՝ միևնույն ժամանակ ունենալով պաշտպանա-
կան քաղաքականության վերանայման վրա ազդեցու-
թյուն գործելու իրավասություն: Ռազմավարության իրականացման համար ան-
հրաժեշտ ռեսուրսները պլանավորվում են ՊՌՎ վերջին փուլում՝ հիմք կազմելով
Պաշտպանության զարգացման պլանի և Սպառազինության ու ռազմական
տեխնիկայի զարգացման ծրագրի համար:



«Զանի որ պետության կյանքը կախված է իր բանակի վսեմությունից, ապա
քաղաքական հաստատությունները պետք է կազմակերպված լինեն այն կերպ, որ
ստեղծեն ռազմական կառույցի գործելու համար բարենպաստ նախապայման-
ներ»¹: Մաքիավելիի այս դիտարկումը լավագույնս է արտացոլում «Պաշտպա-
նության» և դրա պլանավորման դերը ցանկացած պետության ու հասարակու-
թյան կյանքում: Իսկ Կլաուզեֆցը նշել է, որ պատերազմի համար անհրաժեշտ մո-
բիլիզացվող ռեսուրսների քանակը որոշելիս առաջին հերթին պետք է քննության
ենթարկել յուրային ու հակառակորդի քաղաքական նպատակները: Այնուհետև
պետք է գնահատել յուրային ու հակառակորդի ռազմական հզորությունները և
կառավարությունների ու հասարակությունների շրջանում տիրող իրավիճակը: Եվ
վերջապես, պետք է գնահատվեն այլ երկրների՝ վերահաս պատերազմում քաղա-
քական համակրանքները և դրանց հնարավոր փոփոխությունները²:

Անհրաժեշտ է հաշվի առնել նաև, որ Հայաստանի Հանրապետության
«Պաշտպանությունը» ներկայացնում է ռազմական, քաղաքական, տնտեսական,

¹ Stu Felix Gilbert. Machiavelli: The Renaissance of the Art of War. Makers of Modern Strategy: from Machiavelli to the Nuclear Age. Ed. by Peter Paret. Princeton University Press, 1986, P. 29:

² Stu Carl Von Clausewitz. On War. Edited and Translated by Michael Howard and Peter Paret. Princeton University Press, 1976, P. 586:

տեղեկատվական, սոցիալական, իրավական միջոցների ու միջոցառումների, ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ³:

Այսպիսով՝ Պաշտպանության համընդգրկուն բնույթի, դրա կայացման գործում պետական իշխանության ամբողջ համակարգի ներգրավվածության, ինչպես նաև համակողմանի գնահատում կատարելու անհրաժեշտության իրողությունների հաշվառմամբ տեսնում ենք, որ Հայաստանում Պաշտպանության պլանավորման մեջ էական, թերևս նույնիսկ ամենակարևոր բաղկացուցիչ մասն է կազմելու Պաշտպանության ռազմավարական վերանայումը, որը պետական կառավարման շահառու մարմինների ներգրավման ամենալայն «համաժողովն» է:

Պաշտպանության պլանավորման գործում ՊՌՎ դերն ու նշանակությունը հասկանալու համար առաջին հերթին պետք է հստակեցնենք, թե ինչ է նշանակում «պլանավորում» տերմինը: Եթե օգտվենք տնտեսագիտության մեջ կիրառվող սահմանումից, կտեսնենք, որ պլանավորումը կառավարման բաղկացուցիչ մասերից մեկն է, համակարգի ապագա վիճակը, դրան հասնելու ուղիները, եղանակները և միջոցները սահմանող պլանների մշակումն ու գործնական իրականացումը⁴: Այս հասկացության մեկ այլ՝ ավելի հանգամանալից, սահմանում օգտագործվում է ԱՄՆ-ի պաշտպանության ոլորտում կիրառվող Համատեղ օպերատիվ պլանավորման գործընթացում, ըստ որի՝ պլանավորումը միտված է ազգային ռազմավարական նպատակները համատեղ ուժերի գորահավաքի, տեղակայման, կիրառման, պահպանման, վերատեղակայման և զորացրման ուղղությամբ կոնկրետ միջոցառումների կերպավորելուն⁵:

Այս երկու սահմանումներից առաջինում հանդիպում ենք «ապագա վիճակ», իսկ երկրորդում՝ «ազգային ռազմավարական նպատակներ» հասկացությունների: Այսինքն՝ տեսնում ենք, որ պլանավորումը պետք է հիմնված լինի աստիճանակարգությամբ իրենից վեր գտնվող գործընթացների վրա, որոնք կսահմանեն ցանկալի վերջնարդյունքներն ու նպատակները: Խոսքը պաշտպանական քաղաքականության և ռազմական ռազմավարության մասին է:

Որոշումների մշակումն ու կայացումը թերևս Պաշտպանության պետական կառավարում համարվող պաշտպանական քաղաքականության ամենահանգուցային մասն են: Որոշման մեջ պաշտպանական քաղաքականության կողմից ծանրութեթև են արվում սպասվող գործողությունները, սահմանվում են դրանց ցանկալի վերջնարդյունքը և իրականացման հաջորդականությունը⁶: Ավելին.

³ Տես «Հայաստանի Հանրապետության օրենքը պաշտպանության մասին», հոդ. 3 (<http://www.mil.am/1296045447>):

⁴ Տես «Словарь экономических терминов» (<http://economicportal.ru/term-words/word-p2.html#p1>):

⁵ Տես «Joint Operation Planning» (Joint Publication 5-0). U.S. Joint Chiefs of Staff. Washington, 11 August 2011, P. I-1:

⁶ Տես *А. И. Поздняков*. Методология выработки и принятия военно-политических решений. Кафедра военно-гуманитарных наук. Академия Генерального штаба Вооруженных Сил Российской Федерации, 2002, с. 2:

պաշտպանական քաղաքականության մեջ որոշումների կայացմանը հանգում են քայլերի հետևյալ հաջորդականությամբ՝ գործելու անհրաժեշտության ըմբռնում (ռազմաքաղաքական իրավիճակի ուսումնասիրություն), ցանկալի վերջնադրյունքի առաջադրում և որոշման կայացում: Ընդ որում, հետագայում մանրամասնեցվելուց ու բացազատվելուց հետո այդ համալիր որոշումը նորմատիվորեն ամրապնդվում է հրամանագրերի, կարգադրությունների, որոշումների, ցուցումնագրերի (դիրեկտիվների), հրամանների կամ հրահանգների տեսքով⁷:

Ռազմաքաղաքական գործունեության անհրաժեշտության ըմբռնումը ձևավորվում է ազգային արժեքների և սահմանված գործառույթների ուսումնասիրության հիման վրա: Այդ նպատակով պաշտպանական քաղաքականությունը տեղեկացվում է նորմատիվ իրավական և ուղեցույց-հայեցակարգային փաստաթղթերի ամբողջ աստիճանակարգի վերաբերյալ:

Ազգային (պետական) արժեքները հոգևոր, բարոյական, քաղաքական, տնտեսական, ռազմական և այլ արժեքների միասնություն են, արժեքների, որոնք պետության, նրա գոյության ու զարգացման, իր անկախության ու ինքնիշխանության պաշտպանության գործում ունենալով գերակա նշանակություն, պետության կենսական հզորության և նրա անվտանգության ապահովման գլխավոր ցուցանիշներն են: Յուրաքանչյուր ազգային արժեք ենթադրում է որոշակի խնդիրների (այդ թվում նաև պաշտպանության ոլորտում) լուծման հարցում պետության կարողությունների ավելացում⁸:

Պաշտպանությանը առնչվող՝ Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության հիմնարար արժեքների թվում են պետության և ժողովրդի պաշտպանվածությունն ու խաղաղությունը⁹:

Զինված ուժերի հիմնական գործառույթներն են, այլ կերպ ասած՝ դերերը, զինված հարձակման կանխումը, կասեցումը և պատերազմական գործողությունների վարումը, մասնակցությունը արտակարգ իրավիճակների կանխման և դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքներին, բազմազգ գորախմբավորումների կազմում մասնակցությունը միջազգային մարդասիրական և փրկարարական, խաղաղապահական և կայունացման գործողություններին¹⁰:

Գործունեության անհրաժեշտության ըմբռնումից հետո՝ նախքան որոշում կայացնելը, անհրաժեշտ է հստակեցնել պաշտպանության ոլորտում ցանկալի վերջնադրյունքները: Անհրաժեշտ պաշտպանական ներուժի ապահովման ցանկալի վերջնադրյունքների թվում են ռազմական անվտանգության սպառնալիքներ

⁷ Տես նույն տեղում, էջ 3–4:

⁸ Տես *А. А. Данилевич, О. К. Рогозин, Д. О. Рогозин, И. А. Терехов, В. И. Цымбал. Международная безопасность, стратегическая стабильность, обороноспособность государств (понятия, определения, термины). М., 1995, сс. 7–8:*

⁹ Տես «Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ռազմավարություն», գ. 1 (<http://www.mil.am/files/NATIONAL%20%20SECURITY%20STRATEGYarm.pdf>):

¹⁰ Տես «Հայաստանի Հանրապետության օրենքը պաշտպանության մասին», հոդ. 11 (<http://www.mil.am/1296045447>):

րի կանխարգելումն ու չեզոքացումը, ճգնաժամների հաղթահարումը, բնական և տեխնաժին աղետների հետևանքների վերացումը, բազմակողմ և երկկողմ հավասարակշռված ռազմական համագործակցության զարգացումը¹¹:

Պաշտպանական քաղաքականության շրջանակներում մինչ այժմ բերված դրույթներին հավասարաչափ անդրադարձ է կատարվում ՊՌՎ բոլոր՝ 1-ից մինչև 5-րդ, ինչպես նաև իրականացման փուլերում: Քաղաքականության նկատառումները (թե՛ ներգերատեսչական ու համապետական, թե՛ միջազգային) կարելի է ասել «ներծծում են» ՊՌՎ ամբողջ գործընթացը՝ ստեղծելով ցանկացած նոր լուծումներն ու առաջարկությունները կարգավորող, թեկուզև որոշակիորեն սահմանափակող շրջանակներ: Մյուս կողմից, սակայն, ՊՌՎ-ն ինքը կարող է հանգեցնել պաշտպանական քաղաքականության ձևափոխմանը, և դա կարող է կատարվել ռազմավարության ձևավորման ժամանակ առաջ եկող եզրահանգումների համատեքստում:

Պաշտպանական քաղաքականության շրջանակներում որոշումների կայացումից, կարելի է ասել՝ «շրջանակների» հաստատումից հետո ՊՌՎ-ն անցնում է ռազմական ռազմավարության ձևավորման փուլ: Բխելով պաշտպանական քաղաքականությունից և ծառայելով դրան՝ ռազմական ռազմավարությունը ռազմարվեստի բաղկացուցիչ մասն է, դրա բարձրագույն տիրույթը, որը պարփակում է պատերազմի, ռազմարշավների ու ռազմավարական գործողությունների պլանավորման, կազմակերպման ու վարման հարցերը: Այն ներառում է բանակաշինության, պատերազմին պետության, նրա տնտեսության, բնակչության և զինված ուժերի նախապատրաստման ընդհանուր հարցերը¹²:

Ռազմավարության ձևավորումը ներառում է արդեն իսկ ի հայտ բերված ազգային շահերի ուժգնության (ինտենսիվության) մակարդակի, դրանցից յուրաքանչյուրի ասպարեզում խնդիրների, միտումների ու մարտահրավերների (սպառնալիքների) որոշում, նպատակների սահմանում, դրանց տարատեսակ հայեցակարգների (ուղիների) մշակում և վերջիններիս հասնելու համար առկա կամ ցանկալի ռեսուրսների (միջոցների) պլանավորում: Իրականացվում է նաև նպատակների՝ տեղին, ուղիների՝ ընդունելի և միջոցների հասանելի լինելու, ինչպես նաև ռիսկի գնահատում, որի շնորհիվ վերջնականորեն հղված ռազմավարությունը կարող է ազդեցություն գործել պաշտպանական քաղաքականության վերանայման վրա¹³:

ՊՌՎ շրջանակներում ձևավորված ռազմավարությունը ներառում է անվտանգության միջավայրի ու սպառնալիքների գնահատում՝ սպառնալիքների իրականացման հավանականության, հավանականության փոփոխության մի-

¹¹ Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին», գ. IV (<http://www.mil.am/files/mil-doctrine-arm.pdf>):

¹² Տես *Լ. Ա. Դանիլևիչ, Օ. Կ. Ռոզոզին և ուրիշներ*, Նշ. աշխ., էջ 85:

¹³ Տես «Appendix I Guideline for Strategy Formulation». «U.S. Army War College Guide to National Security Issues», Vol. II: National Security Policy and Strategy, 5th ed. Ed. by J. Boone Bartholomees, Jr., June 2012, P. 415:

տումների, նախագոյուզացման ժամանակի, ՀՀ կենսական շահերի վրա ազդեցության աստիճանի և ՀՀ-ի կողմից հակազդեցության հնարավորությունների պարզմամբ: Այս ամենը կատարվում է ՊՌՎ 1-ին փուլում՝ անվտանգության միջավայրի ու սպառնալիքների գնահատման ընթացքում: Սպառնալիքների գնահատման շարունակությունը համարվող պլանավորման նկատառումների միջանկյալ (2-րդ) փուլում մշակվում են սպառնալիքների իրականացման սցենարները և դրանց արձագանքելիս՝ յուրաքանչյուր գործելակերպի, առկա ու հասանելի ուժերի և միջոցների մասին ենթադրությունները:

ՊՌՎ հաջորդ (3-րդ) փուլը դերերի, առաջադրանքների ու խնդիրների սահմանումն է: Դերը որոշակի իրավիճակում, գործընթացում կամ գործողությունում պետական կառավարման մարմնի ստանձնած գործառույթն է և ակնկալվող գործունեությունը: Դերերի անվանացանկը վերցվում է գործող նորմատիվ իրավական ակտերից (հիմնականում՝ պաշտպանության մասին օրենքից), թեև կարող է նորահայտ սպառնալիքների համատեքստում համարվել լրացուցիչ դերերով: Միևնույն ժամանակ, առաջադրանքը նպատակի հետ անելիքների միասնականությունն է, որում հստակ և համառոտ կերպով շարադրվում է անհրաժեշտ գործողությունը և դրա պատճառը, իսկ խնդիրը առաջադրանքի կատարման համար անհրաժեշտ առանձին անելիքներն են: Կարելի է ասել, որ ՊՌՎ 3-րդ փուլում դերերի, առաջադրանքների ու խնդիրների մշակումը, իր ամբողջության մեջ, հավասարագոր է Պաշտպանության նպատակների սահմանմանը:

Այնուհետև գալիս է նպատակներին հասնելու ուղիների որոշումը, ինչն արվում է ՊՌՎ 4-րդ և 5-րդ փուլերում՝ զորային կառույցի և Պաշտպանության զարգացման մտահղացման մշակմամբ: Գլխավորն այստեղ Պաշտպանության մտահղացումն է, ռազմավարության բառապաշարի օգտագործմամբ՝ հայեցակարգը կամ ուղին, որը սահմանում է սպառնալիքների չեզոքացման ուղղությամբ գործելակարգի (պատերազմի, ռազմական ու մարտական գործողությունների վարման) եղանակներն ու ձևերը:

Պատերազմի վարման եղանակները այն գործողությունների համակարգն են, որոնք սահմանում են ուժերի և միջոցների կիրառման հաջորդականությունը, կարգը և տիպային հնարքների միասնականությունը՝ պատերազմի նպատակներին հասնելու և ռազմաքաղաքական ու ռազմավարական խնդիրները կատարելու համար¹⁴: Միևնույն ժամանակ, ռազմական (մարտական) գործողությունների ձևերը սահմանում են զինված ուժերի և մյուս զորքերի ռազմավարական, օպերատիվ ու մարտավարական կիրառման տարբեր տարրերի ծավալները, կառուցվածքը, փոխդասավորությունը և փոխգործությունը: Եվ վերջապես, ռազմական (մարտական) գործողությունների եղանակները սահմանում են զինված ուժերի և մյուս զորքերի կազմակերպված գործողությունների բովանդակությունն ու ձևերը, զորքերի ռազմավարական, օպերատիվ և մարտավարական կիրառման, ջանքերի կենտրոնացման ու սպալենտրոնացման, զորքերով, ուժերով, միջոցներով, հարվածներով ու կրակով տարաշարժման ընտրված կարգն ու հաջորդականությունը՝

¹⁴ Տես Ա. Ա. Դանիլևիչ, Օ. Կ. Ռոզոզին և ուրիշներ, Նշ. աշխ., էջ 32–33:

որոշակի նպատակի հասնելու, ռազմավարական, օպերատիվ կամ մարտական առաջադրանք կատարելու նպատակով¹⁵:

Պատերազմի վարման եղանակների, ռազմական (մարտական) գործողությունների ձևերի ու եղանակների սահմանման միջոցով ռազմական ռազմավարության ուղիները որոշելուց հետո ՊՌՎ 5-րդ փուլում կատարվում է ռազմավարության իրականացման համար անհրաժեշտ ռեսուրսների պլանավորում: Այս փուլում նախանշվում են Պաշտպանության (մեր պարագայում՝ 2016–2020 թթ.) զարգացման համար անհրաժեշտ նյութական և ոչ նյութական ռեսուրսները: Ընդ որում, ռեսուրսների երկրորդ կատեգորիան առաջինի նկատմամբ ունի առաջնահերթություն: Այսինքն՝ ոչ նյութական ռեսուրսները, այն է՝ կազմակերպական, կառուցվածքային, գործառնային, փոխգործելիության, օրենսդրության հետ կապված բոլոր լուծումները, կոնկրետ միջոցառումների տեսքով ներմուծվում են Պաշտպանության զարգացման պլանի մեջ, մինչդեռ դրանց սատարելուն կոչված նյութական լուծումները՝ արտադրություն, ձեռքբերում, արդիականացում, մաս են կազմում Սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման ծրագրի, որը զարգացման պլանի ածանցյալն է:

Ռեսուրսների պլանավորմամբ ավարտվում է ռազմավարության ձևավորման, նույն ինքը՝ ՊՌՎ 5-րդ, փուլը, և սկսվում է դրա իրականացումը: Ե՛վ ռազմավարության ձևավորման, և՛ ՊՌՎ 2-ից 5-րդ փուլերի ընթացքում մշտապես կատարվում է ռազմավարության գնահատում՝ նպատակների տեղին լինելու, ուղիների ընդունելի լինելու, միջոցների հասանելի լինելու, ինչպես նաև դրանցից յուրաքանչյուրի հետ կապված ռիսկի տեսանկյունից: Այս ընթացքում Պաշտպանության ռազմավարական վերանայմամբ, այն ռազմական ռազմավարության ձևավորմամբ, զբաղվող անձնակազմը մշտապես այնպիսի հարցերի պատասխաններ է որոնում, թե, օրինակ, բացահայտված սպառնալիքների չեզոքացման համար բավարար են արդյոք ընտրված նպատակները (դերերը, առաջադրանքներն ու խնդիրները): Հարցերի մյուս համախումբը վերաբերում է այն բանին, թե տեղական ու միջազգային հանրության համար ընդունելի կլինի արդյոք ընտրված մտահղացումը (հայեցակարգը, ուղին): Ե՛վ վերջապես, անհրաժեշտ քանակով հասանելի կլինեն արդյոք այս կամ այն ժամանակահատվածի համար պլանավորվող ռեսուրսները, ինչպիսին կլինի դրանց որակը, կամ էլ ժամանակային առումով հնարավոր կլինի արդյոք կատարել այս կամ այն կառուցվածքային փոփոխությունը:

Ամփոփելով ասվածը՝ տեսնում ենք, որ իրականում Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը ներառում է ինչպես պաշտպանական քաղաքականության մշակումը, այնպես էլ ռազմական ռազմավարության ձևավորումը և ավարտվում է Պաշտպանության պլանավորմամբ: Հետևապես՝ ոչ թե ՊՌՎ-ն է Պաշտպանության պլանավորման քաղաքիչ, այլ հակառակը՝ Պաշտպանության պլանավորումն է ՊՌՎ քաղկացուցիչ մասերից մեկը, թեև վերջինն ու, հավանաբար, ամենակարևորը:

Սակայն այստեղ կարևորը ոչ թե քաղաքականությունը, ռազմավարությունը

¹⁵ Տես նույն տեղում, էջ 83:

ու պլանավորումը՝ ըստ տաքսոնոմիայի հստակ կերպով դասակարգելը, այլ մեկը մյուսի հետ դրանց փոխազդեցությունը ճիշտ ըմբռնելն է: Նյութական և ոչ նյութական ռեսուրսները չեն կարող պլանավորված լինել, եթե չկան դրանց կիրառման նպատակները և մտահղացումը (հայեցակարգը): Նույն կերպ՝ Պաշտպանության նպատակները չեն կարող սահմանվել, եթե չկան գործունեության անհրաժեշտության ըմբռնումը, քաղաքական վերջնանպատակները և որոշումները:

Այսպիսով՝ Պաշտպանության ռազմավարական վերանայումը կոչված է մեկ ընդհանուր շրջանակում միավորելու քաղաքականության և ռազմավարության պլանավորման գործընթացները:

СТРАТЕГИЧЕСКИЙ ПЕРЕСМОТР ОБОРОНЫ КАК ВАЖНАЯ СОСТАВЛЯЮЩАЯ ПЛАНИРОВАНИЯ ОБОРОНЫ

*Л. Г. АЙВАЗЯН, Начальник Управления оборонной политики МО РА,
государственный советник 2-го класса СГС*

РЕЗЮМЕ

Стратегический пересмотр обороны (СПО) реализуется в соответствии со следующими этапами: 1) оценка безопасной среды и угроз; 2) разработка сценариев реализации угроз и предположений о наличествующих и доступных силах и средствах для реагирования на эти угрозы; 3) определение ролей, заданий и задач органов государственного управления, что равносильно определению целей обороны; 4) определение путей достижения этих целей; 5) планирование необходимых ресурсов для осуществления намеченной стратегии. На всех этапах пересмотра обороны постоянно осуществляется оценка избранной стратегии с точки зрения обоснованности целей, приемлемости путей их достижения, доступности средств и связанных с ними рисков.

Тем самым, процесс Стратегического пересмотра обороны, фактически, включает как разработку оборонной политики, так и формирование военной стратегии и планирование обороны. Следовательно, планирование обороны является составляющей СПО, а не наоборот, как принято считать.

Таким образом, процесс Стратегического пересмотра обороны призван к объединению в единых рамках процессов политического и стратегического планирования.

THE STRATEGIC DEFENSE REVIEW AS AN IMPORTANT
COMPONENT OF DEFENSE PLANNING

*L. G. AYVAZYAN, Chief, Department of Defense Policy, MOD, RA,
2nd Degree State Advisor, SCS*

SUMMARY

The Strategic Defense Review (SDR) is implemented in compliance with the following stages: 1) assessing the security environment and threats; 2) developing threat scenarios and assumptions about the actual and available forces and means to counter these threats; 3) identifying the roles, tasks and missions set before the bodies of public administration, which is equivalent to setting defense goals; 4) determining the ways of achieving these goals; 5) planning the resources necessary to implement the proposed strategy. The strategy assessment is constantly carried out at all stages of defense review in terms of validity of the goals, acceptability of the ways to achieve them, availability of resources and the risks entailed.

Thus, the process of Strategic Defense Review, in fact, comprises both the development of defense policy, and the formulation of military strategy and defense planning. Consequently, defense planning is a component of the SDR, and not vice versa, as it is commonly regarded.

Thus, the process of Strategic Defense Review is called to unite the processes of political and strategic planning in the concurrent framework.

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՇԽԱՐՀԱՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍԻ ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ԴԻՆԱՄԻԿԱՅԻ ՎՐԱ
ԵՎ ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՈՒՄ ԴՐԱՆՑ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

*Ա. Բ. ՄԱՆՎԵԼՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի վերլուծական կենտրոնի գիտնական-վերլուծաբան*

Հարավային Կովկասում և Միջին Արևելքում տեղի ունեցող ռազմավարական-անվտանգային փոփոխությունները պայմանավորված են նաև էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոնի* տեղաշարժերով: Դրանց նկատմամբ զգայուն են հատկապես էներգետիկ պաշարներով ու տարանցիկ ուղիներով հարուստ տարածաշրջանները, որոնցից մեկը Հարավկովկասյան տարածաշրջանն է: Հետևաբար՝ էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոնի տեղաշարժով պայմանավորված անվտանգային միջավայրի փոփոխումները պետք է հաշվի առնվեն ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման ժամանակ:



Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգային միջավայրի վրա այդ փոփոխությունների ազդեցությունը որոշելու համար առաջին հերթին պետք է ուշադրություն դարձնել հետևյալ գործոնների վրա.

- նավթի համաշխարհային շուկայում գների անկումը և դրա ազդեցությունը պետությունների ու տարածաշրջանների անվտանգային համակարգերի վրա,
- Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ համաձայնագրի կնքումը և Իրանի դերի մեծացումը էներգետիկ համաշխարհային շուկայում ու տարածաշրջանում,
- Կասպից ծովից մինչև Եվրոպա ձգվելիք գազամուղների կառուցման ասպարեզում մրցակցությունը:

Բացի վերը նշվածից, տարածաշրջանի անվտանգային դինամիկայի վրա ազդում են նաև Կասպից ծովի անվտանգության ապահովման համար շարունակվող պայքարը, Կենտրոնական Ասիայում ԱՄՆ-ի ու Եվրամիության վարած քաղաքականությունը և Ռուսաստանի ու Չինաստանի հետ նրանց հակասությունների սրումը, այդ թվում՝ Եվրամիության էներգետիկ շուկայում Ռուսաստանի դերի նվազեցմանն ուղղված Բրյուսելի քաղաքականությունը, Միջին Արևելքում Իրանի և Պարսից ծոցի արաբական պետությունների միջև հակասությունների շարունակական խորացումը և այլն:

* Էներգետիկ աշխարհառազմավարական կենտրոն ասելով հասկանում ենք այն պետությունը, պետությունների խումբը, տարածաշրջանը, որը շնորհիվ էներգակիրների արդյունահանման և արտահանման՝ ձեռք է բերում համաշխարհային քաղաքական, տնտեսական և այլ գործընթացների վրա էական ազդեցություն գործելու կարողություն:

ԱՆՎՏԱՆԳԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՎՐԱ ՆԱՎԹԻ ԳՆԻ
ՆՎԱԶՄԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՇԽԱՐՀԱՔԱՂԱՔԱԿԱՆ
ՆՈՐ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Նավթի գնի շարունակական անկումը, որն սկսվել է 2014 թ. սեպտեմբերին, քաղաքացիներին է ազդել այդ հումքի վաճառքի հաստիքով գոյատևող պետությունների տնտեսական ու քաղաքական համակարգերի վրա: Դա մաս ազդում է այդ հումքով հարուստ պետությունների և տարածաշրջանների անվտանգային դինամիկայի վրա, ինչի հետևանքով այնտեղ նվազում է անվտանգության մակարդակը:

Էներգետիկ աշխարհաքաղաքականության տեսանկյունից նման փոփոխությունները պայմանավորված են այդ տարածաշրջանների կարևորության շարունակական անկմամբ, ինչի պատճառը ԱՄՆ-ում թերթաքարային նավթի արդյունահանման ծավալների աննախադեպ աճումն է: Վերջին հանգամանքի բերումով նավթի համաշխարհային շուկայում ԱՄՆ-ի դերը կրել է ռազմավարական փոփոխություն. նա նավթի խոշորագույն ներմուծողից վերածվել է առավել մեծ չափերով նավթ արդյունահանող պետության: 2014 թ. նավթի արդյունահանման ծավալներով ԱՄՆ-ն զբաղեցրել է 1-ին հորիզոնականը (օրական 11 մլն 644 հազար բարել)¹՝ առաջ անցնելով Սաուդյան Արաբիայից (11 մլն 505 հազար բարել) ու Ռուսաստանից (10 մլն 838 հազար բարել)¹:

Նավթի համաշխարհային շուկայում ԱՄՆ-ի աշխարհառազմավարական դերի փոփոխությունը հանգեցրել է նավթի գնագոյացման հարցում նավթով հարուստ տարածաշրջանների (Պարսից ծոց, Կասպից ծովի ավազան և այլն) դերի փոփոխությանը: Եթե նախկինում Պարսից ծոցում ռազմաքաղաքական իրավիճակի սրումը հանգեցնում էր Նյու Յորքի և Լոնդոնի սակարաններում նավթի գների բարձրացմանը^{*}, ապա այսօր նավթի գնագոյացման վրա այդ տարածաշրջանի ազդեցությունը նվազել է:

Արևմուտքը, հատկապես՝ ԱՄՆ-ը, այլևս նույն չափով չահագրգռված չեն այն տարածաշրջաններում կայունության պահպանման գործում, որոնք վճռորոշ դեր ունեին նավթի գնի կայունության ապահովման հարցում: Ներկայումս վերագնահատվում է այդ տարածաշրջանների անվտանգային նշանակությունը, դրանք կորցնում են նավթի հիմնական արտահանող և դրա գնագոյացման վրա ազդեցություն գործող տարածաշրջանների կարգավիճակը:

Նման իրավիճակը այսպես կոչված «ռեսուրսային քաղաքականության»² հետևանք է, երբ էներգետիկ պաշարներով հարուստ պետությունների տնտեսական, քաղաքական և, որպես կանոն, մաս անվտանգության ամբողջ համակարգը գործում է միայն այդ ռեսուրսների շարունակական սպառման և դրանցից ստացվող եկամուտների հաշվին:

¹ Տես «BP Statistical Review of World Energy June 2015» (<http://www.bp.com/content/dam/bp/pdf/Energy-economics/statistical-review-2015/bp-statistical-review-of-world-energy-2015-full-report.pdf>):

^{*} Օրինակ՝ 1979 թ. Իրանում տեղի ունեցած Իսլամական հեղափոխությունից հետո նշված սակարաններում նավթը մեկ շաբաթվա ընթացքում թանկացավ 125 %-ով:

² Տես «The International Journal of Minerals Policy and Economics» (<http://www.journals.elsevier.com/resources-policy/>):

Նման երկրները կոչվում են «ռենտային պետություններ»³, որոնք գոյատևում են միայն իրենց հումքային պաշարները վերագրված նավթային կամ այլ ընկերություններին երկար ժամանակով շահագործման հանձնելով: Նման քաղաքականությունը այդ երկրներին դնում է հիշյալ ընկերություններից և նրանց աջակցող պետությունների շահերից կախման մեջ, սակայն, միևնույն ժամանակ, «ռեսուրսային» քաղաքականությունը անվտանգության հստակ երաշխիքներ է պարունակում, որովհետև վերագրված նավթային ընկերությունները և նրանց աջակցող գերագոր տերությունները «ռենտային պետություններին» տալիս են անվտանգության որոշակի երաշխիքներ:

Մեր տարածաշրջանում «ռենտային պետության» տիպիկ օրինակ է Ադրբեջանը, որի տնտեսության նավթի և գազի ոլորտը գտնվում է հիմնականում «Բրիտիշ փետրոլեում» և արևմտյան այլ նավթային ընկերությունների վերահսկողության ներքո: Նման կախումը սահմանափակում է ռենտային պետությունների տարաշարժի հնարավորությունը և, որպես կանոն, ազդում դրանց արտաքին ու ներքին քաղաքականության վրա: Այդ պետություններին հատուկ է նաև կառավարման ավտորիտար (անձնապաշտական) համակարգը, ինչը նույնպես բխում է դրանց «ռենտային» կարգավիճակից:

Ռենտային պետությունների «ռեսուրսային» քաղաքականությունն անվտանգության տեսանկյունից արդարացնում է միայն այն դեպքում, երբ հումքի արդյունահանման ծավալներն անընդհատ աճում են, և միջազգային շուկայում գները բարձր են: Իրավիճակը կտրուկ կերպով փոխվում է արդյունահանման ծավալի կրճատման և գների անկման դեպքում. անվտանգության ռեսուրսային բազան սկսում է արագ սպառվել՝ այդպիսի պետություններին դարձնելով խոցելի:

Օրինակ՝ Ադրբեջանի ՀՆԱ-ի ավելի քան 51 %-ը ձևավորվում է էներգակիրների հատվածի հաշվին, արտահանման 95 %-ը կազմում են այդ էներգակիրները, բյուջեի 80 %-ը ձևավորվում է այդ հումքի վաճառքից ստացված եկամուտներից: Վերջին 20 տարիների ընթացքում Ադրբեջանի տնտեսության նավթային ոլորտում, բացի անգլո-ամերիկյան «Բրիտիշ փետրոլեումից», հիմնական դերակատարներ են եղել նաև նորվեգական «Ստատոյլ» և ֆրանսիական «Տոտալ» ընկերությունները: Այս հանգամանքն Ադրբեջանին որոշակի անվտանգային երաշխիքներ էր տալիս՝ ապահովելով նրա արևմտամետ քաղաքական ուղեգիծը և Արևմուտքի շահագրգռվածությունը նրա կայունության պահպանման գործում:

Սակայն 2010 թվականին իրավիճակն սկսեց փոխվել. Ադրբեջանում նավթի արդյունահանման ծավալներն սկսեցին շարունակաբար կրճատվել (մոտ 20 %-ով), իսկ 2014 թվականից նավթի գնի կտրուկ անկումը (մոտ 50 %-ով) նվազեցրեց այդ պետության նկատմամբ Արևմուտքի նավթային ընկերությունների հետաքրքրությունը: Նավթի արդյունահանման ծավալների կրճատման և գների շարունակական անկման պայմաններում «Ստատոյլ» և «Տոտալ» ընկերությունները որոշեցին հեռանալ Ադրբեջանի նավթային համակարգից, ինչը նվազեցնում է այդ պետության անվտանգության միջազգային ռեսուրսը:

³ Տես *H. Mahdavy. The Patterns and Problems of Economic Development in Rentier States: the Case of Iran* (<http://www-personal.umich.edu/~twod/oil-s2010/rents/Mahdavy.pdf>):

Սա իր հերթին հանգեցրել է Արևմուտքի նկատմամբ պաշտոնական Բաքվի վարած քաղաքականության փոփոխման: Դա, մասնավորապես, արտահայտվել է արևմտամետ քաղաքական ու հասարակական գործիչների և իրավապաշտպանների զանգվածային ձերբակալությունների ձևով:

**ԻՐԱՆԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՈՒՄ
ԱՅԳ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ**

Իրանի և Վեցյակի միջև ստորագրված համաձայնագիրը ազդում է նաև Հարավկովկասյան տարածաշրջանի անվտանգային միջավայրի վրա: Իրանի նկատմամբ պատժամիջոցների վերացումը նպաստում է տարածաշրջանի անվտանգության համակարգում այդ պետության ազդեցության աճմանը:

Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ համապարփակ համաձայնագրի ստորագրումից հետո նա հնարավորություն կստանա ընդլայնելու նավթի և գազի իր արդյունահանման ու արտահանման ծավալները: Սա հնարավորություն կտա նաև վերսկսելու Եվրամիություն գազի առաքման հարցով բանակցությունները, ինչն էականորեն կազդի տարածաշրջանում ռազմաքաղաքական հաշվեկշռի՝ անվտանգային միջավայրի դինամիկայի փոփոխման վրա:

Իրանը բազմիցս հայտարարել է ԵՄ իր գազի արտահանման հնարավորության մասին՝ առաջարկելով երեք ուղղություն. թուրքական՝ որպես հիմնական, ու ևս երկու լրացուցիչ ուղղություն՝ սիրիական ու կովկասյան⁴:

Սիրիական ուղղությամբ արտահանման՝ այսպես կոչված Իսլամական գազամուղի նախագծի իրականացումը, որը բանակցությունների առարկա էր դեռ մինչև ներկայիս ճգնաժամը, առնվազն միջնաժամկետ հեռանկարում քիչ հավանական է, եթե հաշվի առնենք այնտեղ տիրող ռազմաքաղաքական իրավիճակը:

Կովկասյան ուղղությամբ արտահանումը Ադրբեջանի տարածքով քիչ հավանական է՝ Իրան–Ադրբեջան խորքային հակասությունների, Ադրբեջանում Թուրքիայի ազդեցության աճման, դեպի Եվրոպա գազի արտահանման հարցում Իրանի և Թուրքիայի մրցակցության, Թուրքմենստանից Կասպից ծովով և Ադրբեջանով դեպի ԵՄ գազի տարանցման խնդրում շահագրգիռ կողմերի միջև եղած տարածայնությունների պատճառով:

Հարավային Կովկասում Իրանի համար նախընտրելի է հայկական ուղին՝ տարածաշրջանում իրանական ազդեցության մեծացման և Իրան–Հայաստան էներգետիկ համագործակցության խորացման հեռանկարով:

Գազամուղի կառուցման հարցում Եվրամիության դիրքորոշումը խարսխվում է էներգետիկ անվտանգության ռազմավարության (Ազգային գործողությունների պլանի⁵) վրա: Դրա հիմնական պահանջներից մեկը թե՛ հումքի աղբյուրների, թե՛

⁴ Տես «Тегеран предлагает ЕС заменить российский газ иранским». «РБК», 11.08.2014 (<http://top.rbc.ru/economics/11/08/2014/942187.shtml>):

⁵ Տես «National action plans» (<https://ec.europa.eu/energy/en/topics/renewable-energy/national-action-plans>):

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՈՒՄ**



Հայաստանի Պաշտպանության ռազմավարական վերանայման գործընթացը
համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի հերթական նիստը

ՀՀ պաշտպանության նախարարություն, 2015 թ. հունիսի 12



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի
և ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի պետ, Պաշտպանության նախարարի խորհրդական
գեներալ-մայոր Հայկ Քոթանջյանի հանդիպումը
ԱՄՆ-ի Պաշտպանական ազգային համալսարանի տեխնոլոգիաների
և ազգային անվտանգության քաղաքականության կենտրոնի
փոխտնօրեն Ջեյմս Քիզլի հետ

Երևան, 2015 թ. մարտի 18



ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանի հանդիպումը Հայաստանի,
Ռուսաստանի, Չինաստանի, Բելառուսի, Ղազախստանի, Գերմանիայի
և ԱՄՆ-ի ակադեմիական դասընթացների շրջանավարտների հետ

Երևան, 2015 թ. հուլիսի 30



Ջորջերի մարտունակության աստիճանի բարձրացմանը միտված մարտավարական գորավարժություն՝ մարտական հրաձգությամբ

Բաղրամյան գորավարժարան, 2015 թ. մայիսի 16



«Մ-300» զենիթային հրթիռային համալիր

Գրվագներ «Շանթ – 2015» ռազմավարական
հրամանատարաշտաբային զորավարժությունից



Էներգակիրների փոխադրման ուղիների բազմազանեցումն է, հետևաբար՝ Կովկասյան ուղղության վրա բազմազանեցման այդ սկզբունքին համապատասխանում է գազի արտահանումը Հայաստանի տարածքով դեպի Վրաստան⁶, ապա՝ գազի հեղուկացմամբ նավերով տեղափոխումը Սև ծովի եվրոպական ափ*:

Եթե հաշվի առնենք Ադրբեջան–Թուրքիա կառուցվող (TANAP), Ռուսաստան–Թուրքիա նախագծվող գազամուղները, ապա թուրքական ուղղությունը չի համապատասխանում ԵՄ-ի էներգետիկ ռազմավարությունից բխող բազմազանեցման սկզբունքին:

Այս պայմաններում, հատկապես՝ երբ բացառվում է սիրիական ուղղությունը, Եվրամիությունը և Իրանը գազի արտահանման կովկասյան ուղղությունը դիտում են որպես թուրքական ուղղությանն այլընտրանք:

Դեպի ԵՄ Իրանից մեծ ծավալով գազի արտահանումը կնվազեցնի Եվրոպայի վրա Ռուսաստանի էներգետիկ ազդեցությունը: ՌԻստի Ռ-Ղ-ի համար ռազմավարական նշանակություն ունի Իրանից ԵՄ գազի արտահանման նկատմամբ ազդեցության լծակի ձեռքբերումը, ինչը հնարավոր է միայն ՀՀ տարածքով գազամուղի կառուցման պարագայում: Թուրքական ուղղությունը կամ Կովկասում դրան մրցակից դիտվող Ադրբեջան–Վրաստան ուղղությունը կլինեն Ռուսաստանի կողմից նվազ վերահսկելի:

Ռուսաստան–Իրան ռազմական, քաղաքական և էներգետիկ համագործակցությունում նկատվող առաջընթացի պայմաններում Կասպից ծովում և Հարավային Կովկասում նրանց շահերի ընդհանրության շնորհիվ (Իրանը ևս դեմ է Կասպից ծովով Թուրքմենստանից Ադրբեջան գազամուղի կառուցմանը) թե՛ Իրանի, թե՛ Ռուսաստանի համար Կովկասյան ուղղությամբ գազի արտահանման հարցում նախընտրելի է Հայաստանը, քանի որ տարածաշրջանում ՀՀ-ն Ռուսաստանի համար առավել հուսալի, իսկ Իրանի համար՝ առավել ընդունելի գործընկեր է:

Հարավային Կովկասով գազի տարանցման ծրագրում շահագրգռված հիմնական ուժերի՝ ԵՄ-ի և Իրանի շահերի համընկնման առանցքը նույնպես անցնում է ՀՀ-ով, քանի որ Բրյուսելի համար այն այլընտրանք է Ադրբեջան–Թուրքիա ուղղությանը:

ՀՀ-ով դեպի Վրաստան գազամուղի կառուցումը Իրանի համար վճռորոշ նշանակություն ունի թուրքական ուղղությամբ արտահանումից իր կախվածությունը մասամբ նվազեցնելու և տարածաշրջանում ռազմական դաշինքի վերածվող Ադրբեջան–Վրաստան–Թուրքիա էներգետիկ միությանը հակակշռելու տեսանկյունից: Այս ծրագրի իրագործումը, սակայն, կախված է միջուկային ծրագրի հարցով համաձայնագրի կնքումից հետո Հայաստանի էներգետիկ համակարգում գերիշխող Ռուսաստանի և Իրանի միջև այդ հարցում ծավալվող համագործակցության մակարդակից:

⁶ Տես «Консорциум, который построит мультифункциональный, глубоководный порт в Анаклия (Западная Грузия), будет выявлен летом 2015 года» (<http://sputnik-georgia.ru/economy/20141211/217205053.html>):

* Ադրբեջանը փորձում է իրականացնել նման մի ծրագիր՝ հեղուկացված գազի տեղափոխումը Վրաստանից դեպի Ռումինիա (AQRI) և 2015 թ. հունիսի 24-ին վերակնքեց նմանատիպ մի պայմանագիր:

Այսպիսով՝ Իրանի էներգետիկ քաղաքականության ակտիվությունը և Վեց-յակի հետ համաձայնագրի կնքումը մեծացնում են տարածաշրջանում նրա ռազմավարական ազդեցությունը: ՀՀ-ով զագամուղի հնարավոր կառուցման հարցով քանակությունները կարևորում են Հայաստանի դերը և մեծացնում նրա ռազմավարական-անվտանգային նշանակությունը տարածաշրջանում:

**ՆՈՐ ԳԱԶԱՄՈՒՂՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ
ՄՐՅԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿԱՍՊԻՅ ԾՈՎԻՅ ՄԻՆՉԵՎ
ԵՎՐՈՊԱ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԵԾԱՅՈՒՄԸ**

Իրանից գազի արտահանման նախագծերի քննարկմանը զուգահեռաբար արդեն սկսվել է երկու զագամուղների կառուցումը, որոնք էական ազդեցություն կունենան տարածաշրջանի անվտանգային դինամիկայի վրա: Այդ ազդեցությունը պայմանավորված է տարածաշրջանից դեպի Եվրոպա գազի արտահանման ասպարեզում ծավալվող մրցակցությամբ:

Ադրբեջանական Անդրանատոլիական (TANAP) զագամուղի կառուցմանը զուգահեռաբար Ռուսաստանն սկսել է «Թուրքական հոսք» խողովակաշարի նախագծումը Սև ծովի հատակով: Այս երկու նախագծերն էլ թե՛ Ադրբեջանի, թե՛ Ռուսաստանի համար ռազմավարական նշանակություն ունեցող ծրագրեր են, որոնք ազդում են այս պետությունների հարաբերությունների վրա:

Ադրբեջանը, որն իր նավթահանքերից արդյունահանվող նավթի ծավալների նվազման և միջազգային շուկայում նավթի գների անկման պատճառով հայտնվել է տնտեսական և քաղաքական խնդիրների առջև, ռազմավարական նշանակություն է տալիս նոր զագամուղի կառուցմանը, ինչը պայմանավորված է երկու հանգամանքով.

- Անդրանատոլիական զագամուղը տարածաշրջանում մինչև այսօր կառուցված խողովակաշարերից առաջինն է, որը լինելու է Ադրբեջանի վերահսկողության ներքո*, ինչը նրան կտա որոշակի քաղաքական առավելություն,

- Ադրբեջանը գազի արտահանմամբ փորձում է մասամբ համակշռել նավթի արտահանումից ստացվող եկամուտների կտրուկ նվազումը:

Ռուսաստանի համար «Թուրքական հոսքի» նշանակությունը պայմանավորված է՝

- Եվրոպական գազի շուկայում իր դիրքերը պահպանելու ձգտմամբ,
- էներգակիրների տարանցման հարցում ՌԿրաիմայից կախման նվազեցման ռազմավարական կարևորությամբ:

Տարածաշրջանում հասունանում է գազի հարցի առնչությամբ Ադրբեջանի և Ռուսաստանի միջև նոր դիմակայություն, որն էլ ավելի է սրվում Կասպից ծովի ընդերքով զագամուղի կառուցման հարցում այս պետությունների միջև առկա տարաձայնությունների հետևանքով:

Եվրամիությունը և ԱՄՆ-ը ակտիվ ջանքեր են գործադրում Կենտրոնական Ասիայի գազի շուկա մուտք գործելու համար: Թուրքմենստանը, որը գազի պաշարներով աշխարհում 4-րդ պետությունն է, նույնպես շահագրգռված է այս նա-

* «Բրիտիշ փետրոլեումը» և արևմտյան այլ նավթային ընկերություններ վերահսկում են Բաքվից սկիզբ առնող Բաքու – Ջեյհան նավթամուղը և Բաքու – Էրզրում զագամուղը:

խազծում: Աղբբեջանի համար ծրագիրը ռազմավարական նշանակություն ունի, որովհետև տարանցիկ պետություն դառնալու դեպքում կբարձրանա նրա անվտանգության մակարդակը և՛ որպես Եվրոպային գազ մատակարարող, և՛ որպես տարանցիկ պետություն, ինչը կազդի նաև տարածաշրջանում Աղբբեջանի ռազմաքաղաքական դիրքերի վրա:

Անդրանատոլիական գազամուղը կարող է իսկապես ռազմավարական տրամաշափ ստանալ, եթե հաջողվի այն միացնել Թուրքմենստանին, սակայն Կասպից ծովի հատակով գազամուղի կառուցմանն ընդդիմադրում են Ռուսաստանը և Իրանը: Եվրամիությունը և ԱՄՆ-ը, իրենց հերթին, ակտիվորեն միջնորդում են, որ պաշտոնական Բաքուն և Աշգարադն սկսեն բանակցել Կասպից ծովի հատակով գազամուղի կառուցման հարցով:

Այսպիսով՝ տարածաշրջանում սկսում է ի հայտ գալ գազի խնդրով պայմանավորված նոր դիմակայություն, որում ներգրավված են գազ արտահանող հիմնական պետությունները՝ Ռուսաստանը, Թուրքմենստանը, Աղբբեջանը, և տարանցիկ պետություններ Թուրքիան ու Վրաստանը: Այս մրցակցությունում Արևմուտքն աջակցում է «Թուրքական հոսք» նախագծին, որն ստեղծում է ռուսական գազին այլընտրանք: Այս գործընթացում ներգրավված է նաև Չինաստանը, որն արդեն մեծ ներդրումներ է կատարել Կենտրոնական Ասիայի, նաև՝ Իրանի գազի արդյունահանման համակարգերում՝ այդ տարածաշրջաններից արժեքավոր հումքի հոսքը դեպի իրեն ուղղելու համար:

Իրանի և Վեցյակի միջև համաձայնագրի ստորագրումը նշանակում է, որ դեպի Եվրոպա գազի տարանցման հարցում մրցակցությանը կարող է միանալ նաև Թեհրանը:

Նավթի միջազգային շուկա Իրանի վերադարձը կհանգեցնի նավթի գների հետագա անկման: Այս պայմաններում հումքային պաշարներից ստացվող հասույթով գոյատևող պետությունների համար «գազի գործոնը» դառնում է վճռորոշ, ինչի քաղաքական հետևանքն այն է, որ Եվրոպայի գազի շուկայում տեղ գրավելու համար սկսվում է պայքարի նոր փուլ:

Այսպիսով՝ ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման ժամանակ պետք է հաշվի առնել, որ առաջիկա 2-3 տարիներին Հարավային Կովկասում էներգետիկ գործոնով պայմանավորված անվտանգային դինամիկային բնորոշ կլինեն հետևյալ միտումները.

1. նավթի ցածր գների պայմաններում ռեևտային պետությունների, մասնավորապես՝ Աղբբեջանի ռեսուրսային անվտանգության մակարդակի շարունակական նվազում՝ պայմանավորված 2015 թ. նրա ՀՆԱ-ի նվազմամբ մինչև 10 %-ով⁷, կամ նույնիսկ՝ 18 %-ով (համաձայն որոշ այլ աղբբյուրների),

2. տարածաշրջանից գազի արտահանման համար խողովակաշարերի կառուցման նախագծերի միջև մրցակցության սրում, ինչը նոր լարվածություն կառաջացնի Կասպից ծովից մինչև Եվրոպա,

⁷ Տես «S&P outlook for Azerbaijan revised to Negative», 30 January 2015 (<http://www.ftseglobalmarkets.com/news/sp-outlook-for-azerbaijan-revised-to-negative.html#sthash.gRqpUg Fz.dpuf>):

3. Իրանի դերի շարունակական մեծացում և նրա էներգետիկ նշանակության վերագնահատում՝ պայմանավորված Վեցյակի հետ համաձայնագրի կնքմամբ:

ВЛИЯНИЕ ЭНЕРГЕТИЧЕСКИХ ГЕОСТРАТЕГИЧЕСКИХ
ИЗМЕНЕНИЙ НА БЕЗОПАСНОСТНУЮ ДИНАМИКУ
ЮЖНОГО КАВКАЗА И ВАЖНОСТЬ ИХ УЧЕТА В ПРОЦЕССЕ
СТРАТЕГИЧЕСКОГО ПЕРЕСМОТРА ОБОРОНЫ РА

*А. Б. МАНВЕЛЯН, кандидат исторических наук, ученый-аналитик
Аналитического центра ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

В статье обсуждается динамика безопасности в Южном Кавказе в период глубоких и всесторонних изменений в глобальной системе безопасности. Резкое падение цен на нефть на международном рынке энергетики, подписание соглашения об аннулировании санкций против Ирана и его растущее влияние в регионе, а также новое газовое противостояние между странами, заинтересованными в строительстве газопроводов через Турцию в Европу, будут определять динамику безопасности в регионе в ближайшие два года. В процессе Стратегического пересмотра обороны РА важно учитывать глобальные энергетические геостратегические изменения и их растущее влияние на динамику безопасности в регионе.

IMPACT OF CHANGING ENERGY GEOSTRATEGY
ON THE SOUTH CAUCASUS SECURITY DYNAMICS
AND ITS RELEVANCE IN THE RA STRATEGIC DEFENSE REVIEW

*A. B. MANVELYAN, PhD in History, Research Fellow,
Analytical Center, INSS, MOD, RA*

SUMMARY

This article discusses the security dynamics in the South Caucasus in the period of deep and comprehensive changes in the global security system. A sharp drop in oil prices in the international energy market, the signing of an agreement on lifting of sanctions against Iran and its growing influence in the region, as well as the new “gas war” between the countries concerned with the construction of gas pipelines through Turkey to Europe, will determine the security dynamics in the region within the next two years. In the process of the RA Strategic Defense Review it is important to take into account global changes in energy geostrategy and their growing influence on the security dynamics in the region.

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՈՐՈՇ ՆՈՐԱՄՈՒԾԱԿԱՆ
ՀՇՏԱԶՈՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՄԱՍԻՆ

*Բ. Պ. ՊՈՂՈՍՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի պետի տեղակալ-վերլուծական կենտրոնի պետ,
Մ. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ, քաղաքական գիտությունների թեկնածու,
ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի վերլուծական կենտրոնի ռազմավարական
խաղերի խմբի պետ*



ՀՀ Պաշտպանության ռազմավարական վերանայման (ՊՌՎ) մեկնարկային փուլը ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների գնահատման փուլն է: Այս փուլի արդյունավետ իրագործումը պահանջում է պետության մեջ առկա խնդիրների, տարածաշրջանային զարգացումների և արտատարածաշրջանային աշխարհաքաղաքական գործընթացների վերլուծություն և դրա հիման վրա համապատասխան կանխատեսումների կատարում, պաշտպանական-անվտանգային քաղաքականության պլանավորում և իրականացում:

Քանի որ ընդհանուր առմամբ պետությունը կանխատեսելի համակարգ է, և պետության մեջ տեղի ունեցող զարգացումները գտնվում են պետական կառավարման մարմինների մշտական հսկողության տակ, ապա հնարավոր ներքին զարգացումները հեշտ է կանխատեսել:

Քանի որ ընդհանուր առմամբ պետությունը կանխատեսելի համակարգ է, և պետության մեջ տեղի ունեցող զարգացումները գտնվում են պետական կառավարման մարմինների մշտական հսկողության տակ, ապա հնարավոր ներքին զարգացումները հեշտ է կանխատեսել:

Միջազգային հարաբերությունները բնորոշվում են բարդ փոխկապվածությամբ ու փոխազդեցությամբ, գործոնների թվի անընդհատ աճմամբ ու դրանց փոխազդեցության ոչ գծայնությամբ, ինչը հանգեցնում է մեծ աստիճանի անորոշության: Միջազգային հարաբերություններում ներգրավված ոչ պետական դերակատարների թվի և ազդեցության շարունակական աճումը, տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը և տարբեր պետություններում տեղի ունեցող հասարակական գործընթացների վրա ազդեցության մեծացումը էլ ավելի են դժվարացնում վերլուծությունների և դրանց հիման վրա կատարվող կանխատեսումների բավարար հավաստիության ապահովումը:

Միջազգային հարաբերություններում անորոշության մակարդակի աճման փաստը նշում է նաև ԱՄՆ-ի հետախուզության ազգային խորհուրդը՝ 2012 թ. դեկտեմբերին հրապարակած «2030 թ. համաշխարհային միտումներ. այլընտրանքային աշխարհներ» վերլուծության մեջ, որտեղ առանձնացվում են համաշխարհային զարգացումների վրա էապես ազդող չորս հիմնական միտում-գործոնները:

- անհատների դերի աճում,
- ուժի տարաբաշխվածություն, որը կհանգեցնի գերիշխող տերություն չլինելուն և բազմաբևեռ աշխարհի ձևավորմանը,
- ուրբանիզացման արագացում և զարգացած պետություններում բնակչության ծերացում,
- էներգիայի, ջրի և սննդի ռեսուրսների նկատմամբ պահանջարկի կտրուկ աճում, ինչը կհանգեցնի դրանց համար մղվող աշխարհաքաղաքական պայքարի արման¹:

Միջազգային հարաբերություններում անորոշության մակարդակի էական աճման մասին է խոսվում նաև 2015 թ. համաշխարհային տնտեսական համաժողովի հրապարակած «Համաշխարհային ռիսկեր–2015» զեկույցում: Առավել հավանական ռիսկերի թվում նշվում են միջպետական հակամարտությունները, բնակլիմայական աղետները, պետական կառավարման ճգնաժամներն ու պետական համակարգերի փլուզումները, տեղեկույթի սորակորուստն ու ապօրինի ձեռքբերումը, ինչպես նաև կիրճերի արձակումները²:

Այսպիսով՝ կարելի է փաստել, որ անորոշությունները տարաբնույթ են և առնչվում են քաղաքական, տնտեսական, սոցիալական, պետաիրավական, բնապահպանական և այլ ոլորտների:

ՀՀ պարագայում ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների գնահատման գործն էապես բարդանում է Ռուսաստան–Արևմուտք, առաջին հերթին՝ Ռուսաստան–ԱՄՆ, հարաբերությունների ինտենսիվ վատթարացման, ինչպես նաև Մերձավոր Արևելքում էթնիկական, կրոնական ու միջհամայնքային հակասությունների արմամբ ուղեկցվող պետական համակարգերի վերափոխումների և մի շարք պետություններում ընթացող քաղաքացիական պատերազմների հետևանքով: ՀՀ ռազմավարական դաշնակից Ռուսաստանի և գործընկեր ԱՄՆ-ի միջև նոր «սառը պատերազմ» զգալի չափով բարդացնում է ինչպես ՀՀ հավասարակշռված արտաքին քաղաքականության շարունակականության ապահովումը, այնպես էլ որոշումների ընդունման համար գիտական հիմքերի ապահովման նպատակով աշխարհաքաղաքական զարգացումների վերաբերյալ համակարգային վերլուծությունների ու կանխատեսումների կատարումը:

Ռուսաստան–ԱՄՆ և Ռուսաստան–ՆԱՏՕ հարաբերությունների հեռանկարում եղած անորոշությունը նշում են նաև առաջատար արևմտյան վերլուծաբանները և վերլուծական կենտրոնները³: Այսպես, 2015 թ. ապրիլին ԱՄՆ-ի բանակի ռազմական քոլեջի կազմակերպած «Համագործակցությունից դեպի

¹ Տես «Global Trends 2030: Alternative Worlds». National Intelligence Council, December 2012 (http://www.dni.gov/files/documents/GlobalTrends_2030.pdf):

² Տես «Global Risks 2015». World Economic Forum (http://www3.weforum.org/docs/WEF_Global_Risks_2015_Report15.pdf):

³ Տես *Samuel Charap, Jeremy Shapiro*. Consequences of a New Cold War. «Survival: Global Politics and Strategy», 2015, Vol. 57, Issue 2; *Matthew Kroenig*. Facing Reality: Getting NATO Ready for a New Cold War. «Survival: Global Politics and Strategy», 2015, Vol. 57, Issue 1:

մրցակցություն. ԱՄՆ–Ռուսաստան հարաբերությունների ապագան» միջգերատեսչական ձևաչափով ռազմավարական խաղի արդյունքների հիման վրա պատրաստված մշակման մեջ բերվում են այդ հարաբերությունների զարգացման մի շարք հավանական սցենարներ՝ առանց որևէ մեկին նախապատվություն տալու⁴:

ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների գնահատումն զգալի չափով բարդանում է նաև Մերձավոր Արևելքում տեղի ունեցող աշխարհաքաղաքական զարգացումների հետևանքով: 2015 թ. հուլիսի 14-ին Իրանի և 5+1 ձևաչափով գործող պետությունների միջև Իրանի միջուկային ծրագրի վերաբերյալ շրջանակային համաձայնության ձեռքբերումը կարող է զգալի ազդեցություն թողնել տարածաշրջանում աշխարհաքաղաքական զարգացումների վրա: Միևնույն ժամանակ, դժվար կանխատեսելի են այդ համաձայնագրի հետևանքները ինչպես ԱՄՆ – Իրան հարաբերությունների, այնպես էլ տարածաշրջանում ուժային հավասարակշռության համար: Տարածաշրջանի առաջատար մասնագետները փորձում են այս խնդրի վերաբերյալ կատարել վերլուծություններ, սակայն բոլորն էլ ընդունում են անորոշությունների մեծ չափը և դրանով պայմանավորված կանխատեսումներ կատարելու բարդությունը⁵: Տարածաշրջանում առկա անորոշության մակարդակն ավելի է մեծանում չորս պետություններում՝ Լիբիայում, Իրաքում, Սիրիայում, Եմենում, ընթացող քաղաքացիական պատերազմների, շիա–սուննի հակամարտության և քրդական հարցի սրման, «Իսլամական պետության» ստեղծման և Սիրիայի ու Իրաքի զգալի տարածքների նկատմամբ նրա վերահսկողության հաստատման պատճառով: Տարածաշրջանում ներգրավված դերակատարներն ունեն ինչպես հակադիր, այնպես էլ համընկնող շահեր: Որպես օրինակ կարելի է նշել ԱՄՆ-ի և Իրանի շահերի համընկնումը Իրաքում և Սիրիայում «Իսլամական պետության» ազդեցության նվազեցման գործում և, միևնույն ժամանակ, շահերի բախումը Եմենում ընթացող քաղաքացիական պատերազմի հարցում:

Վերը շարադրվածի հաշվառմամբ էական նշանակություն է ստանում ՊՌՎ գործընթացում ռազմավարական վերլուծությունների և դրանց հիման վրա կատարվող կանխատեսումների մշակման ժամանակ նորարարական հետազոտական մեթոդների կիրառումը:

Արդեն ասվեց, որ ՊՌՎ առաջին փուլը ՀՀ ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքների որոշման ու գնահատման փուլն է: Սպառնալիքների որոշման համար կարող են կիրառվել տարբեր մեթոդներ, սակայն լավագույններից մեկը կարող է լինել ՔՏՏՏԻԲ՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական,

⁴ Տես «From Cooperation to Competition – The Future of U.S. – Russian Relations». A Report on an Interdisciplinary Wargame conducted by the U.S. Army War College. Pennsylvania, May 2015 (http://csis.org/files/attachments/150518_Russia_War_Games_Report.pdf):

⁵ Տես *Alireza Nader*. The Days after a Deal with Iran. RAND Corporation, 2014 (http://www.rand.org/content/dam/rand/pubs/perspectives/PE100/PE124/RAND_PE124.pdf); «The Iran Nuclear Deal: RAND Experts Answer Questions About the Days Ahead» (<http://www.rand.org/blog/2015/07/the-iran-nuclear-deal-rand-experts-answer-questions.html>):

տեխնոլոգիական, իրավական, բնապահպանական («PESTLE» – *political, economic, social, technological, legal, environmental*) վերլուծությունը: Տվյալ մեթոդը հնարավորություն է տալիս դասակարգելու պետության վրա ազդող ինչպես ներքին, այնպես էլ արտաքին գործոնները: Օրինակ՝ ՔՏՏՏԻԲ մեթոդի կիրառմամբ ներքին քաղաքական խնդիրների վերհանման առումով ուսումնասիրվում են պետության կառավարման համակարգը, քաղաքական կուսակցությունների կայացածության աստիճանը, օրենքի գերակայության և մարդու իրավունքների պաշտպանության վիճակը, կոռուպցիայի մակարդակը և այլ փոփոխականներ, իսկ արտաքին միջավայրի քաղաքական գործոնների թվում ներառված են հարաբերությունները հարևան պետությունների հետ, տարածքային վեճերը, ռեսուրսների համար մղվող տարածաշրջանային մրցակցությունը, ռազմական դաշինքներին անդամակցությունը, ռազմական փոխգործելիության մակարդակը և այլն: Տնտեսական բաժինը ներքին առումով ներկայացնում է պետության ՀՆԱ-ի և գործազրկության մակարդակը, գնաճը, պետական պարտքը, արտարժույթային փոխարժեքը, օտարերկրյա ներդրումների ծավալը, ձեռնարկչության ազատության աստիճանը և այլն: Իսկ արտաքին առումով՝ այլ պետությունների հետ առևտրատնտեսական հարաբերությունները, անդամակցությունը միջազգային տնտեսական կազմակերպություններին, արտաքին վարկավորման ծավալները, միջազգային շուկայի տատանումները և այլն: Փաստորեն, ՔՏՏՏԻԲ-ը մի մեթոդ է, որը հնարավորություն է տալիս համակարգված ձևով հետազոտելու և ընտրելու պետության անվտանգության վրա ազդող ինչպես ներքին, այնպես էլ արտաքին առավել կարևոր գործոնները⁶:

ՊՌՎ Ժամանակ էական նշանակություն ունի անվտանգային միջավայրի զարգացման սցենարների մշակումը: Այս փուլում հնարավոր է կիրառել գիտական կանխատեսման ավանդական մեթոդները: Սակայն կարող են խնդիրներ ծագել այն պատճառով, որ սցենարներում առաջին հայացքից իրար չհակասող դրույթներն իրականում լինեն իրարամերժ: Նման խնդիրներից խուսափելու համար կիրառվում է սցենարային պլանավորման (*scenario planning*) նորարարական մեթոդը, որը լայնորեն կիրառվում է ռազմավարական դեկավարման և պլանավորման գործում⁷:

Սցենարային պլանավորման մեթոդաբանության առանձնահատկությունն այն է, որ անորոշությունների և միտումների որոշմամբ կառուցվում են տրամաբանական, այսպես կոչված սցենարային մատրիցներ (*scenario matrix*), որոնցում անորոշությունները և միտումները դիտվում են որպես մեկ միասնական համակարգ, ինչը հնարավորություն է տալիս խուսափելու իրարամերժ դրույթներից և հակասական եզրահանգումներից, քանի որ ցանկացած սցենար ներկայացնում է մի ապագա իրավիճակ, որում հստակ կերպով սահմանված են լինում տարբեր տարրերի փոխազդեցությունները: Այսպես. եթե սցենարային պատմությունը դի-

⁶ Տես *Robert Dransfield. Studies in Economics and Business: Corporate Strategy. Oxford, 2001:*

⁷ Տես *Thomas J. Chermack. Scenario Planning in Organizations. How to create, use, and assess scenarios. San Francisco, 2011:*

տենք որպես մեկ միասնական համակարգ, իսկ դրանում առկա երևույթներին և գործընթացներին վերաբերող անորոշությունները և միտումները՝ որպես համակարգի բաղկացուցիչ տարրեր, ապա կարող ենք տեսնել, որ այդ տարրերի փոխազդեցությունները կարող են լինել դրական, բացասական, չեզոք կամ անհայտ: Ուստի սցենարային մատրիցի մեջ առանձին անորոշությունների տեղադրումից հետո դրանք կարող են հանվել սցենարից, եթե մասնագետները տվյալ զարգացումը որակեն որպես անհավանական: Այլ կերպ ասած՝ սցենարային մատրիցները կարող են բեկել միտումները և մեծացնել կամ նվազեցնել այս կամ այն անորոշության իրականացման հավանականությունը: Սցենարային պլանավորման մեջ կիրառվող հիմնական երկու մեթոդներն են անորոշությունների խաչման միջոցով սցենարային մատրիցների կառուցումը և դրանց հիման վրա սցենարների մշակումը, կամ բոլոր հիմնական անորոշությունների ներմուծմամբ հարաբերակցային մատրիցների (*correlation matrix*) կազմումը⁸:

ՊՈՎ-վ ժամանակ կարևորվում է պարզված ներքին և արտաքին գործոնների վերլուծությամբ ռազմավարական պլանավորման համար անհրաժեշտ եզրակացությունների արտաձման փուլը՝ անվտանգային շահերի դեմ ուղղված սպառնալիքների չեզոքացման նպատակով ձեռնարկվելիք գործողությունների մշակմամբ: Տվյալ փուլում որպես հետազոտական մեթոդ կիրառելի է ՍՎՈՏ վերլուծական գործիքը («*SWOT*» – *Strengths* (ուժեղ կողմեր), *Weaknesses* (թույլ կողմեր), *Opportunities* (հնարավորություններ), *Threats* (սպառնալիքներ))⁹: Տվյալ մեթոդը հնարավորություն է տալիս պետության ուժեղ և թույլ կողմերի, ինչպես նաև արտաքին միջավայրից բխող հնարավորությունների և սպառնալիքների ճկուն գնահատմամբ գտնելու պետության առջև ծառայող խնդիրների լուծման տարբերակներ: Եթե պետության ուժեղ և թույլ կողմերը բխում են հենց պետական քաղաքականությունից և կարող են որոշակի առումով լինել վերահսկելի, ապա արտաքին միջավայրով պայմանավորված սպառնալիքները պետության կողմից վերահսկելի չեն: Տվյալ սպառնալիքներից բացի, արտաքին միջավայրում հաճախ ձևավորվում են հնարավորություններ, որոնք պետությունը կարող է օգտագործել ի նպաստ իր անվտանգության: Այս առումով ՍՎՈՏ վերլուծական մեթոդը հնարավորություն է տալիս պետության ուժեղ և թույլ կողմերի հաշվառմամբ հաշվարկելու արտաքին միջավայրից եկող սպառնալիքներին հակազդեցության, ինչպես նաև հնարավորություններն առավելագույնս արդյունավետ կերպով օգտագործելու տարբերակները:

Ռազմավարական պլանավորման գործում մեծ է խաղերի տեսության (*game theory, теория игр*) դերը, երբ մաթեմատիկական մոդելավորման միջոցով դյուրացվում է որոշումների ընդունման գործը: Տվյալ հաշվարկումները կատարվում

⁸ Stu *Torsten Wulf, Christian Brands and Philip Meissner*. A Scenario-based Approach to Strategic Planning: Tool Description – Scenario Matrix. Working Paper 4/2010. Leipzig, 25 June 2010 (http://www.scenarioplanning.eu/fileadmin/user_upload/_imported/fileadmin/user_upload/Tool_Description_Scenario_Matrix.pdf):

⁹ Stu *Lawrence G. Fine*. The SWOT Analysis: Using Your Strength to overcome Weaknesses, Using Opportunities to overcome Threats. CreateSpace Independent Publishing Platform, 2009:

են հակառակորդ կողմի գործողություններում գոյություն ունեցող անորոշությունների հաշվառմամբ: Խաղերի տեսության մեջ եղած տարբեր մեթոդներ հնարավորություն են տալիս ընտրելու գործողությունների օպտիմալ տարբերակներ՝ անկախ հակառակորդ կողմի ընդունած որոշումից: Խաղերի տեսության առանձին մեթոդներ լայնորեն կիրառվում են նաև պաշտպանական-անվտանգային հետազոտություններում¹⁰:

Խաղերի տեսության մեջ քաղաքականության վերլուծության համար կիրառվում է «Որոշումների ծառ» (*decision trees, дерево принятия решений, деревья классификации, регрессионные деревья*) մեթոդը: Դրա նպատակն է արդյունավետ քաղաքական ուղեգծի ընտրության ապահովումը: Այս մեթոդով վերլուծվում են այլընտրանքային որոշումները: Այսպես. եթե պետության ղեկավարությունը դժվարանում է նախապատվություն տալ Ա կամ Բ քաղաքական ուղեգծին, նա իրեն սպասարկող հետազոտական կենտրոններին հանձնարարում է տվյալ մեթոդի կիրառմամբ հաշվարկումներ կատարել և ներկայացնել որոշման արդյունավետ տարբերակը¹¹:

ՊՈՎ ժամանակ կարող են օգտակար լինել նաև վերլուծությունները «Կարմիրների թիմակազմման» (*red teaming*) միջոցով: Սա ռազմավարական գնահատման նպատակներին ծառայող մի հետազոտական մեթոդ է, որի էությունն այն է, որ դերային խաղերում վերլուծաբանների խումբը հանդես է գալիս հակառակորդի դերում («կարմիրների խումբ» – *red team, красные*), որպեսզի հայտնաբերի իր պլաններում, ծրագրերում կամ քաղաքական ուղեգծում եղած խոցելի կետերը: Տվյալ մեթոդը լայնորեն կիրառվել է ԱՄՆ-ում հատկապես «սառը պատերազմի» տարիներին, երբ «կարմիրները» խորհրդանշում էին ԽՍՀՄ-ը¹²:

Ամփոփելով՝ նշենք, որ ՊՈՎ ժամանակ ռազմավարական պլանավորման արդյունավետության մեծացման համար կարևոր է տարբեր հետազոտական մեթոդների կիրառումը: Ընդհանուր առմամբ հողվածում քննարկված մեթոդները կարող են լայնորեն կիրառվել ՊՈՎ արդյունքների հիման վրա միջնաժամկետ ծրագրերի մշակման գործում և բարելավել պլանավորման որակն ու հիմնավորվածությունը:

¹⁰ Տես *Avinash K. Dixit, Susan Skeath, David Reiley. Games of strategy. New York, 2009*; նաև՝ *Մ. Ս. Ավետիսյան, Ռազմավարական խաղերի էությունը և կազմակերպումը: «ՀԲ», 2014, հմ. 3–4*:

¹¹ Տես *Edith Stokey, Richard Zeckhauser. A primer for policy analysis. New York, London, 1978*:

¹² Տես *Susan Craig. Reflections from a red team leader. «Military Review», March-April 2007, Vol. 87, Issue 2*:

О ПРИМЕНЕНИИ НЕКОТОРЫХ ИННОВАЦИОННЫХ
МЕТОДОВ ИССЛЕДОВАНИЯ
В ПРОЦЕССЕ СТРАТЕГИЧЕСКОГО ПЕРЕСМОТРА ОБОРОНЫ

*Б. П. ПОГОСЯН, кандидат исторических наук, заместитель Начальника–
начальник Аналитического центра ИНСИ МО РА,
М. С. АВЕТИСЯН, кандидат политических наук, руководитель группы
стратегических игр Аналитического центра ИНСИ МО РА*

РЕЗЮМЕ

В настоящее время международные отношения характеризуются возрастанием степени неопределенности, что существенно затрудняет обеспечение валидности среднесрочных и долгосрочных прогнозов. К нелинейным процессам и основным факторам, способствующим росту неопределенности, следует в первую очередь отнести: возрастание роли личности; децентрализацию силы, чреватую переходом от мироустройства с доминированием одной державы к многополярной модели; ускорение процессов урбанизации и старение населения в развитых странах; резкое возрастание потребностей в энергии, воде и пище, в результате чего обострится борьба за обладание их ресурсами; рост влияния коммуникационно-информационных технологий и т. д.

Дестабилизации политической и военно-политической обстановки в мире и возрастанию турбулентности международных процессов, влияющих на безопасностную среду вокруг Армении способствуют: ухудшение отношений между ее стратегическим союзником Россией и партнером США; чрезвычайной обостренностью обстановки на Большом Ближнем Востоке с гражданскими войнами в Ираке, Сирии, Йемене и Ливии; обострение отношений суннитов с шиитами и в среде самих суннитов.

Все эти факторы затрудняют процесс определения основных внешних угроз безопасности РА и разработку взвешенной стратегии их парирования.

В подобной геополитической ситуации для успешного осуществления процесса Стратегического пересмотра обороны насущной необходимостью является применение инновационных методов исследования, таких, как сценарное планирование, PESTLE-анализ (политический, экономический, социальный, технологический, правовой, экологический), SWOT-анализ, метод «Дерева принятия решений», составление «команды красных» (т. е. рассмотрение предлагаемых мер со стороны «противника» в целях выявления уязвимых моментов в плане). Эти методы широко используют государственные и частные мозговые центры на Западе, обслуживая процесс принятия стратегических решений своевременным анализом и стратегическим прогнозом развития обстановки.

ON THE USE OF SOME INNOVATIVE RESEARCH METHODS IN THE STRATEGIC DEFENSE REVIEW

B. P. POGHOSYAN, PhD in History, Deputy Director – Head of Analytical Center, INSS, MOD, RA, M. S. AVETISYAN, PhD in Political Science, Head of Strategic Gaming Group, Analytical Center, INSS, MOD, RA

SUMMARY

At present, international relations are characterized by the increase in the degree of uncertainty that makes it difficult to ensure the validity of the mid- and long-term forecasts. The non-linear processes and key factors contributing to the uncertainty first of all are: the growing role of the individual; the diffusion of power fraught with transition from a world order dominated by a single power to a multipolar model; the acceleration of urbanization and aging populations in developed countries; the dramatic increase in demand for energy, food and water, resulting in a sharp struggle for the possession of their resources; the growing influence of communication and information technologies, etc.

The deterioration of relations between Russia and the US (the first is the strategic ally of Armenia, and the second is a partner country), the extreme exacerbation of the situation in the Greater Middle East due to the civil wars in Iraq, Syria, Yemen and Libya, the aggravation of relations between Sunnis and Shiites, and among the Sunnis themselves contribute to the destabilization of political and military-political situation in the world and the increase of the turbulence in international processes affecting the security environment around Armenia.

All these factors make it difficult to identify the main external threats to the security of Armenia and to develop a balanced strategy for countering them.

In such a geopolitical situation for the successful implementation of the Strategic Defense Review there is an urgent need to use innovative research methods, such as scenario planning, PESTLE-analysis (political, economic, social, technological, legal, environmental), SWOT-analysis, decision trees, red teaming (i.e. an adversary-based assessment of offered measures for identifying vulnerable points in the plan). Western public and private think tanks widely use these methods, serving the process of strategic decision-making with timely analysis and strategic forecast.

**СОСТОЯНИЕ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ
ВОЕННОЙ СОСТАВЛЯЮЩЕЙ ОРГАНИЗАЦИИ
ДОГОВОРА О КОЛЛЕКТИВНОЙ БЕЗОПАСНОСТИ**

А. И. СТУДЕНИКИН, генерал-лейтенант, Начальник Объединенного штаба ОДКБ, А. С. ЯКОВЛЕВ, генерал-лейтенант, Начальник Управления координации планирования, применения и подготовки Вооруженных сил Объединенного штаба ОДКБ, А. А. ВОРОНИН, полковник, старший офицер-оператор направления совместной оперативной и боевой подготовки Управления координации планирования, применения и подготовки Вооруженных сил Объединенного штаба ОДКБ



Многовековой опыт международных отношений показывает, что послевоенный мир строится на основе баланса сил группировок государств, возникающих, как правило, после окончания войн. Устанавливающееся равновесие создает на определенное время относительную безопасность, обеспечивает миропорядок и стабильность¹. Достижению равновесия способствует объединение государств в блоки и союзы, в том числе, военно-политические. Тем самым государства компенсируют свою уязвимость в связи с недостатками ресурсов и силы. Поэтому «сохраняет актуальность опыт политического развития сообщества государств, веками стремящихся к разрешению межгосударственных споров путем военных конфликтов и крупномасштабных войн и к приобретению на этом пути союзников. Создание военно-политических союзов – коалиций – неперенная черта многовековой истории человечества»². Не является исключением и современный период времени.

Одним из таких военно-политических союзов, действующим на части постсоветского пространства, является Организация Договора о коллективной безопасности (далее – ОДКБ, Организация).

Организация была создана в 2002 году на основе Договора о коллектив-

ной безопасности от 15 мая 1992 года. Это военно-политический союз независимых демократических государств, объединенных общими интересами в области политики безопасности, осуществляющих свою внешнеполитическую деятельность на основе четкой координации и согласования коллективных усилий и инициатив, предпринимаемых в строгом соответствии с Уставом Организации Объединенных Наций, решениями Совета Безопасности ООН и другими общепризнанными принципами и нормами международного права. В настоящее время государствами-членами Организации являются: Республика Армения, Республика Беларусь, Республика Казахстан, Кыргызская Республика, Российская Федерация и Республика Таджикистан.

Целями Организации являются укрепление мира, международной и региональной безопасности и стабильности, защита на коллективной основе независимости, территориальной целостности и суверенитета государств-членов, приоритет в достижении которых отдается политическим средствам.

Учитывая опыт коалиционного военного строительства, а также выводы из оценки развития военно-политической обстановки, в границах ответственности Организации условно выделены три наиболее значимых региона коллективной безопасности по географическому расположению государств-членов:

1. Восточно-Европейский регион по направлению Российская Федерация – Республика Беларусь.

2. Кавказский регион, включающий Республику Армения и соответствующую часть Российской Федерации.

3. Центрально-Азиатский регион, объединяющий Российскую Федерацию, Республику Казахстан, Кыргызскую Республику и Республику Таджикистан.

За более чем 20-летнее существование Организации Договора о коллективной безопасности в регионах коллективной безопасности уставными органами ОДКБ были приняты соответствующие решения, создана нормативная правовая база, регламентирующая вопросы создания, функционирования, подготовки и применения сил и средств системы коллективной безопасности.

В числе международных договоров, в первую очередь, необходимо выделить *Договор о коллективной безопасности*³. С учетом внесенных в него в 2010 году изменений, Статья 4 данного Договора гласит, что агрессия (вооруженное нападение, угрожающее безопасности, стабильности, территориальной целостности и суверенитету) против одной из сторон Договора будет рассматриваться государствами-участниками как агрессия (вооруженное нападение, угрожающее безопасности, стабильности, территориальной целостности и суверенитету) на все государства-участники настоящего Договора о коллективной безопасности. В этом случае все остальные государства-участники по просьбе этого государства-участника незамедлительно предоставят ему необходимую помощь, включая военную, а также окажут поддержку находящимся в их распоряжении средствами в порядке осуществления права на коллективную оборону в соответствии со Статьей 51 Устава ООН⁴.

Еще одним важнейшим документом является *Устав ОДКБ*. Именно с

принятием Устава Организация Договора о коллективной безопасности сформировалась как региональная международная организация⁵.

Устав ОДКБ содержит целый ряд основополагающих для системы коллективной безопасности норм, в который также, как и в Договор, своевременно вносятся изменения. В частности, Статья 7 устанавливает, что для достижения целей Организации государства–члены принимают совместные меры к формированию в ее рамках действенной системы коллективной безопасности, обеспечивающей коллективную защиту в случае возникновения угрозы безопасности, стабильности, территориальной целостности и суверенитету и реализацию права на коллективную оборону, включая создание коалиционных (коллективных) сил Организации, региональных (объединенных) группировок войск (сил), миротворческих сил, объединенных систем и органов управления ими, военной инфраструктуры. Государства–члены также взаимодействуют в сферах военно-технического (военно-экономического) сотрудничества, обеспечения вооруженных сил, правоохранительных органов и специальных служб необходимым вооружением, военной, специальной техникой и специальными средствами, подготовки военных кадров и специалистов для национальных вооруженных сил, специальных служб и правоохранительных органов⁶.

Практическая реализация норм и положений, заложенных в нормативной правовой базе Организации, позволила создать и обеспечить функционирование действенной системы коллективной безопасности ОДКБ, как совокупности органов ОДКБ, национальных органов государственного управления государств–членов ОДКБ, а также сил и средств государств–членов ОДКБ, обеспечивающих в соответствии с международным правом и национальным законодательством коллективную защиту интересов, суверенитета и территориальной целостности государств–членов ОДКБ.

Основными принципами формирования и функционирования системы коллективной безопасности ОДКБ являются:

- оборонительный характер системы коллективной безопасности;
- неделимость коллективной безопасности и равный уровень безопасности для всех государств–членов ОДКБ;
- равная ответственность государств–членов ОДКБ за обеспечение коллективной безопасности;
- коллективность самообороны, предусматривающая участие государств–членов ОДКБ в отражении вооруженного нападения (агрессии) на коалиционной и/или региональной основе;
- соблюдение территориальной целостности, уважение суверенитета и национальных интересов, невмешательство во внутренние дела друг друга;
- недопустимость использования сил и средств системы коллективной безопасности для разрешения споров между государствами–членами ОДКБ;
- формирование и развитие системы коллективной безопасности на коалиционной и региональной основах.

Основными органами Организации, в компетенции которых находятся вопросы развития военной составляющей системы коллективной безопасности, являются⁷:

Совет коллективной безопасности – высший орган Организации, который рассматривает принципиальные вопросы деятельности Организации и принимает решения, направленные на реализацию ее целей и задач, а также обеспечивает координацию и совместную деятельность государств–членов для реализации этих целей. В его состав входят главы государств–членов ОДКБ.

Совет министров обороны – консультативный и исполнительный орган Организации по вопросам координации взаимодействия государств–членов ОДКБ в области военной политики, военного строительства и военно-технического сотрудничества.

Военный комитет – создан при Совете министров обороны в целях оперативного рассмотрения вопросов планирования и применения сил и средств системы коллективной безопасности ОДКБ и подготовки необходимых предложений Совету министров обороны.

Объединенный штаб ОДКБ – как постоянно действующий рабочий орган Организации и Совета министров обороны, отвечает за подготовку предложений и реализацию решений по военной составляющей ОДКБ.

На Объединенный штаб ОДКБ возложены задачи, связанные с формированием и функционированием сил и средств системы коллективной безопасности, а также разработкой совместно с министерствами обороны предложений по подготовке и проведению совместных мероприятий оперативной и боевой подготовки в интересах коллективной обороны.

Ключевым элементом системы коллективной безопасности являются силы и средства, предназначенные для участия в решении широкого спектра задач, в том числе:

- в предотвращении угрозы и отражении вооруженного нападения (агрессии) в отношении одного или нескольких государств–членов ОДКБ, локализации вооруженных акций и конфликтов;

- в мероприятиях по противодействию вызовам и угрозам безопасности государств–членов ОДКБ, включая борьбу с международным терроризмом, незаконным оборотом наркотических средств, психотропных веществ и их прекурсоров, оружия и боеприпасов, другими видами транснациональной организованной преступности;

- в выполнении мероприятий по защите населения от опасностей, возникающих при ведении военных действий или вследствие этих действий, в ликвидации чрезвычайных ситуаций и оказании чрезвычайной гуманитарной помощи;

- в усилении охраны государственных границ, а также государственных и военных объектов государств–членов ОДКБ;

- в миротворческих операциях;

– для решения иных задач, определенных Советом коллективной безопасности ОДКБ.

При этом необходимо отметить, что формирование сил и средств системы коллективной безопасности ОДКБ осуществляется как на многосторонней, так и на двусторонней основе.

В Восточно-Европейском регионе в рамках союзного государства, а также в **Кавказском регионе** на основе двусторонних соглашений Армении и России созданы соответствующие региональные группировки войск (сил).

Спланировано их применение, решаются вопросы их всестороннего обеспечения и развития систем управления. Ежегодно с органами управления и войсками (силами) из состава данных группировок проводятся совместные мероприятия оперативной и боевой подготовки.

В Центрально-Азиатском регионе коллективной безопасности деятельность по развитию военной составляющей осуществляется как на многосторонней, так двусторонней основах. Рассмотрим кратко результаты многосторонней деятельности.

Важным достижением государств региона стало создание в 2001 году **Коллективных сил быстрого развертывания Центрально-Азиатского региона (КСБР ЦАР)**, способных оперативно противостоять проявлениям международного терроризма и другим угрозам безопасности в регионе. В состав КСБР ЦАР входят подразделения от Вооруженных сил четырех государств: Республики Казахстан, Кыргызской Республики, Российской Федерации и Республики Таджикистан. Общая численность КСБР ЦАР на сегодня составляет около 5 тыс. человек. Это высоко подготовленные, хорошо технически оснащенные, преимущественно десантно-штурмовые и горно-стрелковые подразделения государств-членов ОДКБ ЦАР.

В 2009 году созданы **Коллективные силы оперативного реагирования (КСОР) ОДКБ**, которые являются универсальным инструментом в системе коллективной безопасности, позволяющим адекватно реагировать на все существующие вызовы и угрозы. Для комплектования КСОР государства-члены ОДКБ выделяют, наряду с воинскими контингентами, формирования сил специального назначения (национальной безопасности, внутренних дел, МЧС, наркоконтроля), оснащенные современным и совместимым вооружением, военной (специальной) техникой. В 2012 году утверждена Целевая межгосударственная программа оснащения КСОР современными вооружением, военной и специальной техникой, а также спецсредствами. Общая численность КСОР составляет около 20 тыс. человек.

В 2010 году завершено создание **Миротворческих сил ОДКБ**, из числа которых на период проведения миротворческой операции государствами-членами ОДКБ выделяются части (подразделения) для формирования Коллективных миротворческих сил, включающие в свой состав военный, милицейский (полицейский) и гражданский персонал. В этой связи сегодня можно констатировать, что Организация имеет собственный инструмент

миротворческой деятельности, который может применяться как по мандату ОДКБ, так и по мандату ООН⁸. С этой целью спланировано развитие Миротворческих сил ОДКБ по единым для ОДКБ программам, а также оснащение их едиными или совместимыми образцами вооружения, военной техники и связи. Продолжается работа по дальнейшему совершенствованию нормативной правовой базы миротворческой деятельности ОДКБ. В настоящее время общая численность Миротворческих сил ОДКБ – около 4 тыс. человек.

Поддержание высокой боевой готовности группировок вооруженных сил, сохранение боеспособности и создание благоприятных условий для успешного и своевременного выполнения поставленных задач предполагает всестороннее обеспечение войск. Опыт войн и военных конфликтов, изменившаяся закономерность вооруженной борьбы – «зависимость хода и исхода боевых действий от результатов противоборства в воздушно-космической сфере и от результатов первого периода военного конфликта»⁹ – обязывает создавать в том числе и системы противовоздушной обороны, а в перспективе – и противоракетной обороны. Уже сегодня образованы и приступили к выполнению задач по предназначению силы и средства Единой региональной системы ПВО Российской Федерации и Республики Беларусь, на завершающем этапе внутригосударственного согласования находится Соглашение о создании объединенной региональной системы ПВО Республики Армения и Российской Федерации. Ратифицировано Соглашение о создании Единой региональной системы ПВО Российской Федерации и Республики Казахстан, которое до завершения процедур согласования, подписания и ратификации многостороннего Соглашения о создании Объединенной системы ПВО в Центральном-Азиатском регионе коллективной безопасности призвано решать задачи противовоздушной обороны в регионе на двусторонней основе.

Можно сказать, что в Организации в целом созданы необходимые условия для адекватного реагирования на вызовы и угрозы военной безопасности, а также реализации права на индивидуальную или коллективную самооборону в соответствии со Статьей 51 Устава ООН.

Вместе с тем, перспективы развития военно-политической обстановки показывают, что угроз безопасности нашим государствам не становится меньше. «Глобализация сопровождается широким выходом на международную арену негосударственных субъектов, как конструктивных, так и деструктивных. Угрозы, генерируемые деструктивными негосударственными субъектами, дополняют традиционные угрозы, исходящие от государств»¹⁰. В этой связи постоянно проводится обобщение и оценка информации о военно-политической обстановке в регионах коллективной безопасности. Однако мало знать обстановку. Важно знать и свои возможности, которые требуется соотносить со сценариями и прогнозами военно-политической обстановки. «Пока отсутствуют надежные методы дезэскалации военных действий, их развитие трудно предугадать»¹¹. Это требует про-

ведения систематического анализа состояния дел в сфере обеспечения военной безопасности государств–членов Организации и выработку своевременных мер по совершенствованию военной составляющей.

Для эффективного реагирования на существующие и возможные военные угрозы в Организации на межгосударственном уровне сформированы механизмы выработки и принятия решений на основе консенсуса. Так, например, Объединенным штабом ОДКБ совместно с министерствами обороны государств–членов Организации разработаны мероприятия по реализации основных направлений развития военного сотрудничества государств–членов ОДКБ, которые стали программой действий по совершенствованию военной составляющей Организации на среднесрочную перспективу.

На сегодняшний день является очевидной задача интегрирования сил и средств системы коллективной безопасности в Войска (Коллективные силы) ОДКБ, то есть объединение уже созданных и вновь формируемых компонентов в целостную и действенную систему коллективной безопасности. В интересах ее решения спланированы к реализации соответствующие мероприятия.

В первую очередь – это нормативное правовое закрепление положения и статуса Войск (Коллективных сил) ОДКБ и последующая интеграция в их состав существующих и создаваемых компонентов, таких как авиационные силы и силы специальных операций. Также необходимо отметить, что значительный объем мероприятий спланирован в рамках решения задачи по созданию и развитию объединенных (единых) военных систем.

При этом наиболее важной и в то же время чрезвычайно сложной задачей, как в организационном, так и в техническом отношении, является формирование эффективной системы управления Войсками (Коллективными силами) ОДКБ. Не вызывает сомнения, что система управления должна базироваться на существующих системах управления Вооруженных сил государств–членов Организации.

Важной задачей является и планирование оперативного развертывания Войск (Коллективных сил) на территориях государств–членов ОДКБ. При этом действия группировок Войск (Коллективных сил) ОДКБ будут эффективными только тогда, когда они будут применяться по единому замыслу и плану под управлением подготовленных и слаженных органов управления, оснащенных современными и совместимыми средствами управления. Что касается пунктов управления, то наиболее реалистичным представляется подход, при котором управление Войсками (Коллективными силами) будет осуществляться с существующих пунктов управления Вооруженных сил государств–членов ОДКБ.

Вместе с тем, при проведении в регионах коллективной безопасности контртеррористических операций, ликвидации внутренних вооруженных конфликтов, выполнении мероприятий по защите населения от опасностей, возникающих при ведении и вследствие военных действий, а также ликвидации чрезвычайных ситуаций и оказании гуманитарной помощи, руковод-

ство привлекаемыми Войсками (Коллективными силами) ОДКБ планируется возлагать на органы военного управления принимающего государства.

Еще одной приоритетной задачей в рамках реализации основных направлений развития военного сотрудничества является завершение создания объединенных (единых) систем противовоздушной обороны в регионах коллективной безопасности с последующим их интегрированием в Единую (Объединенную) систему противовоздушной и противоракетной обороны ОДКБ.

Важно отметить, что подготовка и применение Войск (Коллективных сил) ОДКБ невозможны без должного материально-технического обеспечения. Исходя из этого, важнейшим вопросом является создание запасов вооружения, военной и специальной техники, материальных средств на случай кризисных ситуаций, а также совершенствование механизма, позволяющего оперативно оказывать военную и военно-техническую помощь тогда, когда она нужна больше всего.

Ключевая роль по координации усилий в решении всего спектра задач коалиционного военного строительства отводится Объединенному штабу ОДКБ. Поэтому совершенствование его деятельности, работа по приведению его структуры и функций в соответствие с решаемыми и перспективными задачами являются актуальными. Результатом должно стать создание органа управления, отвечающего современным требованиям, способного в любых условиях обстановки эффективно осуществлять координацию действий по оперативному управлению Войсками (Коллективными силами) ОДКБ, а при необходимости взять на себя управление их отдельными компонентами.

Бесспорно, самая совершенная система, будь она техническая или организационная, без подготовленных кадров теряет свои системные свойства. В связи с этим, для решения задачи подготовки кадров и специалистов в Организации созданы базовые организации на основе ряда учреждений и организаций, в которых осуществляется совместная подготовка кадров и специалистов на безвозмездных или льготных условиях для Вооруженных сил государств-членов ОДКБ.

Требованием времени также является обеспечение мероприятий коалиционного военного строительства и боевого применения войск научно обоснованными рекомендациями, «внедрение механизмов планирования, обеспечивающих четкую связь долгосрочных планов военного строительства, среднесрочных целевых военно-технических программ и ежегодных военных бюджетов»¹². В первую очередь это требование распространяется на формат ОДКБ как юридически оформленного оборонного союза, который, в отличие от формата СНГ, реализует на практике вопросы боевого применения войск (сил) в военное время.

Одновременно на первый план сегодня ставятся вопросы обеспечения боевой готовности соединений и частей, выделенных государствами-членами в состав Войск (Коллективных сил) ОДКБ, повышения требований

к их боевой подготовке. На плановой основе осуществляется совместная оперативная и боевая подготовка органов управления и национальных формирований государств–членов ОДКБ. Высшей формой подготовки, своего рода экзаменом для командиров, штабов и войск Коллективных сил являются ежегодные совместные учения, проводимые в формате ОДКБ, в том числе: «Рубеж» – совместные КШУ с национальными формированиями (контингентами) КСБР ЦАР; «Нерушимое братство» – совместные учения с миротворческими силами ОДКБ; «Взаимодействие» – совместные учения с КСОР ОДКБ. На таких учениях отрабатываются варианты возможных действий, которые в последующем становятся основой при принятии решения на применение Коллективных сил в реальных условиях обстановки. Таким образом, состояние основных элементов военной составляющей сил и средств системы коллективной безопасности Организации и перспективы ее развития определяются в строгом соответствии с принципами международного военного права и имеют плановую положительную динамику. Оборонная направленность и укрепление роли военной составляющей ОДКБ способствуют укреплению безопасности в границах ответственности. Как следствие, деятельность Организации Договора о коллективной безопасности как реальной силы с международным статусом носит трансрегиональный характер и способствует, в свою очередь, и укреплению общеевропейской системы безопасности в целом¹³.

¹ В. В. Бруз. Деятельность Организации Варшавского Договора по обеспечению европейской безопасности. Историографическое исследование. Диссертация на соискание степени доктора исторических наук. М., 2008.

² С. Н. Михалев. Военная стратегия. Подготовка и ведение войн Нового и Новейшего времени. М., 2003.

³ «Российская газета», 23 мая 1992 г.; Официальный сайт «Организации Договора о коллективной безопасности» (<http://www.odkb-csto.org>).

⁴ «Собрание законодательства РФ», 11 февраля 2013 г., № 6, с. 466.

⁵ «Собрание законодательства РФ», 19 января 2004 г., № 3, с. 163.

⁶ «Собрание законодательства РФ», 11 февраля 2013 г., № 6, с. 467.

⁷ Официальный сайт «Организации Договора о коллективной безопасности» (<http://www.odkb-csto.org>).

⁸ «Соглашение о миротворческой деятельности». «Собрание законодательства РФ», 23 марта 2009 г., № 12, с. 1369.

⁹ В. В. Шувертков, С. В. Вайнилович. Новые времена – новые подходы. Воздушно-космическая оборона, 2012, № 1 (<http://vko.newlinemedia.ru/articles/novye-vremena-novye-podhody>).

¹⁰ С. А. Лобов, В. Н. Ляпоров, А. М. Гончаров и другие. Угрозы национальной безопасности России (военные угрозы). Монография. Тверь.

¹¹ Е. С. Сиротинин. Сдерживание агрессии в контексте новой Военной доктрины Российской Федерации. «Военная мысль», 2010, № 5.

¹² С. В. Ягольников. Актуальные вопросы повышения эффективности деятельности базовых организаций государств–участников СНГ. «Вестник Академии военных наук», 2013, № 3 (44).

¹³ А. М. Смирнов. Современные российские подходы к обеспечению европейской безопасности. «Армия и общество», 2013, № 5 (37).

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

**ՀԱՎԱԶՄԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱԿԱՆ ԲԱՂԱԳՐԻՉԻ
ՎԻՃԱԿՆ ՈՒ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

*Ա. Ի. ՄՏՈՒԳԵՆԻԿԻՆ, գեներալ-լեյտենանտ, ՀԱՊԿ-ի Միացյալ շտաբի պետ,
Ա. Ս. ՅԱԿՈՎԼԵՎ, գեներալ-լեյտենանտ, ՀԱՊԿ-ի Միացյալ շտաբի ԶՈՒ-ի
պլանավորման, կիրառման և պարբերական համադասման վարչության պետ,
Ա. Ա. ՎՈՐՈՆԻՆ, գեներալ-լեյտենանտ, ՀԱՊԿ-ի Միացյալ շտաբի ԶՈՒ-ի պլանավորման,
կիրառման և պարբերական համադասման վարչության համարեղ օպերատիվ
և մարտական պարբերական ուղղության ավագ սպա-օպերատոր*

ԱՄՓՈՓՈՒՄ

Խաղաղության, միջազգային ու տարածաշրջանային անվտանգության և կայուն զարգացման ճարտարապետությունում իր ուրույն տեղն ունի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի Կազմակերպությունը, որում անվտանգության քաղաքականության ոլորտում ունեցած ընդհանուր շահերի հիման վրա միավորված են Բելառուսի Հանրապետությունը, Հայաստանի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզստանի Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը և Տաջիկստանի Հանրապետությունը:

Կազմակերպության պատասխանատվության սահմաններում աշխարհագրական սկզբունքով առանձնացված են կոլեկտիվ անվտանգության երեք խոշոր տարածաշրջան՝ Արևելավրոպական (Ռուսաստան–Բելառուս), Կովկասյան (Հայաստան–Ռուսաստանի համապատասխան մասը) և Կենտրոնասիական (Ռուսաստան, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան):

Կոլեկտիվ անվտանգության համակարգի առանցքային տարրն են Կազմակերպության ուժերն ու միջոցները, որոնք կազմավորվում են ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ հիմունքներով: Ըստ այդմ՝ Կովկասյան տարածաշրջանում ՀՀ-ի և ՌԴ-ի միջև երկկողմ պայմանագրի հիման վրա ստեղծվել են գորբերի (ուժերի) տարածաշրջանային խմբավորում, ՀՕՊ-ի միացյալ համակարգ:

Որպես ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի զարգացման գործում մեծ նվաճումներ հարկ է նշել Օպերատիվ արձագանքման հավաքական ուժերի (2009 թ.), Խաղաղարար ուժերի (2010 թ.) ստեղծումը, ռազմատեխնիկական ու ռազմակրթական ոլորտներում համագործակցության ընդլայնումն ու սերտացումը, գորքերի համատեղ պատրաստման պլանների մշակումն ու իրագործումը համատեղ գորավարժությունների ձևով:

Քանի որ դաշնադրային ռազմական շինարարության բոլոր խնդիրների լուծման համար գործադրվող ջանքերի համադասման գործում հանգուցային դեր ունի ՀԱՊԿ-ի Միացյալ շտաբը, ապա առանձնակի կարևորություն է տրվում դրա կառուցվածքի, գործառնությունների ու գործունեության մեխանիզմների կատարելագործմանը, ինչը էապես կնպաստի ՀԱՊԿ-ի ռազմական բաղադրիչի նպատակային զարգացմանն ու անընդհատ փոփոխվող և ուժգնացող միջազգային սպառնալիքների արդյունավետ հետմղմանը մշտապես պատրաստ կոլեկտիվ ռազմապաշտպանական համակարգի ստեղծմանը:

INTERNATIONAL SECURITY

**THE STATE AND PERSPECTIVES OF DEVELOPING
THE MILITARY COMPONENT OF THE COLLECTIVE SECURITY
TREATY ORGANIZATION**

A. I. STUDENIKIN, Lieutenant General, Chief of the CSTO Joint Staff,

*A. S. YAKOVLEV, Lieutenant General, Chief of Department, Coordination of Planning,
Applying and Training of the Armed Forces of the CSTO Joint Staff,*

*A. A. VORONIN, Colonel, Senior Officer-Operator, Direction of Joint Operational
and Combat Training, Department of Coordination of Planning, Applying and Training
of the Armed Forces of the CSTO Joint Staff*

SUMMARY

The Collective Security Treaty Organization (CSTO), which unites the Republics of Armenia, Belarus, Kazakhstan, Tajikistan, the Kyrgyz Republic, and the Russian Federation in terms of common interests in the field of security policy, has a special place in the peace, international and regional security, and sustainable development architecture.

Three major regions of collective security have been geographically separated within the framework of the Organization's responsibility: East European (Russia–Belarus), Caucasian (Armenia–Russia's relevant part), and Central Asian (Russia, Kazakhstan, Kyrgyzstan, Tajikistan) ones.

The key elements of the collective security system are the Organization's forces and means, which are formed both on the multilateral and bilateral ground. Accordingly, based on the bilateral agreement between Armenia and Russia the regional grouping of troops (forces) and the Joint Air Defense System were formed in the Caucasian region.

The creation of the Collective Rapid Reaction Force (2009) and Peacekeeping Forces (2010), extension and strengthening of cooperation in the military-technical field and the sphere of military education, and development and implementation of troops' joint preparation plans in the form of joint military exercises should be noted as achievements in the development of the CSTO's military component.

Since the CSTO Joint Staff has a pivotal role in coordinating the efforts for solving all the problems of the coalition military construction, it is especially important to improve its structure, functions, and mechanisms of its activities. That will significantly contribute to the action-oriented development of the CSTO's military component and the formation of the collective military defense system—always ready to efficiently counter constantly changing and increasing international threats.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ
ՋԻՆՎԱԾ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ
ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ**

*Հ. Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ, արդարադատության գնդապետ, իրավաբանական
գիտությունների թեկնածու, ՌԴ ՊՆ Ռ-ազմական համալսարանի
քրեագիտության ամբիոնի դոկտորանդ*

Միջազգային իրավունքի տեսության մեջ և պետությունների միջև հարաբերությունների պրակտիկայում «զինված հակամարտություն» հասկացությունն առաջին անգամ կիրառվել է պատերազմի զոհերի պաշտպանության մասին 1949 թ. օգոստոսի 12-ին ընդունված Ժնևյան բոլոր կոնվենցիաների համար ընդհանուր 2-րդ և 3-րդ հոդվածներում: Պետությունների միջև և դրանց ներսում տեղի ունեցող զինված պայքարի էությունն ավելի պարզ դարձնելու նպատակով տարանջատվել են «միջազգային զինված հակամարտություն» և «ոչ միջազգային զինված հակամարտություն» հասկացությունները, որոնց բացատրությունները տրվում են պատերազմի զոհերի պաշտպանության մասին Ժնևյան կոնվենցիաների (1949 թ.) Լրացուցիչ արձանագրություններում (1977 թ.):



Միևնույն ժամանակ հարկ է շեշտել, որ տվյալ կոնվենցիաներում և Լրացուցիչ արձանագրություններում ձևակերպված սահմանումները տարբեր մեկնաբանությունների տեղիք են տալիս, որովհետև միջազգային իրավունքի ոլորտում հստակորեն սահմանված չեն դրանց բաղադրիչները, այսինքն՝ ճշգրտված չեն այն հասկացություններն ու տերմինները, որոնց միջոցով պարզաբանվում է միջազգային զինված հակամարտությունների էությունը¹:

1-ին Լրացուցիչ արձանագրության (1977 թ.) 1-ին հոդվածի 4-րդ կետը բովանդակում է *միջազգային զինված հակամարտությունների* սահմանումը, ըստ որի՝ դրանք այն իրավիճակներն են, երբ «...ժողովուրդները պայքարում են զաղութատիրության և օտարերկրյա բռնազավթման ռասիստական վարչակար-

¹ Տես *М. С. Черноудова. Понятие конфликта в международном праве. «Московская школа конфликтологии»* (<http://conflictmanagement.ru/ponyatie-konflikta-v-mezhdunarodnom-prave>); *А. И. Рыжов. Юридические дефиниции в международном праве (на примере понятий «война», «вооруженный конфликт международного характера», «вооруженный конфликт немеждународного характера»)*. «Юридическая техника», 2007, № 1 (<http://cyberleninka.ru/article/n/yuridicheskie-definitsii-v-mezhdunarodnom-prave-na-primere-ponyatiy-voyna-vooruzhenny-konflikt-mezhdunarodnogo-haraktera>):

գերի դեմ՝ իրականացնելով ինքնորոշման իրենց իրավունքը, որն ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությունում և պետությունների միջև՝ Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությանը համապատասխան, բարեկամական հարաբերություններին և համագործակցությանն առնչվող միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում»²:

1949 թ. Ժնևյան կոնվենցիաների համար ընդհանուր 2-րդ հոդվածով սահմանվում է, որ «... կոնվենցիան կիրառվելու է հայտարարված պատերազմի կամ երկու կամ մի քանի Բարձր Պայմանավորվող Կողմերի միջև ծագող ցանկացած այլ զինված հակամարտության դեպքում, նույնիսկ եթե դրանցից մեկը չի ընդունում, որ գտնվում է պատերազմական վիճակում»³: Այսինքն՝ տվյալ իրողության՝ որպես միջազգային զինված հակամարտության որակումն ըստ միջազգային իրավունքի նորմերի ստանում է օբյեկտիվ չափանիշներ և այլևս ենթակա չէ սուբյեկտիվության (պետությունների ճանաչման կամ չճանաչման):

Այսպես, որոշ հեղինակներ առաջարկում են միջազգային զինված հակամարտություն համարել զինված բռնության կիրառմամբ այն գործողությունները, որոնց մասնակցում են զինվորական կարգապահության ենթարկվող և զինվորական կազմակերպվածքում ընդգրկված զգալի թվով կոմբատանտներ, և որոնց ընթացքում կատարվել է հետևյալ գործողություններից գոնե մեկը.

- որևէ պետության զինված ուժերի ներխուժում մեկ այլ պետության տարածք,
- մյուս կողմի զինված ուժերի թեկուզ մեկ զինձառայողի գերեվարում կամ վիրավորում,
- պատերազմող մյուս կողմի թեկուզ մեկ քաղաքացիական անձի ներկայում կամ գերում⁴:

Միջազգային իրավունքի հայտնի ռուս մասնագետ Ի. Ն. Արցիբասովը միջազգային զինված հակամարտություն ասելով հասկանում է զինված բախումը միջազգային իրավասուբյեկտություն ունեցող երկու կամ մի քանի այնպիսի կողմերի միջև, ինչպիսիք են՝ ա) ինքնիշխան պետությունները, բ) ազգային-ազատագրական շարժումն ու մետրոպոլիան, գ) ապստամբած կամ պատերազմող կողմը (որպես այդպիսին ճանաչված) և համապատասխան պետության զինված ուժերը⁵: Այդ նույն կարծիքին է նաև Ա. Գ. Գրիգորեն⁶:

² Տե՛ս «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв международных вооруженных конфликтов (Протокол I)», ст. 3. «Права человека. Сборник международных договоров». Организация Объединенных Наций, т. 1, ч. 2. Нью-Йорк, Женева, 1994, с. 1028:

³ Տե՛ս «Женевская конвенция об улучшении участи раненых и больных в действующих армиях 12 августа 1949 года», ст. 2. «Права человека. Сборник международных договоров», т. 1, ч. 2, с. 792:

⁴ Տե՛ս, օրինակ, *D. Schindler*. Die Anwendung der Genfer Rotkreuzabkommen seit 1949. Zurich, 1968, S. 78:

⁵ Տե՛ս *И. А. Арцибасов*. Международное право. М., 1997, с. 232:

⁶ Տե՛ս *А. Г. Григорьев*. Международное право в период вооруженных конфликтов. М., 1992, с. 14:

Վերջին տարիներին համաշխարհային ընկերակցությունը ավելի ու ավելի հաճախ է գործ ունենում այնպիսի զինված հակամարտությունների հետ, որոնք միջազգային չեն և տեղի են ունենում որևէ պետության տարածքում՝ նրա զինված ուժերի և այն հակակառավարական զինված խմբերի միջև, որոնք ղեկավարվում են պատասխանատվություն ստանձնած հրամանատարության կողմից և վերահսկում են որոշակի տարածք: Այսպես. եթե 1900–1941 թթ. 24 զինված հակամարտություններից 19-ը միջազգային էին և միայն 5-ը՝ ներքին, ապա 1945–1970 թթ. այդ հարաբերակցությունը փոխվեց. 97 զինված հակամարտություններից 15-ը միջազգային էին, 26-ը՝ ներքին, իսկ 50-ը կրում էին խառը բնույթ կամ պատերազմներ էին գաղութարարների դեմ: 20-րդ դարի 90-ական թվականներից սկսած ամեն տարի տեղի են ունենում 33–37 զինված հակամարտություններ, որոնց ճնշող մեծամասնությունը միջազգային չէ⁷:

1949 թ. Ժնևյան կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածը կիրառվում է նաև ոչ միջազգային բնույթ ունեցող և Բարձր Պայմանավորվող Կողմերից մեկի տարածքում ծագող զինված հակամարտության դեպքում:

2-րդ Լրացուցիչ արձանագրության (1977 թ.) 1-ին հոդվածի համաձայն՝ ոչ միջազգային զինված հակամարտությունները պետության տարածքում նրա զինված ուժերի և հակակառավարական զինված ուժերի կամ այլ կազմակերպված զինված խմբավորումների միջև ծագած այն բոլոր զինված հակամարտություններն են, որոնք չեն համապատասխանում 1-ին Լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի սահմանմանը, այսինքն՝ երբ կողմերից գոնե մեկը կառավարություն չէ: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ռազմական (պատերազմական) գործողությունները տեղի են ունենում մեկ (կամ ավելի) զինված խմբավորման և կառավարական ուժերի կամ նույն պետության ներսում զինված խմբավորումների միջև⁸:

2-րդ Լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածի 2-րդ կետում նշվում է, որ Արձանագրությունը «չի կիրարկվում ներքին կարգուկանոնի խախտման և իրադրության ներքին լարվածության առաջացման դեպքերի նկատմամբ, ինչպիսիք են անկարգությունները, բռնության առանձին ու պատահական ձեռնարկումները և նման այլ գործողություններ, քանի որ դրանք զինված հակամարտություններ չեն»⁹:

Փաստորեն, սահմանված չէ նաև բռնության ուժգնության այն շեմը, որին հասնելու դեպքում անկարգությունները գնահատվում են որպես զինված հակա-

⁷ Տես «Международная безопасность и разоружение». Ежегодник СИПРИ. М., 1994, сс. 57–58:

⁸ Տես «Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction». Prosecutor v. Tadic, Case No. IT-94-1. International Criminal Tribunal for the former Yugoslavia (ICTY), 2 October 1995, Para 70:

⁹ Տես «Дополнительный протокол к Женевским конвенциям от 12 августа 1949 года, касающийся защиты жертв вооруженных конфликтов немеждународного характера (Протокол II)», ст. 1. «Права человека. Сборник международных договоров», т. 1, ч. 2, с. 1120:

մարտություն: Բացի այդ, ինչպես ցույց է տալիս ժամանակակից ներքին զինված հակամարտությունների փորձը, հատկապես՝ Սուդանի, Աֆղանստանի տարածքներում, գրեթե հնարավոր չէ քաղաքացիական բնակչությանը տարանջատել զինված խմբավորումների մասնակիցներից¹⁰:

Մ. Լ. Տյուրկինի և Օ. Վ. Շակովեցի կարծիքով՝ ոչ միջազգային զինված հակամարտությունը միջազգային զինված հակամարտությունից տարբերվում է այն բանով, որ եթե նրա կողմերից մեկը ինքնիշխան պետության ներկայացուցիչ է, ուստի ամբողջությամբ ունի միջազգային իրավունքի սուբյեկտի կարգավիճակ, ապա մյուսը հանդես է գալիս որպես կազմակերպված խումբ, որն ի գորու է մարտական գործողություններ վարելու և առաջարկելու միջազգային իրավունքի նորմերի՝ որոշակի շրջանակներում երաշխավորված կիրառում, այսինքն՝ միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտ չէ¹¹:

Ա. Գ. Գրիգորյանը ոչ միջազգային զինված հակամարտություն ասելով հասկանում է կառավարական զինված ուժերի հետ հակակառավարական կազմակերպված զինված ջոկատների զինված բախումը, որը տեղի է ունենում որևէ մեկ պետության տարածքում¹²:

Բ. Մբատնայի կարծիքով՝ «ոչ միջազգային զինված հակամարտություն» տերմինը օգտագործվում է որպես «քաղաքացիական պատերազմ» տերմինի հոմանիշ¹³: Նման կարծիք են հայտնում նաև որոշ ռուսաստանցի իրավագետներ¹⁴:

Ի. Ն. Արցիբատովը ոչ միջազգային զինված հակամարտությունների թվին է դասում այն հակամարտությունները, որոնք ծագում են մեկ պետության տարածքում՝ նրա զինված ուժերի և այնպիսի կազմակերպված հակակառավարական խմբավորումների միջև, որոնք ունեն պատասխանատվություն ստանձնած հրամանատարություն և վերահսկում են պետության տարածքի մի մասը: Արցիբատովն առանձնացնում է ոչ միջազգային զինված հակամարտության նույնականացման հետևյալ չափանիշները. ա) նույն պետության հակամարտող ուժերի՝ կազմակերպված թշնամական գործողություններ միմյանց դեմ, բ) հակամարտող կողմերի զինված ուժերի փաստացի մասնակցություն մարտական գործողություններին, գ) գործողությունների կոլեկտիվ բնույթ (դա նշանակում է, որ առանձին, պատահական, անարխիստական հակակառավարական գործողությունները, ներքին լարված իրավիճակի առաջացումը (օրինակ՝ անկարգուք-

¹⁰ Տես *Л. В. Павлова*. Роль статьи 3 Женевских конвенций 1949 г. в прогрессивном развитии международного гуманитарного права. «Журнал международного права и международных отношений», 2010, № 4 (http://evolutio.info/index2.php?option=com_content&task=view&id=1753&pop=1&page=0&Itemid=232):

¹¹ Տես *М. Л. Тюркин, О. В. Шаковец*. Правовое регулирование действий воинского контингента РФ в миротворческих операциях. М., 2001, сс. 13–14:

¹² Տես *Ա. Գ. Գրիգորյան*, Նշ. աշխ., էջ 42:

¹³ Տես *Б. Мбатна*. Неждународный вооруженный конфликт и международное гуманитарное право. М., 1985, с. 8:

¹⁴ Տես *И. П. Блищенко*. Неждународный вооруженный конфликт и международное право. Советское государство и право. М., 1985, сс. 131–132; *И. Н. Арцибасов, С. А. Егоров*. Вооруженный конфликт: право, политика, дипломатия. М., 1989, с. 47:

յունները) չեն կարող համարվել ոչ միջազգային զինված հակամարտություն, դ) կազմակերպվածության հանգամանքը (դա վերաբերում է առաջին հերթին ապստամբներին, որոնք պետք է ստեղծեն իրենց զինված կազմավորումների անդամների համար պատասխանատու իշխանության մարմիններ), ե) տվյալ պետության տարածքի մի մասին տիրելը (ապստամբները պետք է ոչ միայն տիրեն տարածքի մի մասին, այլև քիչ թե շատ արդյունավետ կերպով իրականացնեն իշխանական գործառույթներ, այդ թվում՝ պլանավորեն և վարեն մարտական գործողություններ)¹⁵:

Ա. Ի. Պոլտորակը և Լ. Ի. Սավինսկին առանձնացնում են ոչ միջազգային զինված հակամարտության սահմանման նաև լրացուցիչ չափանիշներ, որոնցից են՝ մարտական գործողությունների ինտենսիվությունը, բնակչության աջակցությունը հակամարտող կողմերին, պայքարի քաղաքական նպատակը¹⁶:

1949 թ. Ժնևյան կոնվենցիաների համար ընդհանուր 3-րդ հոդվածից և 2-րդ Լրացուցիչ արձանագրությունից (1977 թ.) հետևում է, որ ոչ միջազգային զինված հակամարտությունը հասնում է մի այնպիսի մակարդակի բռնության, որով տարբերվում է այլ ձևերի բռնությունից, որոնց նկատմամբ միջազգային մարդասիրական իրավունքը չի կիրառվում, այն է՝ ներքին կարգուկանոնի խախտման և ներքին լարվածության ստեղծման դեպքերը, ինչպիսիք են՝ անկարգությունները, բռնության առանձին և պատահական ձեռնարկումները և այլն¹⁷: Հակամարտությունը որպես ոչ միջազգային զինված հակամարտություն որակելու համար պահանջվող լարվածության (բռնության ուժգնության) շեմն ավելի բարձր է, քան միջազգային զինված հակամարտության համար: Գոյություն ունեցող պրակտիկան, մասնավորապես՝ նախկին Հարավսլավիայի համար Միջազգային քրեական տրիբունալի փորձը ցույց է տալիս, որ այդ շեմը հաղթահարվում է բոլոր այն դեպքերում, երբ իրավիճակը կարող է բնորոշվել որպես «զինված բռնության երկարատև գործադրում»¹⁸: Այս պայմանը պետք է գնահատվի ըստ երկու հիմնական չափանիշների՝ ա) բռնության ուժգնության, բ) կողմերի կազմակերպվածության: Ոչ միջազգային զինված հակամարտության այս երկու բաղադրիչները անհնար է նկարագրել վերացական տերմիններով, դրանք պետք է գնահատել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հաշվի առնելով բազմաթիվ գործոններ¹⁹:

¹⁵ Տես *И. Н. Арцибасов. Право в период вооруженных конфликтов. М., 1978, с. 233:*

¹⁶ Տես *А. И. Полторац, Л. И. Савинский. Вооруженные конфликты и международное право. М., 1976, с. 189:*

¹⁷ Տես «How is the term «Armed Conflict» defined in international humanitarian law?». ICRC. Opinion Paper, March 2008, P. 3; «Judgment (Trial Chamber)». Prosecutor v. Limaj, Case No. IT-03-66-T. ICTY, 30 November 2005, Para 84:

¹⁸ Տես «Decision on the Defence Motion for Interlocutory Appeal on Jurisdiction». Prosecutor v. Tadic, Case No. IT-94-1. ICTY, 2 October 1995, Para 70:

¹⁹ Տես «Judgment (Trial Chamber)». Prosecutor v. Tadic, Case No. IT-94-1-T. ICTY, 7 May 1997, Para 561–568, հատկապես մաս 562; «Judgment (Trial Chamber)». Prosecutor v. Limaj, Case No. IT-03-66-T. ICTY, 30 November 2005, Para 84; «Judgment (Trial Chamber)». Prosecutor v. Boskoski, Case No. IT-04-82. ICTY, 10 July 2008, Para 175: Նշված

Զինված հակամարտության իրավական գնահատականը կախված է երրորդ պետության դիրքորոշումից: Եթե նա ընդունում է ապստամբներին որպես պատերազմող կողմի և նրանց օգնություն է ցուցաբերում, ապա ոչ միջազգային զինված հակամարտությունը դրանով իսկ վերածում է միջազգային զինված հակամարտության (ընդամենն այս որակումների համար էական է նաև այն հարցը, թե ինչ է հասկացվում «օգնություն» ասելով): Իսկ եթե երրորդ պետությունը օգնություն է ցուցաբերում օրինական կառավարությանը, ապա հակամարտությունը չի վերածում միջազգայինի²⁰:

Զինված հակամարտության բերված բոլոր սահմանումներում հստակ կերպով ձևակերպված է միայն այն միտքը, որ միջազգային զինված հակամարտության սուբյեկտներ են պետությունները²¹ (երկու կամ մի քանի կողմ, որոնք ունեն միջազգային իրավասուբյեկտություն), իսկ ոչ միջազգային զինված հակամարտության դեպքում որպես մեկ կողմ դարձյալ պետք է հանդես գա պետությունը (միջազգային իրավունքի սուբյեկտ), մինչդեռ սահմանումներում նշված ազգային-ազատագրական և ապստամբական շարժումների հարցը մնում է անորոշության մեջ²²: Այս մոտեցումը թերևս կիրառելի է միայն ընդհանուր առմամբ, քանի որ այն հաշվի չի առնում ազգային-ազատագրական շարժումների յուրահատկությունը, միջազգային իրավունքի երկու հիմնարար սկզբունքների՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի և պետական սահմանների անխախտելիության հակասականությունը, երբ հակամարտության կողմերից մեկը ոչ թե պետությունն է, այլ իր պետականության համար պայքարող կողմը: Պրոբլեմն այն է, որ միջազգային

հիմնական չափանիշները կիրառում են միջազգային տարբեր կազմակերպություններ, մասնավորապես՝ Ռուանդայի գործով միջազգային քրեական տրիբունալը (տես «Judgment (Trial Chamber I)». Prosecutor v. Rutaganda, Case No. ICTR-96-3. International Criminal Tribunal for Rwanda (ICTR), 6 December 1999, Para 93; «Международная комиссия по расследованию ситуации в Дарфуре», Доклад от 25 января 2005 г., представленный в соответствии с резолюцией Совета Безопасности 1564 от 18 сентября 2004 г., ч. 74–76): Ռամոշ Հարադինայի (Կոսովոյի նախկին վարչապետ, դաշտային հրամանատար, որը մեղադրվում էր կոսովոյի սերբերի զանգվածային սպանություններում, և որին երկու անգամ արդարացրել է Հաագայի դատարանը) գործում նախկին Հարավսլավիայի համար Միջազգային քրեական տրիբունալը որդեգրեց փոքր-ինչ այլ մոտեցում՝ հայտարարելով, թե «երկարատև բռնությունը» վերաբերում է ոչ միայն բռնության տևողությանը, այլև դրա բոլոր կողմերին, որոնք հնարավորություն են ընձեռում գնահատելու բռնության ուժգնությունը:

²⁰ Տես *II. H. Арцибасов*. Право в период вооруженных конфликтов, с. 46:

²¹ «Անվիճելի է, որ զինված հակամարտությունը միջազգային է, եթե այն տեղի է ունենում մեկ կամ մի քանի պետությունների միջև: Բացի այդ, պետության տարածքում սկսվող ներքին զինված հակամարտության դեպքում այն կարող է դառնալ միջազգային (կամ, կախված հանգամանքներից, կարող է ըստ իր բնույթի լինել միջազգային՝ միևնույն ժամանակ մնալով ներքին զինված հակամարտություն), եթե 1) այդ հակամարտությանը միջամտում է ուրիշ պետություն՝ օգտագործելով իր զորքը, կամ էլ 2) ներքին զինված հակամարտության որոշ մասնակիցներ գործում են այդ մյուս պետության անունից» (տես «Judgment (Appeals Chamber)». Prosecutor v. Tadic, Case No. IT-94-1-A. ICTY, 15 July 1999, Para 84):

²² Տես, օրինակ, «Международное право», учебник. Отв. ред. Ю. М. Колосов, В. И. Кузнецов. М., 1995, сс. 348–349:

իրավունքի համակարգը դեռ մեծապես կողմնորոշված է դեպի միջազգային հարաբերությունները միջպետական մակարդակով:

Մեր կարծիքով՝ ժամանակակից միջազգային իրողությունները հանգեցրել են նոր տեսակի՝ խառը զինված հակամարտությունների առաջացմանը: «Ներքին և միջազգայնացված զինված հակամարտությունների թվի աճման համեմատ ավելի ու ավելի հաճախ է գիտակցվում, որ դժվար թե հնարավոր է հակամարտությունները խստիվ կերպով բաժանել ներքին և միջազգային հակամարտությունների, եթե դա ընդհանրապես երբևէ հնարավոր է եղել»²³: Նման հակամարտությունն ունի ինչպես միջազգային, այնպես էլ ոչ միջազգային զինված հակամարտության (այսինքն՝ ներքին զինված հակամարտության) հատկանիշներ: Որպես կանոն, խառը զինված հակամարտություն ծագում է այնպիսի պետության սահմանամերձ շրջանում, որում հոծ բնակվում են ազգային փոքրամասնություններ²⁴:

Բոլոր զինված հակամարտություններն էլ իրենց ծագումնաբանությամբ, զարգացման ընթացքով ու ձևերով եզակի են: Այդ իսկ պատճառով դրանց գիտական ուսումնասիրությունը պահանջում է յուրաքանչյուր դեպքի առանձին քննարկում: Ջինված հակամարտության բնույթի որոշման համար անհրաժեշտ է այն ուսումնասիրել փուլ առ փուլ և դիտել որպես մեկ ամբողջական գործընթաց, որն ունի տարբեր, սակայն փոխկապված կողմեր՝ պատմական (ծագումնաբանական), պատճառահետևանքային և կառուցվածքագործառական²⁵:

Եվ այսպես. զինված հակամարտության բնույթը՝ որպես իրավական կարգախումբ (կատեգորիա), գործնականում դժվար է որոշարկել: Ոչ բոլոր հակամարտություններն էլ հնարավոր հստակ կերպով դասակարգել ըստ միջազգային մարդասիրական իրավունքում ընդունված չափանիշների: Ուստի, մեր կարծիքով, անհրաժեշտ է քննարկել այդ կարգախմբերի թվի մեծացման կամ դրանց հարմարեցման հարցը, որպեսզի ոչ մի հակամարտային իրավիճակ չհայտնվի իրավական վակուումում:

²³ Տես *A. MacDonald*. The year in review. «Yearbook of International Law», Vol. 1, 1998, P. 121:

²⁴ Տես *Г. М. Григорян*. Расследование преступлений, совершаемых военнослужащими Вооруженных сил Республики Армения в районах вооруженного конфликта. Диссертация кандидата юридических наук. М., 2009, с. 19:

²⁵ Տես *А. Я. Анцупов, С. В. Баклановский*. Конфликтология в схемах и комментариях. М., 2009, сс. 49–51:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ
ՈՐՊԵՍ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ
ՉԱՐԳԱՅՄԱՆ ՅՈՒՑԻՉ*

Ն. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ Իրավաբանական
վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի հայցորդ

Միջազգային մարդասիրական իրավունքը (ՄՄԻ) որպես միջազգային իրավունքի ինքնուրույն ճյուղ ձևավորվել է 18-րդ դարում, սակայն ունի շատ ավելի խոր արմատներ: Այն սերտորեն առնչվում է պատերազմի օրենքներին, որոնք նույնքան հին են, որքան պատերազմը¹:

Մարդկության զարգացման վաղ շրջանում իշխում էր, այսպես կոչված, «ջունգլիների օրենքը», և պատերազմում հաղթանակն ուղեկցվում էր պարտվածների հրեշավոր կոտորածներով ու նրանց նկատմամբ սոսկալի գազանություններով: Այդ ժամանակների պատվախնդրության կանոնները մարտիկին արգելում էին հանձնվել. նա պետք է կա՛ն հաղթեր, կա՛ն մեռներ: Սակայն այդ շրջանում, հատկապես՝ նստակյաց ժողովուրդների կողմից, ձեռնարկվում են պատերազմի դաժան հետևանքները մեղմելու առաջին փորձերը: Պեղումները ցույց են տալիս, որ նոր քարեդարյան շրջանում պատերազմում վիրավորվածներին խնամում էին. պահպանված կմախքների վրա կան ոսկորների ուղղման, նույնիսկ ոսկրաշաղափման հետքեր²: Այնուհետև ռազմական գործողությունների ավարտից հետո կողմերը հաճախ պայմանավորվում էին փոխանակել գերիներին: Ժամանակի ընթացքում այս փորձը դարձավ պատերազմ վարելու սովորության ճորձերից մեկը և ենթակա էր կատարման նույնիսկ պայմանավորվածություն չլինելու դեպքում³:

Հին աշխարհի քաղաքակրթությունը հիմնված էր գերազանցապես ստրկատիրության վրա: Պարտվածները ստրկացվում էին և ներգրավվում գյուղատնտեսական աշխատանքներում, տաճարների ու ջրանցքների կառուցման գործում: Մարդասիրական իրավունքի զարգացման տեսանկյունից սա դարձավ առաջընթացի հիմք, քանի որ գերեվարված թշնամիների կյանքը, որպես կանոն, խնայվում էր⁴:



* Հրապարակվում է քննարկման կարգով:–*Խմբ.*

¹ Տես Ժ. Պիկրի, Միջազգային մարդասիրական իրավունքի զարգացումն ու սկզբունքները: Ե., 2000, էջ 10:

² Տես նույն տեղում:

³ Տես Յ. Դավիժ. Принципы права вооруженных конфликтов. М., 2000, сс. 37–41, նաև՝ Չ. Վրայտ. A Study of War. London, 1942, P. 143:

⁴ Տես Բ. Մ. Ստեյն. К истории дипломатии в Древнем Китае и в Древней Индии. «Вестник ЛГУ», 1947, № 6:

Առաջինը շումերները (մ. թ. ա. 4–3-րդ հազարամյակներ) քիչ թե շատ կանոնակարգեցին պատերազմի վարումը: Նրանց մարտական գործողություններն սկսվում էին պատերազմի հայտարարմամբ, կնքվում էին զինադադարի ու խաղաղության պայմանագրեր, որոնցով նախատեսվում էր նաև խաղաղ բնակչության պաշտպանություն⁵:

Իրենց ժամանակի համար առաջադիմական էին հին հնդկական «Մահար-հարատա» էպոսում և «Մանուի» առասպելներում արտացոլված օրենքները: Գրանց համաձայն՝ արգելվում էր սպանել զենքը վայր դրած կամ հանձնված թշնամուն, իսկ վիրավորները բուժվելուց հետո պետք է վերադարձվեին հայրենիք: Որոշ դրույթներ զարմանալիորեն համահունչ են պատերազմի օրենքների և սովորույթների մասին 1907 թ. Հաագայի կանոնակարգին: Օրինակ՝ թուլատրվում էին պատերազմելու ոչ բոլոր եղանակները, արգելվում էր կիրառել ատամնավոր կամ թունավորված զենքեր, ինչպես նաև այրվող նետեր: Կանոնակարգված էին թշնամու ունեցվածքի բռնագրավման, ինչպես նաև ռազմագերիների պահման հետ կապված հարցերը: Չէր կարելի նաև հայտարարել, թե պատերազմի ժամանակ ոչ մեկի կյանքը չի խնայվի⁶:

Բաբելոնի արքա Համմուրապիի օրենքները (մ. թ. ա. 1790 թ.) բովանդակում էին դրույթ, ըստ որի՝ պատանդները փրկագնի դիմաց ենթակա էին արձակման⁷:

Պատերազմ վարելու հին հռոմեական կանոնները բավականին մնան էին հույների պատերազմելու կանոններին, սակայն ունեին ավելի ամուր տեսական հենք մշակված լինելով փիլիսոփայության ու կրոնի տեսանկյունից: Այնուամենայնիվ, հազարամյակ պահանջվեց՝ քաղաքացիական բնակչությանը պատերազմի դաժանությունից պաշտպանող նրանց ավանդույթի ձևավորման համար⁸:

Անշուշտ, քրիստոնեության տարածումը ևս նպաստում էր միջազգային մարդասիրական իրավունքի զարգացմանը. թշնամուն սիրելու քրիստոնեական պատվիրանը, որքան էլ որ վերաբերելիս լիներ առաջին հերթին անձնական հարաբերություններին, ընկալվում էր նաև արտաքին թշնամու նկատմամբ մարդասիրություն ցուցաբերելու իմաստով:

Իսպանիայում մավրերի տիրապետության ժամանակաշրջանում՝ 1280 թ., գրված «Վիգայաթը» պատերազմի օրենքների ժողովածու է: Այն արգելում էր սպանել կանանց, երեխաներին, ծերերին, խելագարներին, հիվանդներին, խոցել թունավոր նետերով և թունավորել աղբյուրները⁹:

⁵ Տես *A. K. Kanro*. Право войны. «Право и политика», 2001, № 1 (<http://alternat-history.org.ua/pravo-voiny>):

⁶ Ավելի համաձայնորեն տես *S. V. Viswanatha*. International Law in Ancient India. New York, 1925:

⁷ Տես «Законы вавилонского царя Хаммурапи» (<http://hist.msu.ru/ER/Etext/hammurap.htm>):

⁸ Տես *C. Л. Утченко*. Политические учения Древнего Рима. М., 1977, с. 50:

⁹ Տես *П. Г. Зверев*. Правовой статус законных участников вооруженных конфликтов.

1625 թ. լույս է տեսնում հայտնի հոլանդացի գիտնական-իրավաբան Հյուգո Գրոտիուսի «Պատերազմի և խաղաղության իրավունքի մասին» աշխատությունը, որի գլխավոր թեման պատերազմ սկսելու համար իրավական հիմքերի ձևակերպումն էր, այսինքն՝ պատերազմ սկսելու իրավունքը: Աշխատության երկրորդ մասը նվիրված էր պատերազմելու իրավունքին, որով սահմանվում էր ռազմական գործողություններ վարելու կարգը:

1762 թ. լույս տեսած «Հասարակական դաշինք» աշխատությունում Ժան Ժակ Ռուսոն գրում է. «Պատերազմը ոչ թե մարդկանց, այլ պետությունների միջև հարաբերություն է, և մարդիկ պատահամա՞ք են թշնամանում, ոչ որպես մարդկային էակներ և նույնիսկ ոչ էլ որպես քաղաքացիներ, այլ որպես զինվորներ, ոչ որպես իրենց երկրի բնակիչներ, այլ որպես երկրի պաշտպաններ...»

Եթե պատերազմի նպատակը թշնամական պետության ոչնչացումն է, ապա հաղթողն իրավունք ունի ոչնչացնելու նրա պաշտպաններին, քանի դեռ նրանք զինված են, սակայն հենց որ նրանք վայր են դնում զենքն ու հանձնվում՝ դադարելով թշնամի կամ թշնամու գործիք լինելուց, կրկին դառնում են հասարակ մարդիկ, և հաղթողն այլևս նրանց կյանքի նկատմամբ ոչ մի իրավունք չունի»¹⁰: Այսպիսով՝ Ռուսոն ուրվագծեց ժամանակակից մարդասիրական իրավունքի հիմնարար սկզբունքները և վճռական ազդեցություն ունեցավ իր ժամանակի հասարակության իրավագիտակցության և քաղաքականության վրա:

Մասնավոր և հասարակական իրավունքների տարանջատումը, որը կապված էր անձի և պետության տարանջատման հետ, հիմք դարձավ, որ ձևակերպվի պատերազմի իրավունքի հիմնական դրույթը. «Պատերազմը ոչ թե անհատների, այլ պետությունների վերաբերմունքն է միմյանց նկատմամբ» և «թշնամիներ են ոչ թե մասնավոր անձինք, այլ պետությունները»: Ժան Մարի Պորտալիսի և Ժան Ժակ Ռուսոյի այս մտքերը մեծ ազդեցություն գործեցին պատերազմի իրավունքի փոփոխման վրա: Դրանցից տրամաբանորեն հետևում էր թշնամու խաղաղ բնակչության և մասնավոր սեփականության անձեռնմխելիության ճանաչումը: Այդ ժամանակներից պատերազմի օբյեկտներ կարող էին լինել միայն պետության զինված ուժերը (կոմբատանտներ) և պետության սեփականությունը¹¹:

1793 թ. Ֆրանսիայում համընդհանուր զինապարտության հայտարարումը նշանակալից ազդեցություն ունեցավ պատերազմի իրավունքի զարգացման վրա, որովհետև գորքի կազմում ներառվեցին ոչ միայն ազնվականները, այլև ժողովրդական լայն զանգվածներ¹², ուստի և պետության ձեռքում բանակը

Диссертация, 2005 (<http://pravouch.com/problemyi-mejdunarodyih-politicheskie/stanovlenie-razvitiie-norm-mejdunarodnogo-prava-15522.html>):

¹⁰ Տես Ջ. Ջ. Րյսսո. Об Общественном договоре, или Принципы политического Права (<http://lib.ru/FILOSOF/RUSSO/prawo.txt>):

¹¹ Տես «Index of International Humanitarian Law». Ed. by W. A. Soft, J. A. Roach. Geneva, 1987, P. 92:

¹² Տես Է. Դալլիդ, Նշ. աշխ., էջ 45, նաև՝ M. Torelly. Le droit international humanitaire. Paris, 1985, P. 4:

դարձավ ժողովրդին մարդասիրական սկզբունքներով դաստիարակելու գործիք: Մյուս կողմից՝ ժողովրդի խաղաղասիրական բարքերը տարածվեցին բանակում:

19-րդ դարում լայն ճանաչում ստացավ մեկ այլ դրույթ, որն առաջ էր քաշել Շառլ Լուի Մոնտեսքյուն, և որը դարձավ միջազգային իրավունքի հիմնական պահանջներից մեկը. «Ժողովուրդները պատերազմի ժամանակ պետք է հնարավորինս քիչ վնաս պատճառեն միմյանց»¹³:

1859 թ. ֆրանս-իտալական դաշնակից զորքերը փորձեցին Ավստրիայից ներխուժել Իտալիա և գրավել նրա տարածքի մի մասը: Պատմության ամենաարյունալի ճակատամարտերից մեկը տեղի ունեցավ Սոլֆերինո գյուղի մոտակայքում: Դակատամարտից հետո ռազմի դաշտում մնացին 22000 սպանված և 18000 վիրավոր: Շվեյցարացի գործարար Ժան-Անրի Դյունանը ակնատես եղավ մի դաժան տեսարանի. ռազմադաշտում բազմաթիվ վիրավորներ մեռնում էին պատշաճ և ժամանակին բուժօգնություն չստանալու պատճառով¹⁴:

Ապագայում նման արհավիրքի կրկնությունը կանխելու նպատակով Դյունանը գրեց «Հուշեր Սոլֆերինոյի մասին» գրքույկը, որում հանդես եկավ երկու առաջարկությամբ: Առաջինն այն էր, որ բոլոր եվրոպական երկրներն ստեղծեն օգնության կազմակերպություններ, որոնց նպատակը լինի պատերազմի կողմերի համաձայնությամբ վիրավորներին օգնություն ցուցաբերելը՝ առանց ազգային խտրականության, երկրորդը՝ որ պետություններն ընդունեն միջազգային կանոններ, որոնք հիմք ծառայեն բոլոր երկրներում օգնության կազմակերպությունների գործունեության համար¹⁵:

Դյունանի գրքույկը թարգմանվեց մի քանի լեզուներով և մեծ արձագանք ստացավ հասարակության մեջ:

Ժնևի Նպաստամատույց ընկերության նախագահ, շվեյցարացի իրավաբան Գուստավ Մուանինեն, իր կազմակերպչական ունակությունների շնորհիվ կյանքի կոչեց Դյունանի գաղափարները, և 1863 թ. ստեղծվեց հինգ հոգուց բաղկացած կոմիտե, որը հռչակվեց որպես «Վիրավոր զինվորներին օգնություն ցուցաբերող միջազգային և մշտական գործող կոմիտե», և արդեն 1864 թ. փետրվարին դանիա-պրուսական հակամարտության ժամանակ մարտի դաշտում առաջին անգամ հայտնվեց Կարմիր խաչի խորհրդանիշը¹⁶, իսկ 1864 թ. օգոստոսի 22-ին ընդունվեց «Գործող բանակներում վիրավոր զինծառայողների վիճակի բարելավման մասին» Ժնևի կոնվենցիան:

1945 թ. ՄԱԿ-ի Կանոնադրության ընդունումից հետո սկսվեց պատերազմի իրավունքի զարգացման նոր փուլ: Միջազգային իրավունքի այս ոլորտում կատարվեցին արմատական փոփոխություններ. բոլոր սկզբունքներն ու նորմերը

¹³ Տես «Index of International Humanitarian Law», P. 92:

¹⁴ Տես *Է. Դավիդ, Նշ. աշխ., էջ 43-44, նաև՝ E. Borel. L'organisation internationale de la Croix-Rouge, T. 1. Paris, 1923, PP. 575-577:*

¹⁵ Տես *Ա. Դյուն. Воспоминание о битве в Сольферино. М., 1995, с. 62:*

¹⁶ Տես *Թ. Շ. Сорокина. История медицины (http://bibliotekar.ru/423/37.htm):*

ուղղվեցին պատերազմի աղետի ծավալների սահմանափակմանը: Որպես արդյունք՝ պատերազմի իրավունքը վերափոխվեց մարդասիրական իրավունքի:

«Միջազգային մարդասիրական իրավունք» տերմինն առաջին անգամ օգտագործեց հայտնի շվեյցարացի իրավաբան Ժան Պիկտեն՝ 20-րդ դարի 50-ական թվականներին¹⁷: Իրավաբանական գրականության մեջ և ՄԱԿ-ի փաստաթղթերում կիրառվում է նաև «Միջազգային զինված հակամարտությունների իրավունք» տերմինը:

Ժամանակակից մարդասիրական իրավունքը բաղկացած է երկու մասից՝ Հաագայի իրավունքից և Ժնևյան իրավունքից:

Հաագայի իրավունքի հիմքը դրվել է դեռ 1899 թ.՝ Հաագայի կոնվենցիաներով (վերանայվել են 1907 թ.): Դրանով սահմանվում են ռազմական գործողությունների ժամանակ պատերազմող կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև սահմանափակվում է խոցման միջոցների կիրառումը:

Ռազմական գործողություններ սկսելու մասին Հաագայի 3-րդ կոնվենցիայով սահմանվել է, որ պետությունների միջև ռազմական գործողությունները չպետք է սկսվեն առանց նախնական և աներկիմաստ նախագոյազանցման: Ընդամեն այն կարող է ունենալ կամ պատերազմի պատճառաբանված հայտարարման, կամ պատերազմի պայմանական հայտարարման վերջնագրի ձև:

Ժնևյան, կամ բուն մարդասիրական, իրավունքը կոչված է պաշտպանելու մարտական գործողությունների ժամանակ շարքից դուրս եկած զինվորականներին, ինչպես նաև այդ գործողություններին չմասնակցող անձանց: Այն հիմնականում բաղկացած է 1949 թ. Ժնևյան չորս կոնվենցիաներից և 1977 թ. երկու լրացուցիչ արձանագրություններից:

Ժնևյան իրավունքով սկսվել է մի դարաշրջան, երբ առաջնությունը տրվում է անհատին և մարդասիրական սկզբունքներին:

Այսպիսով՝ ժամանակակից մարդասիրական իրավունքի դրույթներն այլևս ավանդույթներից կամ հակամարտող կողմերի միջև կնքված երկկողմ պայմանագրերից բխող իրավունքներ ու պարտավորություններ չեն, դրանք բխում են բազմաթիվ կոնվենցիաներից և պարտադիր են հակամարտող կողմերի համար:

Մարդասիրական իրավունքի հիմնական նպատակն է պատերազմի՝ որպես պետությունների միջև հարաբերությունների կարգավորման միջոցի բացառումը: Այս նպատակին հասնելու համար միջազգային իրավունքը զարգանում է երկու ճանապարհով. պատերազմ սկսելու դեպքերի նվազեցում և պատերազմի վարման մեթոդների ու կիրառվող միջոցների ընտրության սահմանափակում:

Այսօր միջազգային իրավունքի նորմերով արգելված է ցանկացած ուժի կիրառումը, և պետություններն իրենց միջև ծագած վեճերը պետք է լուծեն միայն խաղաղ միջոցներով¹⁸:

Այդուհանդերձ, չունենալով զինված հակամարտությունների խստորեն վերացման հնարավորություն՝ միջազգային հանրությունը կիրառում է ինչպես քաղաքա-

¹⁷ Տես Ժ. Պիկտե, Նշ. աշխ., էջ 5:

¹⁸ Տես «Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրություն», հոդ. 2: Ե., 2005, էջ 6-7:

կան, այնպես էլ իրավական միջոցներ՝ նպատակաուղղված պատերազմի առավել բարբարոսական դրսևորումների և բացասական հետևանքների մեղմացմանը:

Պետությունները, որոնք միացել են մարդասիրական իրավունքի ոլորտը կարգավորող միջազգային պայմանագրերին, այսօր 198-ն են: Նրանք պարտավորվում են ապահովել իրենց կողմից վավերացված պայմանագրերի դրույթների կիրառումը: Դրանց թվում է նաև Հայաստանը:

Հայաստանում վերջին տասը տարիներին արդյունավետ աշխատանքներ են ծավալվել ՄՄԻ-ի շրջանակներում՝ մեր պետության ստանձնած պարտավորությունների կատարման ուղղությամբ. խոսքը վերաբերում է ոչ միայն օրենսդրական բարեփոխումներին, այլև Կարմիր խաչի միջազգային կազմակերպության (ԿԽՄԿ) հետ համագործակցությամբ ՀՀ Ձինված ուժերում իրականացվող միջոցառումներին: ՀՀ պաշտպանության նախարարությունը ՀԱՊԿ-ի անդամ պետություններից առաջինը առաջարկեց, որ 2012 թ. իր տարածքում անցկացվող՝ ՀԱՊԿ-ի արագ արձագանքման ուժերի «Փոխգործակցություն–2012» համատեղ գորավարժությանը մասնակցեն նաև հասարակական կազմակերպությունները և ՀԱՊԿ-ի անդամ պետությունների համաձայնությամբ ապահովեց ԿԽՄԿ մասնակցությունը ոչ թե դիտորդի, այլ գորավարժության անմիջական մասնակցի կարգավիճակով:

Ցավոք, պետք է արձանագրել, որ որոշ պետություններ թեև դարձել են Ժնևյան կոնվենցիաների և դրանց Լրացուցիչ արձանագրությունների մասնակիցներ, այնուամենայնիվ, շարունակում են խախտել ՄՄԻ-ի նորմերը: Այսպես. հայկական Ձինված ուժերի գորավարժության ժամանակ աղբրեջանական զինուժի կողմից ԼՂՀ ՊԲ ուղղաթիռի խոցումը, աղետի ենթարկված անձնակազմին մոտենալու արգելելը, հայազգի գերիների հանդեպ դրսևորվող անմարդկային վերաբերմունքը ՄՄԻ-ի կոպիտ խախտումների օրինակներ են:

ՄՄԻ-ի խախտումները, որպես կանոն, պայմանավորված են այն հանգամանքով, որ միջազգային իրավունքով սահմանված կանոնները իրականում համահունչ չեն տվյալ ժողովրդի սովորույթներին և մտածելակերպին, ուստի այդ կանոնների ընկալումը, դրանց կիրառման անհրաժեշտության գիտակցումը և իրագործումը դժվարանում են՝ պայմանավորված քաղաքակրթական գործոններով:

Ձինվորականների կամայականությունների սահմանափակման միջոցները պետք է փնտրել ռազմական գիտության ու պատերազմի շրջանակներից դուրս՝ բարոյական արժեքների և միջազգային իրավունքի ոլորտներում: Այդ սահմանափակումները մտցվում են ըստ մարդասիրության պահանջների, որոնք խստանում են քաղաքակրթության առաջընթացին զուգահեռաբար, և այս առումով պատերազմի իրավունքը կարող է ծառայել որպես քաղաքակրթության զարգացման ցուցիչ:

Կարելի է հուսալ, որ քաղաքակրթության զարգացումը սկզբունքորեն կարող է հանգեցնել պատերազմի ժամանակակից ձևերի վերացմանը:

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО

**ТОЛКОВАНИЕ ВООРУЖЕННЫХ КОНФЛИКТОВ
В МЕЖДУНАРОДНОЙ ЮРИДИЧЕСКОЙ ПРАКТИКЕ
И ПОДХОДЫ К ИХ КОНЦЕПТУАЛИЗАЦИИ**

*Г. М. ГРИГОРЯН, полковник юстиции, кандидат юридических наук, докторант
кафедры криминалистики Военного Университета МО РФ*

РЕЗЮМЕ

Согласно Женевским конвенциям о защите жертв войны от 12 августа 1949 г. и Дополнительным протоколам (1977) I и II к ним, к понятию «международный вооруженный конфликт» относятся: а) объявленная война или иной вооруженный конфликт, возникающий между двумя или несколькими государствами, даже если одна из сторон не признает состояния войны, б) оккупация всей или части территории государства, даже если она не встречает никакого вооруженного сопротивления, в) вооруженные конфликты, в которых народы ведут борьбу против колониального господства и иностранной оккупации и против расистских режимов – в осуществление своего права на самоопределение.

«Немеждународным вооруженным конфликтом» считаются вооруженные конфликты, происходящие на территории какого-либо государства между его вооруженными силами и антиправительственными вооруженными силами или другими организованными вооруженными группами, которые, находясь под ответственным командованием, осуществляют такой контроль над частью его территории, что позволяет им вести непрерывные и согласованные военные действия. К данному понятию не относятся случаи нарушения внутреннего порядка и возникновения внутренней напряженности, такие, как беспорядки, отдельные и спорадические акты насилия и т. п.

В то же время определения, приведенные в Женевских конвенциях и Дополнительных протоколах, дают повод для различных толкований, поскольку использованные в них термины и понятия сами не имеют четких дефиниций.

Так, одни авторы считают, что для правовой оценки (классификации) вооруженного конфликта существенны его длительность, интенсивность, уровень напряженности, число жертв, политические цели противоборствующих сторон и другие факторы, между тем как иные авторы подобные параметры не считают определяющими.

Немеждународный вооруженный конфликт может стать международным, если в него на стороне антиправительственных сил вмешается третье государство, причем необходимые для этого масштаб и характер помощи также являются предметом дискуссии.

Таким образом, характер вооруженного конфликта как правовую кате-

горию на практике сложно определить. Часто вооруженные конфликты имеют признаки и международных и немеждународных военных конфликтов, т. е. являются «смешанными». Поэтому актуальным является вопрос не только уточнения дефиниций, но и дополнения или адаптивирования категорий, чтобы ни одна конфликтная ситуация не оказалась в правовом вакууме.

МЕЖДУНАРОДНОЕ ГУМАНИТАРНОЕ ПРАВО КАК ПОКАЗАТЕЛЬ УРОВНЯ РАЗВИТИЯ ЦИВИЛИЗАЦИИ

*Н. Г. КАРАПЕТЯН, подполковник, старший офицер отдела правового обеспечения
Юридического управления МО РА, соискатель юридического факультета ЕГУ*

РЕЗЮМЕ

Опираясь на анализ исторического развития права войны с доисторических времен по сегодняшний день, автор не только развитие гуманитарного права напрямую связывает с эволюцией цивилизации, но и поддерживает гипотезу о том, что уровень применения в вооруженных конфликтах гуманитарных принципов является индикатором уровня цивилизационного развития данного общества.

INTERNATIONAL HUMANITARIAN LAW

INTERPRETATION OF ARMED CONFLICTS IN INTERNATIONAL LEGAL PRACTICE AND APPROACHES TO THEIR CONCEPTUALIZATION

*H. M. GRIGORYAN, Colonel of Justice, PhD in Law, Doctoral Student
in Criminalistics, Military University, Ministry of Defense, Russian Federation (RF)*

SUMMARY

According to the Geneva Conventions of August 12, 1949 for the Protection of War Victims and the Additional Protocols (1977) I and II thereto, the concept of “international armed conflict” includes: a) all cases of a declared war or any other armed conflict which may arise between two or more states, even if one of the parties does not recognize the state of war; b) all cases of partial or total occupation of the state territory, even if the said occupation meets with no armed resistance; c) armed conflicts in which peoples are fighting against colonial domination and foreign occupation and against racist regimes, in the exercise of their right to self-determination.

An armed conflict should be considered as a “non-international armed conflict” taking place in the territory of a state between its armed forces and anti-government armed forces or other organized armed groups which, under

responsible command, exercise such control over a part of its territory, allowing them to carry out sustained and concerted military operations. This concept does not include situations of internal disturbances and tensions, such as riots, isolated and sporadic acts of violence, and other acts of a similar nature.

At the same time, the wording provided in the Geneva Conventions and their Additional Protocols gives rise to different interpretations, since the used terms and concepts themselves do not have clear-cut definitions.

For example, some authors consider that for a legal assessment (classification) of an armed conflict essential are its duration, intensity, level of tension, number of victims, political goals of opposing parties, and other factors, meanwhile others do not consider such parameters to be determinant.

A non-international armed conflict may become international if a third country intervenes in it on the side of the anti-government forces, wherein the necessary scale and nature of the assistance are also subject to debate.

Thus, the nature of an armed conflict as a legal category, in practice, is difficult to determine. Most armed conflicts show indications of both international and non-international armed conflicts, i.e. they are “mixed”. So it is urgent not only to clarify the definitions, but also to complete or adapt the categories to ensure that no conflict situation is in a legal vacuum.

INTERNATIONAL HUMANITARIAN LAW AS AN INDICATOR OF THE LEVEL OF CIVILIZATION DEVELOPMENT

*N. H. KARAPETYAN, Lieutenant Colonel, Senior Officer of the Legal Support Section,
Legal Department, MOD, RA, Applicant, Faculty of Law, YSU*

SUMMARY

Based on the analysis of the historical development of the law of war from prehistoric times to the present day, the author not only directly links the development of Humanitarian Law to the evolution of civilization, but also supports the hypothesis that the level of applying humanitarian principles in armed conflicts is an indicator of the development level of the civilization of the given society.

**ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ԿՈԼԵԿԿՏԻՎՆԵՐՈՒՄ 9 ԿԱՌԱՎԱՐԵԼԻ
ՎԱՐԱԿՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՏՎԱՍՏՎԱԾ ԵՎ ԱՀԹ-ՈՎ
ՀԻՎԱՆԴԱՑԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ
ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ԸՆԹԱՑՔԻ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ**

*Մ. Զ. ՆԱՐԻՄԱՆՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր, ԵՊԲՀ ռեկտոր, Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, բժշկական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ք/ծ գնդապետ, ԵՊԲՀ ՌԲՖ պետ,
Կ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ, ք/ծ գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի ՌԲՎ պետ,
Ա. Ա. ԱՍՏՏՈՒՐՅԱՆ, ք/ծ գնդապետ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ պետ,
Ա. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու,
ք/ծ փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ առաջարար թերապետ,
Մ. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ք/ծ փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ԿԿԶՀ թերապևտիկ բաժանմունքի պետ*

Ներկայումս բազմաթիվ պետություններում արտահիվանդանոցային թոքաբորբերը (ԱՀԹ) շարունակում են պահպանել իրենց արդիականությունը¹: ԱՄՆ-ում յուրաքանչյուր տարի հիվանդության դեպքերը հասնում են 5 մլն-ի², իսկ Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում, Գերմանիայում և Իսպանիայում թոքաբորբով հիվանդների թիվը հասնում է տարեկան 3 մլն-ի³: Ըստ մի շարք հեղինակների՝ Ռուսաստանի Դաշնությունում 1000 մարդուց թոքաբորբով հիվանդանում է 7-ը⁴:

Կան հաղորդումներ, որ ԱՀԹ մահացության ընթացքը հարաճում է⁵:

¹ Տես *A. A. Zайцев, A. И. Синопальников*. Макролиды в режимах антибактериальной внебольничной инфекции нижних дыхательных путей. «Русский медицинский журнал» («PMЖ»), 2014, № 25:

² Տես *L. Mandell, R. Wunderink, A. Anzueto et al*. Infectious Diseases Society of America/ American Thoracic Society Consensus Guidelines on the Management of Community-Acquired Pneumonia in Adults. «Clinical Infectious Diseases», 2007, Vol. 44, № 2:

³ Տես *A. Г. Чучалин, А. И. Синопальников, Р. С. Козлов, И. Е. Тюрин, С. А. Рачина*. Внебольничная пневмония у взрослых: практические рекомендации по диагностике, лечению и профилактике. М., 2010; *M. Ferech, S. Coenen, S. Malhotra-Kumar et al*. European Surveillance of Antimicrobial Consumption (ESAC): outpatient antibiotic use in Europe. «Journal of Antimicrobial Chemotherapy», 2006, Vol. 58, Issue 2:

⁴ Տես *O. A. Цветкова*. Современные подходы к лечению внебольничных пневмоний. «PMЖ», 2014, № 5:

⁵ Տես *M. A. Куценко, А. Г. Чучалин*. Внебольничные инфекции нижних дыхательных путей и место азитромицина в их лечении. «PMЖ», 2012, № 6:

ԱՀԹ-ների հիմնախնդիրը շարունակում է մնալ արդիական մաս զինված ուժերի (ԶՈՒ) համար⁶:

Ներկայումս կատարված աշխատանքները⁷ ցույց են տալիս, որ, մի կողմից, ԶՈՒ-ում ԱՀԹ-ների կանխարգելման հարցում «Պնևմո - 23»-ով պատվաստման արդյունավետությունը մեծ է, մյուս կողմից՝ տվյալ քանակակազմի շրջանում մեծան թոքաբորբերի կլինիկական դրսևորումների և բուժական տակտիկայի տեսակետից առկա են մի շարք հիմնախնդիրներ:

Սակայն չկան աշխատանքներ, որոնցում արծարծված են կառավարելի վարակների, ինչպես նաև ԱՀԹ-ների կանխարգելմանն ուղղված ընդունված պատվաստանյութերով և «Պնևմո-23»-ով պատվաստումներից հետո զարգացած արտահիվանդանոցային թոքաբորբերի վերաբերյալ տվյալներ:

Տվյալ հետազոտության նպատակն էր ՀՀ ՊՆ ԿԿԶՀ-ում պարտադիր զինվորական ծառայության զորակոչված, կենտրոնական հավաքակայանում 8 կառավարելի վարակների (կարմրուկ, խոզուկ, կարմրախտ, փայտացում, դիֆտերիա, մենինգոկոկային մենինգիտ, հեպատիտ Ա, տուլարեմիա) կանխարգելման համար, ինչպես նաև ԱՀԹ-ների կանխարգելման համար «Պնևմո-23»-ով պատվաստումներից հետո զարգացած արտահիվանդանոցային թոքաբորբերի կլինիկական ընթացքի, ախտորոշման առանձնահատկությունների ուսումնասիրությունների հիման վրա բուժման տակտիկայի մշակումը:

Հետազոտության օբյեկտների հիմնական խմբում (I խումբ) ներառված էին արական սեռի 18–22 տարեկան 290 զինծառայող, որոնք պարտադիր զինվորական ծառայության էին զորակոչվել 2010 – 2014 թթ., կենտրոնական հավաքակայանում՝ զորամաս տեղափոխվելուց անմիջապես առաջ, պատվաստվել էին 8 կառավարելի վարակների, ինչպես նաև ԱՀԹ-ների կանխարգելման համար պատվաստանյութերով (այդ թվում՝ «Պնևմո-23»-ով), այնուհետև հիվանդացել էին ԱՀԹ-ով և բուժվել ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական հոսպիտալի թերապևտիկ բաժանմունքում:

Համեմատվող խմբում (II խումբ) ներառվել էին 2002–2006 թթ. պարտադիր զինծառայության զորակոչված, չպատվաստված և ԱՀԹ-ով հիվանդացած նույն տարիքի և սեռի 163 զինծառայող:

Հսկողական խումբ են կազմել պարտադիր զինվորական ծառայության զո-

⁶ Տես *А. Б. Белевитин, В. Б. Акимкин, В. Д. Мосягин, А. А. Малинковский и соавт.* Организационно-эпидемиологические аспекты профилактики внебольничной пневмонии в воинских коллективах. «Военно-медицинский журнал» («ВМЖ»), 2009, № 9; *Г. Г. Марьин, О. И. Клочков, В. Д. Мосягин, В. Д. Бондаренко и соавт.* Организационно-эпидемиологические аспекты профилактики внебольничных пневмоний в Московском военном округе. «ВМЖ», 2008, № 3:

⁷ Տես *А. В. Степанченко.* Особенности течения, диагностики и лечения внебольничной пневмонии у новобранцев, привитых вакциной «Пневмо-23». Диссертация кандидата медицинских наук. М., 2008; *А. Ф. Шепеленко, А. В. Степанченко, В. Г. Воробец.* Внебольничная пневмония у привитых вакциной «Пневмо-23»: особенности клиники, диагностики и лечения. «ВМЖ», 2008, № 9:

բակոչված և գործնականում առողջ ու չպատվաստված նույն տարիքի և սեռի 50 զինձառայող (ՌՌԻՀ-երի կուրսանտներ):

Կատարվել են կլինիկական, լաբորատոր, կենսաքիմիական, գործիքային հետազոտություններ (կրծքավանդակի ռենտգենագրություն (ռենտգենոգրաֆիա) և ռենտգենադիտում (ռենտգենոսկոպիա), համակարգչային տոմոգրաֆիա, որովայնի օրգանների սոնոգրաֆիա, էլեկտրասրտագրություն, էխոսրտագրություն, արտաքին շնչառական ֆունկցիայի ստուգում), խորխի բակ-հետազոտություն և որոշ հորմոնների (կորտիզոլ, տեստոստերոն, պրոլակտին, TTG, T₃, T₄, anti-TG և anti-TPO) հետազոտություն: Կենսաքիմիական մեթոդներով արյան սիժուկում որոշվել են մի շարք ցուցանիշներ (ընդհանուր սպիտ ու բաղադրիչներ, կրեատինին, միզանյութ, ԱՍՏ, ԱԼՏ, բիլիռուբին, կոագուլոգրամմայի մի շարք ցուցանիշներ, C ռեակտիվ սպիտ):

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԳՅՈՒՆՔՆԵՐԸ

Աղյուսակ 1-ում ներկայացված է ԱՀԹ-ներով հիվանդացածների համեմատական բնութագիրը՝ ըստ գանգատների և օբյեկտիվ հետազոտության տվյալների:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ ԱՀԹ-ների դեպքերը պատվաստման և չպատվաստման պարագայում միմյանցից տարբերվում են իրենց կլինիկական ընթացքով, հիվանդների գանգատներով և օբյեկտիվ հետազոտության տվյալներով:

Աղյուսակ 1

ԱՀԹ-ՆԵՐՈՎ ՀԻՎԱՆԳՆԵՐԻ ԳԱՆԳԱՏՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԸ

Տվյալներ		Տվյալ ախտանիշն ունեցող հիվանդները			
		I խումբ		II խումբ	
		քիվր	%-ը	քիվր	%-ը
Գանգատներ	Հագ	234	80,6	105	64,4
	Ցավ կրծքավանդակում	74	25,5	65	39,9
	Չոր հագ	115	36,7	76	46,6
	Խորխոտ հագ	94	32,4	107	65,6
	Արյունախիտում	115	39,7	15	9,2
	Ընդհանուր թուլություն	173	59,7	138	84,7
	Հևոց	72	24,8	49	30,1
	Դող, սարսուռ	152	52,4	39	23,9
	Գլխացավ	68	23,4	25	15,3
	Հողացավ	38	13,1	9	5,5
	Գլխապտույտ	8	2,8	3	1,4
	Վատ ախորժակ	43	14,8	18	11,0
	Քնի վատացում	25	8,6	12	7,4
Օբյեկտիվ հետազոտության տվյալներ	Մաշկը գունատ է	38	13,1	11	6,7
	Պերիֆերիկ ավազանագույները մեծացած են	53	18,3	5	3,1
	Կա տենդ	283	97,6	142	87,1
	Պերկուտոր հնչյունը կարճացած է	113	39,0	56	34,4
	Պերկուտոր հնչյունը բթացած է	88	30,3	43	26,4
	Կան տարբեր տրամաչափի թաց խզզոցներ	290	100,0	147	90,2
	Սրտի տոները խլացած են	183	63,1	38	23,3
Լյարդը մեծացած է 1–2 և ավելի սմ-ով	104	35,9	12	7,4	

Փայծաղը մեծացած է	37	12,8	13	8,0
Որովայնը հանգիստ է	290	100,0	163	100,0
Միզարձակումը խանգարված է	14	4,8	11	6,7
Վահանաձև գեղձը մեծացած է	12	4,1	4	2,5
Կա հեմոռագիկ ավելոյիտ	27	9,3	0	0,0

Հարկ է նշել, որ երկու խմբում էլ թոքաբորբերն սկսվել են սուր ձևով, սակայն նկատելի են հետևյալ օրինաչափությունները.

1) մինչև ՀՀ ՁՈՒ-ի անձնակազմի համատարած պատվաստման համակարգի ներդրումը ԱՀԹ-ների սկիզբը հիշեցրել է դասական կամ կրուպոզ թոքաբորբ կամ բրոնխոպնևմոնիա,

2) 2010–2014 թթ. ժամանակահատվածում ՀՀ ՁՈՒ-ի անձնակազմի շրջանում ԱՀԹ-ների կլինիկայում ըստ հիվանդության ընթացքի կարող ենք առանձնացնել երեք շրջան.

- 1-ին շրջան, որում այն հիշեցրել է վերին շնչուղիների կատարը և դրսևորվել է ջերմության կտրուկ բարձրացմամբ մինչև 39-40°C,

- 2-րդ շրջան, որում արձանագրվել է շնչափողի ու բրոնխների, թոքերի կամ այլ օրգան-համակարգերի ախտահարում, որոշ դեպքերում զարգացել է հեմոռագիկ ավելոյիտ,

- ելքի շրջան:

Տպավորություն է ստեղծվում, որ պատվաստվածների դեպքում հիվանդությունն ավելի ծանր ընթացք է ունեցել, բավական լուրջ ինտոքսիկացիայով, ինչի վկայությունն է այն փաստը, որ առաջին խմբում ավելի հաճախ են դիտվում.

- արյունախիսման դեպքեր՝ 4,3 անգամ,
- դող, սարսուռ՝ 2,2 անգամ,
- պերիֆերիկ ավշահանգույցների մեծացում՝ գրեթե 6 անգամ,
- լյարդի մեծացում՝ 4,9 անգամ:

Բացի այդ՝

- առաջին խմբի 27 հիվանդի դեպքում ախտորոշվել է հեմոռագիկ ավելոյիտ, որը երկրորդ խմբում ընդհանրապես չի արձանագրվել,

- երկրորդ խմբում ԱՀԹ-ների խիստ ծանր դեպքեր չեն դիտվել:

Թոքերի ռենտգենաբանական հետազոտության տվյալները ներկայացված են աղյուսակ 2-ում:

Աղյուսակ 2

ԱՀԹ-ՆԵՐՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ԹՈՔԵՐԻ ՌԵՆՏԳԵՆԱԲԱՆԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՊՏԱԿԵՐԸ

Տվյալներ		Տվյալ ախտամիջն ունեցող հիվանդները			
		I խումբ		II խումբ	
		թիվը	%-ը	թիվը	%-ը
Ախտահարված սեզնոնների քանակը	մեկ	114	39,3	121	74,2
	երկու	69	23,8	26	16,0
	երեք և ավելի	34	11,7	11	6,8
	բազմաբլթային	45	15,5	2	1,2
	սուբտոտալ	28	9,7	3	1,8
Տեղակայումը	աչից	127	50,7	94	57,7
	ձախից	84	29,0	51	31,3
	երկկողմանի	79	20,3	18	11,0

Վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- առաջին խմբում գերակշռում են մեկից ավելի սեզնոնների ախտահարումները, համեմատվող խմբում՝ մեկ սեզնոնի,
- բազմաբթյախին և սուբտոտալ թոքաբորբերն առաջին խմբում կազմում են 25,2 %, իսկ երկրորդում՝ 3 %,
- ըստ տեղակայման՝ երկու խմբերում էլ ավելի շատ են աջակողմյան թոքաբորբերը, սակայն առաջին խմբում երկկողմանի թոքաբորբերը գրեթե 2 անգամ ավելի հաճախ են՝ 20,3 %, քան երկրորդ խմբում՝ 11,0 %:

Բավական հետաքրքրական տվյալներ են ստացվել արյան ընդհանուր (աղ. 3) և կենսաքիմիական հետազոտությունների ժամանակ (աղ. 4):

Աղյուսակ 3

ԱՀԹ-ՆԵՐՈՎ ՀԻՎԱՆԳՆԵՐԻ ՊԵՐԻՖԵՐԻԿ ԱՐՅԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Խմբեր		Ցուցանիշներ									
		Հեմոգլոբին	Էրիթրոցիտներ	արյ բվում	Լեյկոցիտներ					ԷՆԱ	
					մեյարոֆիլներ		լիմֆոցիտներ	Էոզիֆոֆիլներ	բազոֆիլներ		մոնոցիտներ
					ցուպիկափորներ	սեզնոնափորներ					
	Հսկողական	135,4 ±12,3	4,2± 0,32	6,5± 0,9	1,3± 0,8	65,2± 3,45	25,8± 1,2	1,2± 0,38	0,4± 0,08	6,1± 0,4	11,3± 2,5
I խումբ	թեթև՝ 114 (39,4 %)	128,3 ±10,4	4,5± 0,51	9,2± 1,6	2,7± 0,08	61,1± 5,41	28,5± 2,8	0,9± 0,33	0,5± 0,1	6,3± 0,1	18,7± 1,7*
	միջին՝ 91 (31,5 %)	122,5 ±11,8	3,2± 0,22	12,7± 1,9*	4,6± 1,0*	64,7± 6,37	22,3± 2,1	1,4± 0,28	0,2± 0,09	6,0± 0,3	20,5± 2,3*
	ծանր՝ 47 (16,1 %)	118,1 ±9,7	3,3± 0,28	7,4± 1,3	5,8± 1,3*	60,2± 4,29	26,3± 1,9	1,5± 0,26	0,2± 0,07	6,0± 0,4	30,3± 2,8*
	խիստ ծանր՝ 38 (13,0 %)	109,2 ±10,1	3,0± 0,31	5,2± 0,8	7,4± 2,2*	62,7± 3,52	22,2± 3,4	1,1± 0,19	0,5± 0,09	6,1± 0,7	48,1± 3,4*
II խումբ	թեթև՝ 110 (67,4 %)	138,5 ±11,2	4,7± 0,48	11,4± 2,2*	1,9± 0,22	58,0± 2,9	32,1± 2,9*	2,1± 0,4	0,3± 0,1	5,6± 0,5	16,3± 2,4*
	միջին՝ 46 (28,5 %)	141,4 ±10,6	4,3± 0,29	12,1± 2,0*	3,5± 0,9*	55,0± 4,2*	33,3± 3,2*	2,0± 0,3	0,3± 0,09	5,9± 0,3	25,3± 2,7*
	ծանր՝ 7 (4,1 %)	125,1 ±10,8	3,8± 0,71	10,3± 1,5*	4,8± 1,2*	58,9± 6,4	27,3± 1,8	3,4± 1,1	0,1± 0,07	5,4± 0,2	33,7± 2,1*

* Ծանոթագրություն. հսկողականի համեմատությամբ՝ p<0,05

Վերլուծությունը ցույց է տալիս, որ.

- հեմոգլոբինի և էրիթրոցիտների քանակի նվազման հստակ միտում դիտվում է միայն 1-ին խմբում՝ ծանր և խիստ ծանր վիճակներում,
- լիմֆոցիտոզ դիտվել է միայն 2-րդ խմբում՝ թեթև և միջին ծանրությամբ հիվանդների դեպքում,
- ԷՆԱ-ի մակարդակի բարձրացում առկա է բոլոր դեպքերում, մեծությունը համապատասխանում է ծանրության աստիճանին,
- ընդհանուր սպիտի նվազում դիտվել է 1-ի խմբի ծանր և խիստ ծանր և 2-րդ խմբի ծանր թոքաբորբերի դեպքում,

- այրումինի մակարդակի իջեցում դիտվել է 1-ին խմբի ծանր և խիստ ծանր թոքաբորբերի դեպքում,
- կրեատինինի քանակի հավաստի աճում դիտվել է 1-ին խմբի ծանր և խիստ ծանր թոքաբորբերով հիվանդների շրջանում,

Աղյուսակ 4

ԱՀԹ-ՆԵՐՈՎ ՀԻՎԱՆԴԱՆԵՐԻ ՊԵՐԻՖԵՐԻԿ ԱՐՅԱՆ ԿԵՆՍԱՔԻՄԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՏՎՅԱԼՆԵՐ

Արյան կենսաքիմիական հետազոտություն											
		ընդհանուր սպիտ	ալբումին	գլոբուլին	կրեատինին	ԱՍՏ	ԱՄՏ	բիլիռուբին ընդհ.	ֆիբրինոգեն	ՊԹԻ	C ռեակտիվ սպիտ
Հսկողական		74,7 ± 3,4	44,1 ±2,9	30,5 ±1,9	84,2 ±4,3	34,1± 4,5	28,5 ±2,6	17,4± 3,1	4,2± 0,7	88,0 ±3,8	3,7± 0,8
I խումբ	թերև՝ 114 (39,4 %)	67,5 ± 4,1	39,4± 3,1	28,2 ±1,9	78,4 ±4,3	30,1± 3,3	26,5 ±2,5	18,1 ±3,1	4,1± 0,3	84,6 ±5,5	22,5 ±4,3*
	միջին՝ 91 (31,5 %)	72,4 ± 5,8	46,2± 3,6	25,4 ±1,8	94,5 ±5,8	28,6± 2,8	32,4 ±3,2	20,3 ±2,6	3,6± 0,5	80,3 ±7,3	27,9 ±3,8*
	ծանր՝ 47 (16,1 %)	56,5 ±3,8*	32,5± 1,9*	24,4 ±2,8	110,6 ±4,7*	45,8± 3,4*	59,3 ±2,1*	23,1 ±4,2	2,8± 0,6	75,4 ±6,8	39,4 ±2,9*
II խումբ	թերև՝ 110 (67,4 %)	78,5 ±4,4	45,7± 3,8	34,2 ±3,1	87,6 ±5,5	40,3± 3,9	35,6 ±4,4	15,9 ±1,6	4,1± 0,1	84,6 ±4,5	18,2 ±2,6*
	միջին՝ 46 (28,5 %)	77,2 ±3,8	47,2± 2,5	30,1 ±2,3	95,5 ±7,9	42,6± 3,3	41,2 ±3,8*	17,5 ±2,6	3,6± 0,4	80,0 ±5,4	22,5 ±4,7*
	ծանր՝ 7 (4,1 %)	61,0 ±4,2*	38 ±3,1	22,5 ±3,2*	94,2 ±5,5	45,1± 2,6*	48,4 ±2,9*	20,4 ±3	3,1± 0,3	81,3 ±6,1	31,7 ±3,6*

* Ծանոթագրություն. հսկողականի համեմատությամբ p<0,05

- ԱՄՏ-ի մակարդակը հավաստի կերպով բարձրացել է 1-ին և 2-րդ խմբերի՝ ԱՀԹ-ների համապատասխանաբար ծանր ու խիստ ծանր և ծանր ընթացքների դեպքում,
- ԱՍՏ-ի մակարդակի բարձրացում դիտվել է 1-ին և 2-րդ խմբերի ծանր ու խիստ ծանր և միջին ծանրությամբ ու ծանր դեպքերում,
- ընդհանուր բիլիռուբինի մակարդակը բարձր է եղել միայն 1-ին խմբի խիստ ծանր ընթացքով թոքաբորբերի դեպքում,
- C ռեակտիվ սպիտի մակարդակի հավաստի բարձրացում դիտվել է բոլոր խմբերի հիվանդների համար:

Աղյուսակ 5-ում մի շարք հորմոնների հետազոտության տվյալներն են:

Ռեսուրսները մերկայացված հորմոնների մակարդակների տատանումները, վերլուծելով ու հիմնավորելով դրանց ախտաձագումնային հիմքերը՝ կարող ենք եզրակացնել, որ գործ ունենք ակնհայտ դիսհորմոնոզի հետ: Կարծիք է հայտնվել, որ պարտադիր զինվորական ծառայության գորակոչված և հավաքակայանում 8 կառավարելի վարակների կանխարգելման համար պատվաստանյութերով ու «Պնևմո-23»-ով պատվաստված զինծառայողների օրգանիզմում հարմարվողականության պրոցեսը ԱՀԹ-ների զարգացման

պարագայում ուղեկցվում է ներզատիչ համակարգում տեղի ունեցող որոշակի փուլային տեղաշարժերով, և դա կարող է հանգեցնել պաշտպանիչ-հարմարվողական մեխանիզմների գերլարման ու հյուծման, ինչն էլ արձանագրվել է տվյալ հետազոտությամբ:

Աղյուսակ 5

ՀԵՏԱԶՈՏՎԱԾՆԵՐԻ ԱՐՅԱՆ ՍԻՃՈՒԿՈՒՄ ՊՐՈՆԱԿՏԻՆԻ,
ՏԵՍՏՈՍՏԵՐՈՆԻ, T₃-Ի, T₄-Ի, TTG-Ի, ԿՈՐՏԻԶՈՒԼԻ, ANTI-TG-Ի
ԵՎ ANTI-TPO-Ի ՍԱԿԱՐԳԱԿՆԵՐԸ

Ցուցանիշներ	Գործնականում ստողջներ	Հիվանդների խմբեր			
		2010/1	2010/2	2011/1	2011/2
պրոլակտին	9.71±2.17	10,68±1,55	9,96±1,55	10,68±3,32	10,22±1,75
տեստոստերոն	5.31±0.98	4,36±0,91	4,98±0,99	4,48±1,13	4,40±0,96
կորտիզոլ	462.07±89.97	395,7±89,80	395,02±107,39	434,63±74,98	402,92±110,17
T ₃	1.52±0.23	1,25±0,18	1,33±0,22	1,38±0,19	1,33±0,24
T ₄	7.41±1.10	9,27±1,39	9,37±1,92	9,24±1,57	9,36±1,60
TTG	2.64±0.79	2,02±0,78	1,90±0,76	2,10±0,71	1,89±0,72
anti-TG	17.95±5.47	17,33±8,87	15,21±4,62	17,34±7,96	16,47±8,28
anti-TPO	13.07±4.74	7,96±4,12	7,19±2,88	7,95±4,04	7,84±4,69

Խորիսի մանրէաբանական հետազոտությունը կատարվել է այլ հոսպիտալներում հիվանդների հակաբիոտիկային (ռոցեֆին, ցիպրոֆլոքսացին) բուժման ֆոնի վրա, անջատվել են տարբեր մանրէներ՝ ստաֆիլոկոկ, ստրեպտոկոկ, պնևմոկոկ և այլն: Վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր տարիներին էլ գերակշռել է ստրեպտոկոկային պնևմոնիան (*streptokokayin pneumonia*): Դրանով հիվանդների բաժնեմասի տատանումներն ըստ տարիների 42,8–50,9 %-ի միջակայքում են:

ԲՈՒԺՄԱՆ ՏԱԿՏԻԿԱՆ

Մասնագիտական գրականության ուսումնասիրությունը⁸ ցույց է տալիս, որ թոքաբորբերի բուժման տակտիկան պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առնել դեղագիտատնտեսական մոտեցումները: Բազմաթիվ դեղագիտատնտեսական հետազոտություններով ցույց է տրվել, որ հիվանդի բուժման արժեքը որոշվում է ոչ թե հակաբիոտիկի գնով, այլ հիվանդի առողջացման ժամկետներով և հիվանդության բարդությունների բուժման արժեքով: Համարվում է, որ ստացիոնարում անհրաժեշտ է ունենալ հակաբիոտիկակայությունության տեղայնացված անձնագիր և, վերջինիս հիման վրա, դեղագիտատնտեսական ցուցանիշների հաշվառմամբ, հակաբիոտիկների ֆորմուլյար, որի ստեղծման հիմքն են՝ հիվանդության նոզոլոգիական կառուցվածքը, հարուցիչների մանրէային

⁸ Տես, օրինակ, *Л. А. Александян, А. Л. Верткин, М. М. Шамулова*. Принципы антибактериальной терапии пневмонии. «Лечащий врач», 2001, № 1:

ուրվապատկերը, դեղորայքակալունության բնույթն ու մակարդակը, ապացուցողական հետազոտությունների արդյունքները հակամանրէային դեղերի համեմատական արդյունավետության տեսակետից, դեղագիտատնտեսական վերլուծությունը, ինչպես նաև բյուջեի իրական հնարավորությունները, պարտադիր բժշկական ապահովագրման հիմնադրամները և իրենք՝ հիվանդները: Թոքաբորբերի էթիոտրոպ բուժումն սկսվել է անհապաղ՝ ախտորոշման հաստատումից անմիջապես հետո, ըստ հարուցիչի մասին փորձով հաստատված պատկերացումների, քանի որ խորխի մանրէաբանական հետազոտությունը պահանջել է ժամանակ (ոչ պակաս, քան 2 օր):

Թեթև ընթացք ունեցող թոքաբորբերի ժամանակ ինտենսիվ թերապևտիկ միջոցառումներ չեն պահանջվել, բավական է եղել անկողնային ռեժիմ և ազիթրոմիցինի ներբերանային (*per oral*) նշանակում:

Միջին ծանրության թոքաբորբերի ժամանակ ազիթրոմիցինի ներբերանային ընդունումը համատեղել ենք ցեֆալոսպորինների խմբից ցեֆտրիաքսոմի հետ, միևնույն ժամանակ, ձեռնարկել ենք ինֆուզիոն թերապիա՝ դրանով իսկ ապահովելով դեզինտոքսիկացիան և վարակային-թունավոր շոկի կանխարգելումը:

Ծանր թոքաբորբերի բուժումը եղել է համալիր՝ հետևյալ դեղամիջոցների կիրառմամբ.

- համարժեք հակամանրէային թերապիա (մակրոլիդների խմբից՝ ռուլիդ, ազիթրոմիցին, ցեֆալոսպորիններ՝ ցեֆտրիաքսոն, β-լակտամներ՝ կարբապենեմներ, ֆտորիսինոլոններ՝ ցիպրոֆլոքսացին),
- ինֆուզիոն թերապիա (համարժեք քանակով արյան փոխարինիչ հեղուկներ),
- անոթային անալեպտիկներ, վազոպրեսորներ (մեզատոն, դոպամին),
- ոչ ստերոիդային դեղեր (դիկլոֆենակ, ինդոմետացին և այլն),
- միզամուղներ՝ արյան փոքր շրջանի գերծանրաբեռնվածությունը կանխելու նպատակով,
- միկրոթրոմբոզների կանխարգելման համար ուղղակի հակամակարդիչներ (ֆրաքսիպարին),
- խորխաբեր-խորխալույծ դեղեր՝ բրոմհեքսին, ացետիլցիստեին և այլն, իսկ բրոնխներում մածուցիկ խորխի կուտակման հետևանքով բրոնխային անցանելիության խանգարման և անարդյունավետ հազի դեպքում՝ սանացիոն բրոնխոսկոպիա,
- շնչառական անբավարարության դեպքում նշանակվել են խոնավացրած թթվածնով ինհալյացիաներ և բրոնխոսպազմոլիտիկներ, շնչառական անբավարարության պահպանման դեպքում և սատուրացիայի անկման դեպքում կիրառվել են ինտուբացիա և թոքերի արհեստական շնչառություն:

Վերը նշված միջոցները նպաստել են թոքաբորբով հիվանդացած զինծառայողների առողջացմանը՝ կլինիկական, լաբորատոր և ռենտգենաբանական չափորոշիչներով:

ВОЕННАЯ МЕДИЦИНА

**К ПРОБЛЕМАМ КЛИНИКИ И ЛЕЧЕНИЯ ЛИЦ,
ПРИВИТЫХ К 9 УПРАВЛЯЕМЫМ ИНФЕКЦИЯМ
И ЗАБОЛЕВШИХ ВНЕБОЛЬНИЧНОЙ ПНЕВМОНИЕЙ,
В ВОИНСКИХ КОЛЛЕКТИВАХ**

*М. З. НАРИМАНЯН, доктор медицинских наук, профессор, ректор ЕГМУ,
С. Г. ГАЛСТЯН, доктор медицинских наук, профессор, полковник м/с, Начальник
ВМФ ЕГМУ, К. А. ХАЧАТРЯН, полковник м/с, Начальник ВМУ ВС РА,
А. А. АСАТУРЯН, полковник м/с, Начальник ЦКВГ МО РА,
А. А. ГРИГОРЯН, кандидат медицинских наук, подполковник м/с,
ведущий терапевт ЦКВГ МО РА, М. В. САРГСЯН, кандидат медицинских наук,
доцент, подполковник м/с, Начальник терапевтического отделения ЦКВГ МО РА*

РЕЗЮМЕ

В настоящее время во многих государствах заболеваемость внебольничной пневмонией (ВП), смертность и летальность остаются высокой: в структуре причин смерти ВП занимает 4–5 место, а среди инфекционных болезней – 1 место. Проблема ВП продолжает оставаться актуальной и для Вооруженных сил. При этом доказана высокая эффективность применения вакцины «Пневмо-23» для снижения заболеваемости внебольничной пневмонией.

В связи с тем, что в литературе нет соответствующих данных, авторами были изучены особенности возникновения, течения, клиники и лечения внебольничной пневмонии у 290 больных мужского пола в возрасте 18–27 лет (2010–2014 гг.), привитых к 9 управляемым инфекциям (краснуха, корь, свинка, столбняк, дифтерия, менингококковый менингит, гепатит А, туляремия) и вакциной «Пневмо-23».

Группу сравнения составили 163 лица того же возраста и пола, заболевшие ВП, но не привитые от указанных инфекций (2002–2006 гг.).

Контрольную группу составили 50 практически здоровых юношей (абитуриенты военно-учебных заведений).

Полученные данные свидетельствуют, что для этого типа пневмонии существуют особенности: пневмония развивается на фоне еще не сформировавшегося иммунитета; основным возбудителем является *Streptococcus pneumoniae*; клиническое течение атипичное и характеризуется молниеносным развитием геморрагического альвеолита; клиническая картина отстает от рентгенологической; в плане лечения оправдана комбинация цефалоспоринов и макролидов.

ON THE ISSUES OF THE CLINICAL PICTURE AND TREATMENT
OF THE PERSONS INOCULATED AGAINST 9
CONTROLLABLE INFECTIONS AND HAVING DEVELOPED
COMMUNITY-ACQUIRED PNEUMONIA IN MILITARY PERSONNEL

*M. Z. NARIMANYAN, Doctor of Medicine, Professor, Rector, YSMU,
S. G. GALSTYAN, Doctor of Medicine, Professor, Colonel of Medical Service,
Head of the Military Medical Department, YSMU, K. A. KHACHATRYAN, Colonel
of Medical Service, Chief of the Military Medical Department, RA Armed Forces,
A. A. ASATOURYAN, Colonel of Medical Service, Head of the Central Clinical
Military Hospital, MOD, RA, A. A. GRIGORYAN, PhD in Medicine, Lieutenant Colonel
of Medical Service, senior GP, Central Clinical Military Hospital, MOD, RA,
M. V. SARGSYAN, PhD in Medicine, Associate Professor, Lieutenant Colonel
of Medical Service, Head of the Therapeutic Department, Central Clinical
Military Hospital, MOD, RA*

SUMMARY

Currently, the morbidity with community-acquired pneumonia (CAP) and mortality from it remain high in many countries: CAP takes the 4th – 5th places among the death causes, and the 1st – among infectious diseases. The problem of CAP keeps on being actual also for the Armed Forces. At the same time high efficiency of the “Pneumovax 23” vaccine for reducing the sickness rate of community-acquired pneumonia has been proven.

Since there is no relevant data in the literature, the authors have studied the features of origin, clinical course and picture, as well as treatment of community-acquired pneumonia of 290 male patients aged 18 – 27 (2010 – 2014), who were vaccinated against 9 controllable infections (rubella, measles, mumps, tetanus, diphtheria, meningococcal meningitis, hepatitis A, tularemia) and inoculated with the “Pneumovax 23” vaccine.

The comparison group was made up of 163 persons of the same age and sex, who fell ill with CAP, but were not vaccinated against these infections (2002 – 2006).

The control group consisted of 50 practically healthy young men (entrants of military educational institutions).

The received data shows that this type of pneumonia has some peculiarities: it develops against the non-developed immunity; the main causative agent is *Streptococcus pneumoniae*; the clinical course is atypical and is characterized by fulminant behavior of hemorrhagic alveolitis; the clinical picture lags behind roentgenologic one; in terms of treatment the combination of cephalosporins and macrolides is justified.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԲԱՆԱԿԻ ՍՊԱՌԱՋԻՆՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ**

Մ. Լ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր*



1918 թ. մայիսի 28-ին հայկական պետականության վերականգնման հետ միաժամանակ կազմավորվեցին նաև հայկական Ջինված ուժերը, որոնք կոչված էին կատարելու հայ ժողովրդի և պետության պաշտպանության կարևորագույն գործը:

1918 թ. մինչև 1920 թ. մայիսը Հայաստանի Հանրապետության բանակն սպառազինված էր հիմնականում նախկին ռուսական Կովկասյան բանակի՝ Հայաստանի տարածքում թողած զենքով և զինամթերքով, մասնավորապես՝ «Մոսին», «Լեբել» և «Բերդան» («Բերդանկա») համակարգի հրացաններով, «Մաքսիմ», «Կոլտ», «Լյուիս» գնդացիներով, ինչպես նաև ոչ մեծ քանակությամբ այլ համակարգի գնդացիներով:

Հրետանում ներառված էին ռուսական մակնիշի 3 դյույմանոց թեթև և լեռնային թնդանոթներ, ինչպես նաև 48-մմ հասիքներ:

Ավիաջոկատը, որն ստեղծվել էր 1918 թ. օգոստոսի վերջին՝ Հայկական կորպուսի ավիաջոկատի հիման վրա, և որի առաջին հրամանատարը պորուչիկ Վոիպովն էր, հիմնականում համալրված էր «Վուազեն», «Մորան» և «Նյուպոր» մակնիշի ինքնաթիռներով, որոնց թիվը, անսարքների հետ, հասնում էր 8-ի: Սակայն պահեստամասեր չլինելու պատճառով 1919 թ. վերջին թռիչքի համար պիտանի էին մեկ «Մորան» և մեկ «Նյուպոր»¹:

Ավիաջոկատը նոր ինքնաթիռներով համալրելու նպատակով Ֆրանսիա գործուղվեց կապիտան Գուլյանը, որը Հայաստանի կառավարության առաջադրանքով Մարսելում գնեց «Սալմոն Ա2Ա» մակնիշի երկու ինքնաթիռ: Դրանք պետք է օգտագործվեին ռմբակոծման և հետախուզության համար՝ թռչելով ժամում 200 կմ արագությամբ²:

Ռազմական նախանշանակման բեռների փոխադրման նպատակով Սևանի լճում գործում էր նավատորմիկ՝ բաղկացած շարժիչներով օժտված մի քանի թիա-

* Այս տարի հուլիսի 3-ին լրացավ պատմական գիտությունների դոկտոր Մուրադ Լևոնի Կարապետյանի ծննդյան 50-ամյակը: ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի խմբագրությունը շնորհավորում և հետագա հաջողություններ է մաղթում վաստակաշատ գիտնականին, որի հետ հաջողությամբ համագործակցում է 1995 թվականից՝ հանդեսի հիմնադրման տարվանից:–*Խոթք*:

¹ Տես Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 276, ց. 1, գ. 79, ք. 46–52:

² Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 442, ք. 165:

նավերից և «Աշոտ Երկաթ»՝ մինչև 1000 փութ բեռնատարողությամբ երկկայմ առագաստանավից, որի վրա տեղադրված էին մեկ հրանոթ, երկու գնդացիր և լուսարձակ³: 1920 թ. սեպտեմբերին Շարուրից Երևանով Ելենովկա տեղափոխվեց նաև ռուսական բանակից մնացած (նախատեսվում էր այն ուղարկել Վան) «Սեսարիցա Նյուշա» նավը, որը վերանվանվեց «Գեղանուշ»⁴:

Բանակի սպառազինության մեջ կային նաև սառը զենքի տեսակներ՝ սվիններ, սրեր և դաշույններ: Հանդերձանքը ևս հիմնականում ռուսական արտադրության էր⁵:

1920 թ. մայիսից Հայաստանի Հանրապետության բանակի սպառազինության և հանդերձավորման խնդիրներն սկսեցին լուծվել դաշնակից տերությունների, մասնավորապես՝ Անգլիայի, կառավարության առաքումների հաշվին: 1920 թ. հուլիսի 25-ին Փոթիի նավահանգիստ ժամանեց մի անգլիական նավ, որը հայկական բանակի համար բերեց «Բոշ» համակարգի 25 հազար հրացան, «Մաքսիմ» համակարգի 400 թեթև գնդացիր, «Վիկերս» տեսակի 58 մլն փամփուշտ, 40 հազար լրակազմ համազգեստ, 500 հեռադիտակ, ինչպես նաև մեծ քանակությամբ դեղորայք և վիրաբուժական գործիքներ⁶: Անգլիայից ռազմական բեռները նավերով հասցվում էին Վրաստանի Փոթի կամ Բաթում նավահանգիստներ, իսկ այնտեղից երկաթուղով փոխադրվում Երևան: Սակայն Վրաստանի կառավարությունը որպես փոխադրավարձ իրեն էր վերցնում այդ զենքի ու զինամթերքի 25 տոկոսը⁷:

1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը Անգլիայից ստացվեց և հայկական բանակի զորամասերին ու ստորաբաժանումներին բաժանվեց 29 հազար լրակազմ հագուստ (վերարկուներ, բաճկոններ, անդրավարտիքներ, գլխարկներ) և զինհանդերձանք (իրերի տոպրակներ, փամփշտակալներ, գոտիներ, ջրամաններ և կաթսայիկներ)⁸: Հայաստանի վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի տվյալներով՝ 1920 թ. հայկական բանակին Անգլիայի ցուցաբերած օգնության ընդհանուր գումարը կազմել է 1,2 մլն անգլիական ֆունտ ստեռլինգ⁹:

Հայկական բանակի համար Անգլիայից ռազմական օգնություն ստանալու գործում մեծ դեր կատարեցին Փարիզի խաղաղության վեհաժողովում Հայաստանի պատվիրակությունը, որը գլխավորում էր Ավետիս Ահարոնյանը և, մասնավորապես, այդ պատվիրակության ռազմական կցորդ զեներալ Գաբրիել Ղորղան-

³ Տես նույն տեղում, ֆ. 276, ց. 1, գ. 79, թ. 52:

⁴ Տես նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 190, թ. 117:

⁵ Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Մ. Լ. Կարապետյան*, Հայաստանի Հանրապետության բանակի կազմավորումը (1918–1920 թթ.): «ՀԲ», 1995, հմ. 5–6:

⁶ Տես «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում»: Փաստաթղթերի և նյութերի ժողովածու: Ե., 1960, էջ 359:

⁷ Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 498, թ. 76:

⁸ Տես նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 186, ինչպես նաև Հ. *Տեր-Հակոբյան*, Հայաստանի վերջին աղետը: Կ. Պոլիս, 1921, էջ 86:

⁹ Տես *Ա. Խարիսյան*, Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը: Բեյրութ, 1968, էջ 183:

յանը: Դեռ 1919 թ. սեպտեմբերի 2-ին՝ բանակցությունների ժամանակ, զեներալը բրիտանական ռազմական նախարարության ներկայացուցիչներին ներկայացրեց Հայաստանի Հանրապետության ռազմական ուժերի և դրանց կարիքների մասին հատուկ հուշագիր՝ նշելով, որ համապատասխան զենքի և զինամթերքի տրամադրման դեպքում դրանք կօգտագործվեն բացառապես Հայաստանի տարածքի պաշտպանության և երկրում կարգ ու կանոնի հաստատման համար¹⁰: Գ. Դորդանյանը Ավետիս Ահարոնյանի ու Պողոս Նուբար փաշայի հետ ակտիվորեն մասնակցեց Լոնդոնի խաղաղության վեհաժողովին, որը նվիրված էր Արևելյան և, մասնավորապես, Հայկական հարցին¹¹:

Հայաստանի բանակը զինամթերքով և հանդերձանքով ապահովեցին նաև Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարության համբարակային վարչության ենթակայության տակ գտնվող ռազմական արհեստանոցները և գործարանները, որոնք աշխատում էին ինչպես ներմուծված, այնպես էլ տեղական հումքով: Օրինակ՝ մինչև 1920 թ. օգոստոսի 1-ը Երևանի և Կարսի արհեստանոցներում բանակի համար պատրաստվեց 17000 սուր, 3500 քլունգ և 25225 ամրաշինական գործիք: Նույն ժամանակահատվածում այդ արհեստանոցներում պահեստավորվեց 743 փութ դինամիտ, 3971 փութ պիրօքսիլին (պայթուցիկ նյութ), 17600 շրջանակ բիքֆորդյան քուղ, 15 հազար ճայթուկ*, ձեռքի ու այլ ռումբերի համար նախատեսված 73680 պայթուցիչ: Նույն ժամանակամիջոցում Ալեքսանդրապոլի կոշիկի և սայլաքարշային արհեստանոցներում կարվեց 2994 գույգ կոշիկ, վերանորոգվեց գործանսերից ստացված 4275 գույգ կոշիկ, պատրաստվեց 350 ձիաթամբ, 4030 գոտի: Այդտեղ վերանորոգվեցին նաև հանրապետության տարբեր վայրերում ռուսական բանակի թողած մեծ քանակությամբ երկձի, երկանիվ սայլեր և շարժական խոհանոցներ, ինչպես նաև այլ զինվորական գույք¹²:

Հայաստանի Հանրապետությունում զինամթերքի խիստ պակասը լրացնելու համար փամփուշտներ էին արտադրվում Քանաքեռի՝ 75 ձիաուժ և Ալեքսանդրապոլի՝ 35 ձիաուժ հզորությամբ փամփուշտի մեխանիկական գործարաններում**: 1920 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբերի 20-ը Քանաքեռի փամփուշտի գործարանում արտադրվեց 296 հազար, իսկ Ալեքսանդրապոլի համապատասխան ձեռնարկություններում՝ 492 հազար հատ փամփուշտ¹³:

Նշված ժամանակահատվածում հայկական բանակի սպառազինության կարիքները հոգաց նաև Հայաստանի մեկ այլ դաշնակից՝ զեներալ Գենիկիևի՝ Ռուսաստանի հարավի կամավորական բանակը, որի հետ կապը հաստատվեց դեռ 1918 թ. նոյեմբերին, երբ Հայաստանի Հանրապետության կառավարությանն

¹⁰ Տես ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 62, թ. 4-6, 8-10:

¹¹ Տես Գ. Ա. *Аветисян*. Генерал Гавриил Григорьевич Корганян. «Вестник общественных наук», 1997, № 2:

* Փոքրիկ պայթուցիկ և լուսարձակ:

¹² Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 184-190:

** 1920 թ. հոկտեմբերի 20-ի դրությամբ Քանաքեռի փամփուշտի գործարանում աշխատում էր ընդամենը 171, իսկ Ալեքսանդրապոլի գործարանում 175 բանվոր:

¹³ Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, թ. 189:

առընթեր՝ այդ բանակի ռազմական ներկայացուցիչ նշանակվեց գնդապետ Լեալին: Այդ նույն ժամանակ Կուբանում Հայաստանի ներկայացուցիչն էր Գրիգոր Չալխուշյանը¹⁴: Ինչպես նշում է զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, 1920 թ. մայիս–հունիս ամիսներին, երբ գրեթե սպառված էին հայկական բանակի փամփուշտի պաշարները, Դենիկինի բանակից ստացվեց ռուսական «Մոսին» հրացանի մոտ 3 մլն փամփուշտ: «Եթե այդ ռազմամթերքը չհասներ, իրոք Հայաստանը զինաթափ կարելի էր համարել այդ թվականներին, - գրում է Ռ. Տեր-Մինասյանը: Այդ փամփուշտները փրկեցին մեզ և միջոց տվին հետագա կռիվները առաջ տանելու»¹⁵:

Թիֆլիսում դիվանագիտական առաքելությանը կից՝ Հայաստանի զինվորական ներկայացուցիչ գեներալ Հովսեփ Քիչմիշյանը 1919 թ. նոյեմբերի 20-ին Հայաստանի զինվորական նախարարությանը հայտնեց «Ռուսաստանի հարավի զինված ուժերի» գլխավոր հրամանատարի որոշումը, որով Կամավորական բանակում ծառայող հայերն ազատվում էին զինվորական ծառայությունից՝ ծառայությունը Հայաստանում շարունակելու համար: Հիմնվելով Կուբանի կառավարությանը կից՝ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Սաղաթեյյանի նամակի վրա՝ Քիչմիշյանը հայտնեց, որ գեներալ Դենիկինը համաձայն է այդ զինվորներին զինել և որպես փախստականների Վրաստանի տարածքով ուղարկել Հայաստան: Հայաստանի զինվորական ներկայացուցիչը նախարարությունից խնդրեց Սևաստոպոլ ուղարկել փորձված սպաների՝ զինվորականներին Նովոռոսիյսկով, Փոթիով և Բաթումով Հայաստան տեղափոխելու գործը կազմակերպելու համար: Քիչմիշյանը տեղեկացրեց նաև, որ Հաշտության վեհաժողովի կողմից Հայաստանի կոմիսար նշանակված ամերիկացի գնդապետ Վիլյամ Հասկելի տեղակալ գնդապետ Ռեյը խուսափողական պատասխան է տվել Վրաստանի տարածքով գնացքները ամերիկյան դրոշի ներքո անցկացնելու իր առաջարկին¹⁶:

1918 թ. սեպտեմբերին Օմսկում Կոլչակի գլխավորած՝ Սիբիրի կառավարությանը կից Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ նշանակվեց Գրիգորի Չամոնը, որին սեպտեմբերի 24-ին ընդունեց Կոլչակը: Քննարկվեց համակենտրոնացման ճամբարներից թուրքահայ զինվորներին ազատելու և Հայաստան ուղարկելու հարցը, որին հավանություն տրվեց: Քննարկվեց նաև Սիբիրում բնակվող հայերի իրավական վիճակի հարցը¹⁷:

Հայկական բանակին զինամթերքով օգնեց նաև գեներալ Դենիկինից հետո սայիտակգվարդիական Կամավորական բանակի գլխավոր հրամանատարությունն ստանձնած գեներալ Վրանգելը: Մասնավորապես՝ 1920 թ. սեպտեմբեր – հոկտեմբեր ամիսներին գաղտնի՝ անկողնային պիտույքներով քողարկված, «Մերձավոր Արևելքում ամերիկյան օգնության կոմիտեի» («*Near East Relief*») միջոցով, Դրիմից գնացքով Վրաստանի տարածքով Ալեքսանդրապոլ հասցվեցին հրետա-

¹⁴ Տես նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 164, ք. 1–7:

¹⁵ Ռ. Տեր-Մինասյան, Հայ հեղափոխականի մը հիշատակները: Ե., 1990, հ. 6, էջ 261:

¹⁶ Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 44, ք. 10–12:

¹⁷ Տես նույն տեղում, գ. 455, ք. 36–38:

նային թեթև արկեր և ութ վագոն փամփուշտ¹⁸: 1920 թ. հոկտեմբերի 14-ին Սաղաթեղյանը Սևաստոպոլից հայտնեց Թիֆլիսում Հայաստանի Հանրապետության առաքելության զինվորական ներկայացուցչությանը, որ Կամավորական բանակից ստացել է մեկ միլիոն փամփուշտ: Նա նաև նշեց, որ գեներալ Վրանգելի շտաբի պետ գեներալ Շատիրովը թուրքերի հարձակման և Արևելյան Հայաստանի սահմաններ ներխուժման կապակցությամբ Հայաստանի նկատմամբ ցուցաբերեց բացառիկ կարեկցանք: Փամփուշտները Հայաստան ուղարկվեցին ռուսական բանակի ինժեներատեխնիկական բաժնի զինվորական ինժեներ Վահան Մելիք-Ղարազյոզյանի միջոցով, «Էլիտիֆոր» շոգեքարշով, անվճար: Սաղաթեղյանը խնդրեց վստահված անձ ուղարկել Փոթի՝ փամփուշտներն ստանալու և Հայաստան առաքելու համար¹⁹:

Հայկական բանակը օգնություն ստացավ նաև Հունաստանից: 1920 թ. օգոստոսին Բաթում ժամանեց հունական «Էլեֆթերիա» (Ազատություն) շոգեմավը, որը հայկական բանակի համար բերեց 10 հազար հրացան, 4 միլիոն փամփուշտ և 47 հայ կամավորների²⁰: Դրանից բացի, հունական բանակի ընդհանուր հրամանատար Փարասկևոպոլոսը Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին ուղարկեց 50 հատ հունական «Պատերազմական խաչ» շքանշան՝ մարտերում աչքի ընկած քաջարի հայ ռազմիկներին, սպաներին ու գեներալներին պարգևատրելու համար²¹:

Հայաստանի Հանրապետության բանակին նյութական օգնություն ցուցաբերելու գործին ակտիվ կերպով մասնակցեցին նաև սփյուռքահայերը: Նրանք հայկական բանակին օգնելու նպատակով իրենց համայնքներում պարբերաբար կազմակերպեցին դրամական հանգանակություններ, բազմիցս հավաքեցին և Հայաստան ուղարկեցին զենք և պարենամթերք: Այսպես. 1919 թ. մարտին Եթովպիայի (Հաբեշտան) մայրաքաղաք Ադիս Աբեբայում ապրող փոքրաքանակ հայկական գաղթօջախը հանգանակեց և Փարիզի խաղաղության խորհրդաժողովում Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ Ավետիս Ահարոնյանին ուղարկեց 11640 ֆրանսիական ֆրանկ²²: Դրամական հանգանակություններ կազմակերպեցին նաև Հարարե և Ջիբուտի քաղաքներում ապրող հայերը: Կ.Պոլսի հայկական բանակի նվիրահավաք կենտրոնը Ալեքսանդր Խատիսյանին տրամադրեց 66183 ռուսական ռուբլի և 21000 ռումինական լեյ, որ հավաքել էր Ռումինիայի Կոստանցա քաղաքի գաղթօջախի Հայկական միությունը²³:

1920 թ. Կ. Պոլսում լույս տեսնող «Ճակատամարտ» և «Վերջին լուր» թերթերի նախաձեռնությամբ հայկական բանակի համար կազմակերպված հանգանա-

¹⁸ Տես Շ. Ի. Кузнецова. Крах турецкой интервенции в Закавказье 1920-1921 гг. «Вопросы истории», 1951, № 9:

¹⁹ Տես ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 656, ք. 279:

²⁰ Տես նույն տեղում, գ. 442 (2-րդ մաս), ք. 378:

²¹ Տես նույն տեղում, ք. 339:

²² Տես «Վերածնունդ» (Փարիզ), 1919, հմ. 39-40:

²³ Տես ՀԱԱ, ֆ. 199, գ. 248, ք. 142-146:

կուրքյան շնորհիվ հավաքվեց 20 հազար ոսկի²⁴: Հայկական Ազգային պատվիրակուրքյան ղեկավար Պողոս Նուբար փաշան հայկական բանակի համար իր միջոցներով գնեց մեկ ինքնաթիռ²⁵:

1920 թ. մայիսին Կ. Պոլսի և Լոնդոնի հայկական կոմիտեները բանակի համար Հայաստան ուղարկեցին 5150 ձեռք սպիտակեղեն, 9808 գծամետր գործարանային կտավ, 207 զինվորական վերարկու, 35 մահուղե անդրավարտիք և 31 բաճկոն²⁶:

1920 թ. մայիսի 23-ին Նյու Յորքի հայկական բանակի հանգանակության հանձնախումբը «Քառնեզի հոլում» հրավիրեց ժողով, որտեղ հավաքվեց մեծ գումար: Այդ ժողովին մասնակցեց Հայաստանի Հանրապետության միացյալ պատվիրակությունը, որը գլխավորում էր գեներալ-մայոր Հակոբ Բագրատունին: Պատվիրակության կազմում էին Ամենայն Հայոց Կաթողիկոսի պատվիրակ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը, Ամերիկայում Հայաստանի Հանրապետության դեսպան դոկտոր Գարեգին Բաստրմաջյանը և ազգային-քաղաքական գործիչ Շահան Նաթալի²⁷: Հայկական բանակի Նյու Յորքի հանգանակության հանձնախումբը հրատարակում էր «Բանակին համար» թերթը, որտեղ հրապարակվում էին տեղեկություններ Հայաստանի ռազմաքաղաքական կյանքից և բանակին նյութական օգնություն ցուցաբերելու կոչեր:

Ամերիկահայությանն ուղղված այդ կոչերից մեկում ասված էր. «Օգնենք մեր քաջարի բանակին, և թող ազատության երկրորդ տարեդարձին թնդա մեր բանակի հաղթական ուռան մեր բարձրաբերձ սարերում, և թող թշնամին սարսափած դառնա ընտանի և քաղաքակիրթ ...»²⁸:

Դեռ 1919 թ. նոյեմբերի 22-ին՝ ԱՄՆ ժամանելու հենց առաջին օրը, Հայաստանի Հանրապետության միացյալ ռազմական առաքելության նախագահ Բագրատունին, հանդիսավոր պայմաններում ելույթ ունենալով Նյու Յորքի հայ սկանուների առջև, ամերիկահայ երիտասարդությանը կոչ արեց լինել Հայկ նահապետի արժանավոր ժառանգորդը՝ մատնանշելով պատվիրակության անդամ լեգենդար Անդրանիկի օրինակը²⁹: 1919 թ. դեկտեմբերի 7-ին Նյու Յորքի օդանավակայանում տեղի ունեցած բազմահազարանոց հավաքում ելույթ ունեցան Հովհաննես Քաջազնունին, Հակոբ Բագրատունին, Անդրանիկը, Գարեգին Բաստրմաջյանը, Հակոբ Տեր-Հակոբյանը: Առաջ քաշվեց «Մեկ ազգ, մեկ պայքար» կարգախոսը:

Ելույթ ունենալով Նյու Յորքի բազմահազարանոց հանդիսավոր հավաքում՝ Բագրատունին բարձր գնահատեց պետականության վերականգնման և հայրե-

²⁴ Տես Հ. Տեր-Հակոբյան, Նշ. աշխ., էջ 74:

²⁵ Տես «Վերածնունդ», 1919, հմ. 20–37:

²⁶ Տես ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 142, ք. 186:

²⁷ Տես «Բանակին համար» (Նյու Յորք), 1920 թ. մայիսի 23, *ևսևի*՝ ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 28, ք. 1–2:

²⁸ Տես ՀԱԱ, ֆ. 290, ց. 1, գ. 28, ք. 1–2:

²⁹ Տես Richard G. Hovhannisian. The Republic of Armenia: From Versailles to London 1919-1920. Berkeley, Los Angeles, London, 1982, Vol. 2, PP. 386–387:

նիքի պաշտպանության, անկախության օրոք ձեռք բերված նվաճումներին սատարելու գործում հայկական բանակի դերը: Նա հայտարարեց, որ հայ ազգը դարձրելով ապրել է օտարների լծի տակ: Եղել են ժամանակներ, երբ թվում էր, թե անկախության ձգտումը մեռած է: Բայց այս պատերազմում հայ ազգը չլվաճեց գոհոդությունների գնով ապացուցեց, որ կարող է ոչ միայն մարտիրոս լինել, այլև մարտնչել հանուն իր ազատության: Նա կռվով արժանացավ ազատության: Պատերազմի սկզբին հայերը կազմեցին կամավորական խմբեր, որոնք վերածվեցին կանոնավոր բանակի, և փառավոր հաղթանակի հասան: Պետք է հպարտանալ այդ բանակով: Հայ զինվորը դժվարին կացության մեջ, զուրկ հագուստից, ռազմամթերքից, մարտնչում էր մեր ազատության համար: Ազատություն ստանալու առաջին պայմանն է՝ ոչ թե խնդրել, այլ կռվով ձեռք բերել այն: Բագրատունու համոզմամբ, դրա ապացույցը տվեց մեր բանակը: Դրա շնորհիվ Արարատյան երկրում փողփողաց Հայկական դրոշը³⁰:

Ռազմական առաքելության անդամները ջերմ ընդունելության արժանացան նաև Բոստոնում: Գեկտեմբերի 14-ին տեղի ունեցած բազմահազարանոց հավաքում ընդունվեց Հայաստանի կառավարությունը ճանաչելու մասին բանաձև՝ ուղղված ԱՄՆ-ի Նախագահ Վիլսոնին, պետքարտուղար Ռոբերտ Լանսինգին, սենատոր Լոջին: 1919 թ. դեկտեմբերի վերջին գեներալ Բագրատունուն ընդունեց ԱՄՆ-ի ռազմական նախարար Նյուտոն Բեկերը: Գեներալը նախարարին հանձնեց հայկական ռազմական ուժերի թվակազմի և Հայաստանի Հանրապետության բանակի մասին մանրակրկիտ հուշագիր՝ նշելով, որ համապատասխան զենքի և հանդերձանքի տրամադրման դեպքում հայերն իրենք կարող են պաշտպանել իրենց հայրենիքը և գրավել այն հայկական տարածքները, որոնք իրենց էին տրված Մուդրոսի պայմանագրով, բայց թուրքերի կողմից հայաթափ էին արվել:

1920 թ. հունվարի 3-ին Բագրատունուն ընդունեց Լանսինգը: Պետքարտուղարը, մինչև հանդիպումը ծանոթանալով հուշագրի նյութերի հետ, հայտնեց Ամերիկայի դիրքորոշումը. ԱՄՆ-ը չի կարող ռազմական օգնություն տրամադրել մի երկրի, որը դեռ չի ստացել պաշտոնական ճանաչում³¹:

Այդ ժամանակ ամերիկյան հասարակական և պետական շրջաններում քննարկվում էր ԱՄՆ-ի կողմից Կոստանդնուպոլսից մինչև Բաքու միասնական մանդատի ընդունման հարցը, ինչը բխում էր առաջին հերթին թուրքական շահերից: ԱՄՆ-ում գտնվող հայկական ռազմական առաքելությունը ակտիվ պայքար ծավալեց Հայկական հարցի լուծման այդ աղետաբեր տարբերակի դեմ: Այդ գործում հատկապես մեծ դեր խաղաց Հակոբ Բագրատունին: Նա ԱՄՆ-ի տարբեր քաղաքներում հանդիպումներ ունեցավ հայտնի քաղաքական, ռազմական, կրոնական գործիչների, կոնգրեսականների, սենատորների հետ, ներկայացրեց Հայաստանի և տարածաշրջանի իրական վիճակը՝ նշելով ծանր դրությունից դուրս գալու ճանապարհները: Երկարատև բանակցություններից և քննարկումներից հետո մի խումբ հայտնի ամերիկյան գործիչներ՝ Ջեյմս Ջերարդը, Էլթոն Պար-

³⁰ Տես «Կոչնակ» (Նյու Յորք), 1919 թ. դեկտեմբերի 13:

³¹ Տես *Г. А. Аветисян*. Генерал Акоп Багратуни (1879–1943). «Историко-филологический журнал», 1997, № 1:

կերը, Էլիոտ Ռուտը, Նիկոլաս Բարտլը, Յակով Շումանը, Ջոն Գիբեմը, Ֆիլիպ Ռիմեյլանդերը, Ֆիքսը և ուրիշներ, 1919 թ. դեկտեմբերի 18-ին հուշագրով դիմեցին Նախագահ Վիլսոնին: Կոստանդնուպոլսի, Անդրկովկասի, Հայաստանի և Ադրբեջանի նկատմամբ միասնական մանդատի ընդունումը կնպաստեր թուրքական տիրապետության ընդարձակմանը, հայ ազգի բնաջնջմանը, 24 միլիոն մահմեդականների միավորմանը մեկ թուրքական պետության մեջ: Հեղինակները հանդես էին գալիս Հայաստանին անմիջական, մշտական և ուղղակի օգնություն ցույց տալու և Արարատից մինչև Կիլիկիա հայկական պետության ճանաչման օգտին³²:

ԱՄՆ-ում հայկական բանակի համար օգնություն ձեռք բերելու գործում ակտիվ աշխատանք ծավալեց նաև ՀՀ Դաշնակցության ամերիկյան մասնաճյուղը: 1920 թ. ամռանը բանակի օգտին ԱՄՆ-ում Հայ հեղափոխական դաշնակցություն կուսակցության կազմակերպած հանգանակությամբ հավաքվեց ավելի քան կես միլիոն ամերիկյան դոլար, Երևան հասցվեց մեծ քանակությամբ պաքսիմատ և պահածո³³:

Եվ այսպես. եթե Հայաստանի առաջին հանրապետության բանակի սպառազինումը սկզբնական շրջանում կատարվում էր ռուսական նախկին Կովկասյան բանակի թողած զենքով ու զինամթերքով, ապա հետագայում իրականացվում էր նաև Դենիկինի, Վրանգելի սպիտակգվարդիական Կամավորական բանակի, դաշնակից տերությունների, ՀՀ զինվորական նախարարության համբարակային վարչության մատակարարումներով, ինչպես նաև սփյուռքահայության հանգանակած միջոցներով:

³² Տես «The Joint Mandate Scheme: A Turkish Empire under American Protection». New York, 1919, PP. 8–10:

³³ Տես *Մ. Կրաջյան*, Հայաստանի Հանրապետություն: Թեիրան, 1982, էջ 423:

ВОЕННАЯ ИСТОРИЯ

СИСТЕМА ВООРУЖЕНИЯ АРМИИ ПЕРВОЙ АРМЯНСКОЙ РЕСПУБЛИКИ

М. Л. КАРАПЕТЯН, доктор исторических наук

РЕЗЮМЕ

28 мая 1918 г. – одновременно с восстановлением армянской государственности – были сформированы армянские Вооруженные силы. Для обеспечения безопасности армянского народа и организации обороны территории страны первоочередной задачей Правительства Армении стало формирование системы вооружения армянской армии. В начальный период вооружение армянской армии осуществлялось за счет вооружения и боеприпасов, оставленных прежней царской Кавказской армией, а в дальнейшем

вооружение поставлялось Добровольческими армиями Деникина и Врангеля, Великобританией, Грецией, Интендантским управлением Военного министерства РА, а также за счет средств, пожертвованных армянами Диаспоры – США, Эфиопии, Румынии и т. д.

MILITARY HISTORY

THE ARMY WEAPON SYSTEM OF THE FIRST ARMENIAN REPUBLIC

M. L. KARAPETYAN, Doctor of History

SUMMARY

The Armenian Armed Forces were established on 28 May 1918 – simultaneously with the restoration of the Armenian statehood. To ensure the security of the Armenian people and organize the territorial defense of the country the top priority of the Armenian Government was the formation of the weapon system of the Armenian Army. The equipment of the Armenian Army was initially carried out through the armament and ammunition left by the former tsarist Caucasian army. Further the weaponry was supplied by the Volunteer Armies of Denikin and Wrangel, by Great Britain, Greece, Quartermaster Directorate of the War Ministry of the Republic of Armenia, as well as through the funds donated by the Armenian Diaspora – US, Ethiopia, Romania, etc.

**ՏԱՂԱՆԴԱՎՈՐ ՉՈՐԱՎԱՐ
ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ ՀՐԱՉՅԱ ՀՄԱՅԱԿԻ
ԱՆԴՐԵՍՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ**

*Վ. Ա. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, գեներալ-մայոր, ՀՀ Պաշտպանության
նախարարին առընթեր բարձրագույն սպայակազմի
հանձնաժողովի նախագահ*



(Հողվածը նվիրված է Հայաստանի սահմանների անվտանգության նպատակով Քարվաճառի (Քելլաջարի) ազատագրման 21-րդ փարեղարձին):

Հրաչյա Հմայակի Անդրեսյանը ծնվել է 1932 թ. հունվարի 29-ին (ք. Կրասնոդար), մահացել 1999 թ. նոյեմբերի 9-ին (ք. Մոսկվա): Մեծ հայրդու աճյունը ամփոփված է Դոնի Ռոստովի Սուրբ Խաչ եկեղեցու բակում:

Հ. Անդրեսյանը 1952 թ. ավարտել է Թբիլիսիի հետևակային ռազմական ուսումնարանը, 1966 թ.՝ Մոսկվայի Մ. Ֆրունզեի անվան, 1972 թ.՝ ԽՍՀՄ Ձինված ուժերի գերագույն շտաբի ռազմական ակադեմիաները:

Հրաչյա Անդրեսյանը, Խորհրդային բանակում ծառայելով որպես գումարտակի, մոտոհրաձգային գնդի հրամանատար, Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգի հրամանատարի առաջին տեղակալ, Չեխոսլովակիայում՝ ռազմական խորհրդատու, ձեռք է բերել բարձր մակարդակի մարտական պատրաստություն և մեծ փորձ: Պարգևատրվել է ԽՍՀՄ, Գերմանիայի և Չեխոսլովակիայի կառավարական մարտական շքանշաններով ու մեդալներով: 1979 թվականին ստացել է Խորհրդային բանակի գեներալ-լեյտենանտի կոչում:

1992 թ. ապրիլին գեներալ-լեյտենանտ Հ. Անդրեսյանը կամավոր կերպով գալիս է Հայաստան՝ Հայրենիքը պաշտպանելու Ադրբեջանի ագրեսիայից:

Հայաստանի Ձինված ուժերին գեներալ-լեյտենանտ Հ. Անդրեսյանի զինվորագրվելը մեծ ոգևորությամբ ընդունեցին կադրային գեներալները, սպաները և, իհարկե, երկրապահները (ֆիդայիները): Նա ակտիվ մասնակցություն ունեցավ մարտական օպերացիաների մշակման և իրականացման գործում, վստահորեն ղեկավարեց հայկական ուժերի գործունեությունը՝ ուղղված Լաչինը և Ստեփանակերտը կապող ճանապարհային միջանցքի պահպանությանը և անվտանգության ապահովմանը, ինչը հնարավորություն տվեց ամրապնդելու բազմակողմանի կապերը Արցախի հետ, Շահումյանի և այլ վտանգված շրջանների հայ բնակչությանը տեղափոխելու Հայաստանի տարածք:

ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը գեներալ-լեյտենանտ

Հ. Անդրեսյանի մասին գրում է. «...Նա մեծ ներդրում ունեցավ ՀՀ Զինված ուժերի կազմավորման ու ամրապնդման, գլխավոր շտաբի վարչությունների և բաժինների կայացման գործում: Անընդհատ գտնվելով մարտական գործողությունների գոտում՝ հաճախ անձամբ էր ղեկավարում իր իսկ մշակած ու նախապատրաստած ... գործողությունները»¹:

Մեծ է եղել գեներալ-լեյտենանտ Հրաչյա Հմայակի Անդրեսյանի դերը Արցախի և Հայաստանի դեմ ագրեսիա ձեռնարկած ադրբեջանական զորքերի ջախջախման գործում: Գեներալ-լեյտենանտ Անդրեսյանը անձամբ ղեկավարել է մի շարք կարևոր ռազմական օպերացիաներ, բայց ամենից նշանավորը արժանի կերպով համարվում է Քարվաճառի օպերացիան: Ադրբեջանի ձեռնարկած այդ տիրապետչական հարձակողական «Մուրվիդաղ» օպերացիայի պլանի համաձայն՝ ադրբեջանցիները պետք է գրավեին Քարվաճառի ամբողջ տարածքը, ապա շարունակեին հարձակումը Մարտակերտի, Լաչինի և Հայաստանի Հանրապետության Վարդենիսի շրջանի ուղղություններով:

Կարևորելով «Մուրվիդաղ» օպերացիան՝ Ադրբեջանի ղեկավարությունը Հեյդար Ալիևի գլխավորությամբ ծավալուն և բազմակողմանի աշխատանք էր տարել պաշտպանության նախարարության և այլ ուժային կառույցների հետ, գլխավոր շտաբում, զորամասերում և դիվիզիաներում անցկացվել էին հրամանատարաշտաբային և հատուկ մարտավարական գորավարժություններ: Ադրբեջանական կողմը վստահ էր, որ բոլոր նախապատրաստական աշխատանքները և խնդիրները կատարվում են համաձայն «Մուրվիդաղ» ռազմավարական օպերացիայի պլանի, սակայն նրանք հաշվի չէին առել, որ իրենց ճանապարհին կանգնած են Հայկական բանակը և ամբողջ հայ ժողովուրդը, որ Մռավը Արցախի հինավուրց լեռնագագաթն է:

Հ. Ալիևը որոշել էր, որ հարձակողական օպերացիան պետք է սկսվի 1993 թ. դեկտեմբերի 20-ին՝ չեկիստի օրը, ըստ երևույթին, նկատի ունենալով, որ Խորհրդային Միությունում իր անցած չեկիստական ուղիով է ինքը հասել իշխանության գագաթին: Սակայն թշնամու զինված ուժերը, մասնավորապես՝ հարձակողական խմբավորումները, պատրաստ չէին մարտական գործողություններն սկսելու դեկտեմբերի 20-ին, և հակառակորդը լայնածավալ հարձակողական օպերացիան սկսեց 1993 թ. դեկտեմբերի 26-ին՝ խստաշունչ ձմռան պայմաններում, հարավից (Արաքս գետ) հյուսիս (Օմարի լեռնանցք) ավելի քան 300 կմ ձգվող ճակատով: «...Այս հարձակումը 1993 թ. հոկտեմբերի 3-ի նախագահական ընտրություններում համոզիչ հաղթանակ տարած Հ. Ալիևի փորձն էր՝ կատարելու մեր զորքերի կողմից ազատագրված տարածքները վերադարձնելու նախընտրական խոստումը»²:

Այս ուղղությամբ հակառակորդի ուժերի հարձակման կասեցման ու նրանց ոչնչացման պատասխանատվությունը դրված էր գեներալ-լեյտենանտ Հ. Անդրես-

¹ Մ. Օհանյան, Հայկական բանակի 20-ամյա տարեգրությունը: Ե., 2012, էջ 158:

² Տես *И. Г. Гукасов*. Выдающийся полководец Армении генерал-лейтенант Грач Амаякович Андресян. Ростов-на-Дону, 2001:

յանի վրա, և նա 1994 թ. հունվարի 1-ին ժամը 11:00-ին մեկնեց Վարդենիսի գո-
րամաս:

Այդ ժամանակ ես զբաղեցնում էի ՀՀ Ձինված ուժերի հրթիռային զորքերի և
հրետանու պետի – վարչության պետի պաշտոնը, և 1993 թ. դեկտեմբերի 31-ից
մինչև 1994 թ. հունվարի 1-ի գիշերը նշանակված էի
պատասխանատու՝ գտնվելով ՀՀ Ձինված ուժերի
Գլխավոր շտաբում: Հունվարի 1-ին ժամը 10:00-ին
լրացավ իմ հերթապահության ժամկետը, և ես մեկ-
նեցի տուն: Սակայն մեկ ժամ հետո զանգահարեց
Գլխավոր շտաբի օպերատիվ հերթապահը և հայտ-
նեց, որ ինձ հրամայված է շտապ մեկնել Վարդենիս:



գեներալ-լեյտենանտ
Հ. Հ. Անդրեյան

Ես արդեն տեղեկացված էի թշնամու մեծ զորա-
խմբերի առաջխաղացման մասին: Ստեղծվել էր մի
իրավիճակ, որը ձեռնտու էր միայն հակառակորդին:
Ես վերցրեցի այն ամենը (օպտիկական, կապի մի-
ջոցներ, տարածքի զինվորական քարտեզներ և այլն),
ինչ անհրաժեշտ էր հրետանու գործունեությունը և
կրակային հարվածները ղեկավարելու համար, և մեկ-
նեցի նշանակման վայր:

Վարդենիսի մոտոհրաձգային գնդի շտաբում ներկայացա գեներալ-լեյտե-
նանտ Հ. Անդրեյանին և զեկուցեցի իմ ներկայանալու մասին ուղիղ ժամը 12:30-
ին (1994 թ. հունվարի 1-ին): Նա ինձ առաջարկեց բարձրանալ գնդի շտաբի շենքի
2-րդ հարկ, բացեց մի սենյակի դուռը, որտեղ տեղադրված էր ընդամենը երկու
զինվորական մահճակալ և ասաց. «Ձախից իմ մահճակալն է, աջից՝ քոնը, օրվա
ընթացքում կզբաղվես քո հրետանու խնդիրներով, եթե ժամանակ կունենաս
հանգստանալու գիշերները, ապա պարտադիր պետք է լինես իմ կողքին՝ այս
սենյակում»: Իմ նկատմամբ օպերացիայի ղեկավարի այսպիսի վերաբերմունքը
միայն հարգանքի արտահայտություն չէր. նա գիտակցում էր, որ առանց
հրետանու մասնակցության անհնար է լինելու ջախջախել և հետ շարտել թշնամու
հարձակվող զորախմբերը: Հ. Անդրեյանը անկասկած հիշում էր Ի. Ստալինի
խոսքը. «Հրետանին պատերազմի աստվածն է, պատերազմի դաշտում հաղթում է
այն բանակը, որն ունի հզոր հրետանի»: Այսպիսով՝ գեներալ-լեյտենանտ Հ.
Անդրեյանի թույլտվությամբ կազմավորեցի հզոր հրետանային խմբեր, որոնք էլ
հետագայում ապահովեցին օպերացիայի հաջողությունը...

Թշնամին, օգտվելով այն հանգամանքից, որ Օմարի լեռնանցքի ուղղությամբ
մեր ստորաբաժանումները մեծաթիվ չէին, աստիճանաբար ճնշում գործադրելով,
կուտակեց մեծաքանակ զորախմբեր և 1994 թ. հունվարի առաջին 10 օրվա
ընթացքում հասավ որոշակի հաջողությունների: Գեներալ-լեյտենանտ Հ. Անդրեյ-
անը անմիջապես ձեռնամուխ եղավ պաշտպանական օպերացիայի իրագործ-
մանը, իսկ այնուհետև՝ հակահարձակման խմբավորումների ստեղծմանը և թշնա-
մու զորախմբերի ջախջախմանը: Հ. Անդրեյանի մտահղացմամբ և անմիջական
ղեկավարությամբ հստակ կազմակերպված մարտական գործողությունները տվե-

ցին իրենց արդյունքը. թշնամին, կրելով մարդկային մեծ կորուստներ, հետ շարտվեց՝ թողնելով մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Այս օպերացիայի նախապատրաստման ընթացքում վառ դրսևորվեցին մեծ զորավարի ռազմական ունակությունները, գիտելիքները և, ամենակարևորը, իր Հայրենիքին մեծ նվիրվածությունը:

Գեներալ-լեյտենանտ Հրաչյա Անդրեսյանը օժտված էր նաև անձնական խիզախությամբ ու քաջությամբ. կարևորելով մարտական խնդիրների կատարումը՝ նա 1994 թ. հունվարի 14-ին դիմեց մեծ ռիսկի: Նրան զեկուցել էին, որ գյուղի մոտակայքով անցնող հիմնական ճանապարհը ականապատված է, և տեխնիկան չի կարող անցնել: Ականազերծման խնդիրների լուծումը նա վերցրեց իր վրա. այդ ընթացքում նրան ուղեկցում էր վաստակաշատ գնդապետ Հրանտ Շամխալի Աղաջանյանը, որը ծնվել էր 1939 թ. հոկտեմբերի 23-ին Գորիսի Այգեճոք գյուղում, երկար տարիներ՝ 34 տարի, ծառայել էր Խորհրդային Միության բանակում: Քանի որ չկային ականազերծման անհրաժեշտ ինժեներասակրավորական միջոցներ, գեներալը որոշեց ականազերծումը կատարել տրակտորի (բուլդոզերի) օգտագործմամբ: Տրակտորի մեխանիկ-վարորդին բացատրելով, թե ինչպես պետք է շարժվել ճանապարհի ականապատված հատվածում, նրանք երկուսով՝ գեներալը և գնդապետը, մոտ 20 մետր հեռավորության վրա քայլեցին տրակտորի հետևից: 15 րոպե անց ականի պայթուցից տրակտորի շերտերը պոկվեց և մոտ 30 մետր շարտվեց: Տրակտորի վարորդը վնասվածք չստացավ, սակայն թեթև վնասվածքներ ստացան և՛ գեներալ-լեյտենանտ Հ. Անդրեսյանը՝ ձախ ոտքի ծնկից ներքև, և՛ գնդապետ Հ. Աղաջանյանը՝ աջ ուսից:

Ամբողջ օպերացիայի ժամանակ գեներալը ոչ մի անգամ չբացակայեց մարտական գործողությունների տարածքից՝ կատարելով հարաբերական ուժերի հաշվարկումներ, անձամբ զննելով տեղանքը, ցուցումներ տալով հրամանատարական կազմին և համոզված լինելով, որ մեր առկա ուժերով հնարավոր է հասնել հաղթանակի: Նրան հաջողվեց իր շուրջը համախմբել մարտերում արդեն փորձված ու հեղինակություն վայելող հրամանատարների. հարավարևելյան խմբավորման հրամանատար նշանակվեց գնդապետ (ներկայումս՝ գեներալ-գնդապետ) Յու. Խաչատուրովը, իսկ արևմուտքից հարձակվող զորախմբի հրամանատար՝ գնդապետ (այժմ գեներալ-մայոր) Ռ. Գոդյանը: Պետք է ասել, որ գեներալ-լեյտենանտ Անդրեսյանը չսխալվեց, երկու զորախմբերի հրամանատարներն էլ փայլուն կերպով կատարեցին իրենց առաջադրանքը:

Վճռական հարձակման օրը՝ փետրվարի 17-ին, մեր զորքերը հասան մեծ հաջողության. երկու զորախմբերը միացան իրար, թշնամին հետ շարտվեց: Օպերացիայի գլխավոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Անդրեսյանի որոշումը հստակ ու կշռադատված էր. պետք է անցնել գիշերային հարձակման: Գնդապետ Յու. Խաչատուրովը շատ արագ ճշտեց խնդիրները, հարձակվող ստորաբաժանումների հրամանատարներն ստացան մարտական առաջադրանք՝ շարունակել հարձակողական գործողությունները գիշերային պայմաններում, հրետանու հզոր կրակի ուղեկցությամբ հետապնդել արդեն փախուստի դիմած թշնամուն: Գեներալն անընդհատ զեկույցներ էր պահանջում և շտապեցնում, որ թշնամին

գլխովին ջախջախվի: Մեծ էր բոլորիս ուրախությունը և հպարտությունը, երբ մեր քաջարի հայորդիները, ահուսարսավի մատնելով թշնամուն, փետրվարի 17-ի լույս 18-ի գիշերը ժամը 2:40-ին վերջնականապես հետ շարտեցին նրան:

Այդ իրադարձությունների վերաբերյալ Պաշտպանության նախարար Ս. Օհանյանը գրում է. «Այս ճակատում, դեռ հակառակորդի հարձակման առաջին իսկ օրերից, Վլադիմիր Հայրապետյանի ղեկավարությամբ հզոր հրետանային բռունցք էր ստեղծվել, իսկ հակահարձակման նախօրեին լրիվ հստակեցվեցին բոլորի խնդիրները, մշակվեց հետևակի հրամանատարների հետ համագործակցությունը: Դրան կարճ ժամանակում կատարված մեծ աշխատանք նախորդեց: Հաջողությամբ զարգացնելով հակահարձակումը՝ հայկական ուժերը հանդիպեցին միմյանց: Փետրվարի լույս 18-ի գիշերը «Գեազյունները», «Դ-20» հրանոթներն ու «Գրադները» չլռեցին: Գիշերային կրակի վարումն ունի իր առանձնահատկությունները, բայց հետևակի ու հրետանավորների փայլուն համագործակցության շնորհիվ հրետանու կրակը դիպուկ էր ու արդյունավետ: Թշնամին չէր սպասում, որ այդչափ ուժեղ հարձակումը գիշերով էլ կշարունակվի և այն էլ՝ հրետանային այդպիսի աջակցության պայմաններում»³:

Լուսաբացին քաջարի զեներալ-լեյտենանտ Անդրեայանը անձամբ բարձրացավ Օմարի լեռնանցք և երկար նայեց նախնիների կառուցած գյուղերին ու քաղաքներին՝ Գանձակի ուղղությամբ, արցունքներով լի աչքերով, բայց ուրախ էր, գրկում և համբուրում էր զինվորներին ու հրամանատարներին: Հայկական կողմի՝ մեծ հաջողությամբ իրականացրած մարտական գործողությունների շնորհիվ, աղբբեջանցիները, կրելով զգալի կորուստներ, ստիպված եղան նահանջել: Նրանց պլանավորած «Մուրովդաղ» օպերացիան հիմնահատակ կերպով ձախողվեց: Այս և հետագայում նաև այլ ուղղություններով հայկական բանակի հաջողությունները և հակառակորդի ծանր կորուստները Աղբբեջանին ստիպեցին խնդրել զինադադար:

Յավոք, այս գործողությունը քաջ զեներալի վերջին օպերացիան էր: Զինադադարից հետո նա մեկնեց Դոնի Ռոստով, սակայն Հայաստանի Զինված ուժերի հետ կապը չխզեց. հաճախ էր այցելում Հայաստան, լինում զորամասերում ու ստորաբաժանումներում, մեծ աշխատանք կատարում հայկական և ռուսական բանակների մարտական գործակցությունն ամրապնդելու ուղղությամբ:

Գեներալ-լեյտենանտ Անդրեայանի մարտական սխրագործությունները բարձր են գնահատվել, և Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով 2000 թ. նա հետմահու արժանացավ ՀՀ 1-ին աստիճանի «Մարտական խաչ» շքանշանի:

Հրաշյա Անդրեայանի հետ մենք ծանոթ էինք դեռ 1982 թվականից: Առաջին հանդիպումը տեղի է ունեցել Հյուսիսկովկասյան զինվորական օկրուգի շտաբում (Դոնի Ռոստով), երբ նա արդեն նշանակված էր նշված զինվորական օկրուգի շտաբի պետ, այնուհետև՝ Կրասնոդար քաղաքում տեղակայված բանակային կորպուսում, որտեղ ես ծառայում էի, իսկ մի քանի տարի անց՝ 1989 թ.՝ Չեխոսլովակիայում: Եվ ամենուր սպաները նրա մասին խոսում էին որպես զինվորական

³ Ս. Օհանյան, Նշ. աշխ., էջ 172-173:

առումով բարձր մակարդակի պատրաստությամբ գեներալի: Նրան հատուկ էին բացարձակ ազնվությունը, բարձր շտաբային կուլտուրան, զինվորական հարուստ գիտելիքները և ենթակաների նկատմամբ հոգատար վերաբերմունքը: Մարտական գեներալը միշտ կմնա բոլորիս սրտերում և Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի փառավոր տարեգրության էջերում՝ որպես ականավոր հայ ռազմական ու պետական գործիչ:

Այսօր, երբ մենք արդեն ունենք տարածաշրջանում ամենամարտունակ Ձինված ուժերը, որոնք կիսապատերազմական պայմաններում գրեթե ամեն օր զսպիչ հարվածներ են հասցնում նենգ թշնամուն, օրվա խնդիր է գեներալ Անդրեսյանի և նրա մման տասնյակ նվիրյալների կյանքի ու գործունեության ուսումնասիրությունը, հատկապես՝ ռազմական ուսումնական հաստատություններում: ՌԻստի առաջարկում ենք ռազմական ուսումնական հաստատություններում որպես առանձին առարկա ուսումնասիրել Ձինված ուժերի կազմավորման գործում և տարած հաղթանակներում մեծ ավանդ ներդրած գորավարների, այդ թվում նաև գեներալ-լեյտենանտ Հրաչյա Հմայակի Անդրեսյանի, կյանքն ու գործունեությունը:

Հողվածու ուզում են ավարտել քաջ Նժդեհի իմաստուն խոսքով, որը համահունչ է նաև գեներալ-լեյտենանտ Հ. Անդրեսյանի գործունեությանը. «Հայաստանն է եղել իմ սրբազան ցավը, կարոտը, ուրախությունը, իմ գոյության իմաստը, իմ անմահությունը, իմ գերագույն իրավունքն ու պարտականությունը»:

ПОЛКОВОДЦЫ-АРМЯНЕ

ПАМЯТИ ТАЛАНТЛИВОГО ВОЕНАЧАЛЬНИКА ГЕНЕРАЛ-ЛЕЙТЕНАНТА ГРАЧА АМАЯКОВИЧА АНДРЕСЯНА

В. А. АЙРАПЕТЯН, генерал-майор, председатель Комиссии высшего офицерского состава при Министре обороны РА

РЕЗЮМЕ

Грач Амаякович Андресян родился 29 января 1932 г. в Краснодаре. В 1952 г. окончил Тбилисское военно-пехотное училище, в 1966 г. – Военную академию им. М. Фрунзе, в 1972 г. – Военную академию Генштаба ВС СССР им. К. Ворошилова. С 1979 г. – генерал-лейтенант. В 1978 г. был назначен командующим 6-й армией Ленинградского военного округа, в 1981 г. – начальником штаба, первым заместителем командующего и членом Военного Совета Северо-Кавказского военного округа. Позднее стал военным советником и представителем Главнокомандующего Объединёнными Вооружёнными силами государств–участников Варшавского договора при Начальнике Генерального штаба Чехословацкой Народной Армии. Г. А. Андресян удостоен орденов и медалей СССР, ГДР и ряда других государств.

В апреле 1992 г. генерал-лейтенант Г. Андрисян добровольно приехал в Армению защищать Родину от агрессии Азербайджана. В 1992–1994 гг. принимал участие в планировании и осуществлении практически всех операций армии Республики Армения и Армии обороны Арцаха: в июле 1992 г. организовал оборону в Ноемберянском, Иджеванском и Бердском районах, в октябре 1992 г. организовал оборону юго-восточных границ РА и последующее контрнаступление против азербайджанских агрессоров в Лачинском районе, в декабре 1992 г. – наступление на Кафанском направлении с целью создания пояса безопасности вокруг центра Зангезура Кафана, а с 1 – го января 1994 года он постоянно находился в районах боевых действий и в ходе широкомасштабного наступления азербайджанской армии, планировавшей после захвата ряда районов НКР выход к рубежам границ РА и вторжение на территорию РА, лично руководил Кельбаджарской операцией, в ходе которой противник был разгромлен.

Генерал-лейтенант Андрисян в боях отличался высоким профессионализмом, мужеством и отвагой, знанием тонкостей человеческой души и взаимоотношений, всегда был рядом с солдатами, в самых критических ситуациях проявляя рассудочность и трезвость оценок, не покидал поля боя даже после ранения, за что и был уважаем и любим боевыми товарищами, соратниками и подчиненными.

После подписания 12 мая 1994 г. в Бишкеке соглашения о прекращении огня Г. Андрисян ушел в отставку и вернулся в Ростов-на-Дону, но не порвал связь с Вооруженными силами Армении. Он часто выезжал в Армению, посещал части и подразделения, проводил большую работу по укреплению боевого содружества между Российской и Армянской армиями. Скончался 9-го ноября 1999 г. в Москве. Похоронен во дворе церкви Сурб Хач в Ростове-на-Дону. Указом Президента Республики Армения в мае 2000 года генерал-лейтенант Г. А. Андрисян был посмертно награжден орденом «Боевого Креста» 1-й степени.

THE GENERALS-ARMENIANS

IN MEMORY OF TALENTED MILITARY LEADER LIEUTENANT GENERAL HRACH HMAYAK ANDRESYAN

V. A. HAYRAPETYAN, Major General, Chairman, Committee of Supreme Commissioned Staff at the RA Defense Minister

SUMMARY

Hrach Hmayak Andresyan was born on 29 January, 1932 in Krasnodar. He graduated from Tbilisi Military Infantry School in 1952, M. Frunze Military Academy in 1966, and the Main Staff Military Academy of the USSR Armed

Forces after Kliment Voroshilov – in 1972. He had held the rank of Lieutenant General since 1979. In 1978 he was appointed as Commander of the 6th Army, Leningrad Military District, in 1981 – Chief of Staff, First Deputy Commander and Member of the Military Council of the North Caucasian Military District. Later he became Military Advisor and Representative of the Commander of Joint Armed Forces of the Warsaw Pact participant states at the Chief of Main Staff of the Czechoslovak People's Army. H. Andresyan was awarded orders and medals of the USSR, GDR and a number of other states.

In April, 1992 Lieutenant General H. Andresyan came to Armenia on his own initiative to protect his fatherland from Azerbaijan's aggression. In 1992–1994 he participated in planning and carrying out practically all the operations of the army of the Republic of Armenia and the Defense Army of Artsakh: in July, 1992, he organized the defense in Noyemberyan, Ijevan and Berd regions, in October, 1992, Andresyan organized the defense of Armenia's south-eastern borders and the subsequent counteroffensive against the Azerbaijani aggression in Lachin region, in December, 1992 – the attack on Kapan direction for setting up a security zone around the center of Zangezur, Kapan. In December, 1993 – March, 1994, he organized the defense in the course of a large-scale offensive of the Azerbaijani army, which planned to reach the frontiers of the Republic of Armenia and intrude into the RA territory after the capture of a number of NKR regions.

He personally led the operations, which he had planned and prepared, was distinguished in actions by his high professionalism, courage and bravery, knowledge of the subtleties of human soul and mutual relations. Andresyan had always been beside his soldiers, displaying rationality and sobriety of estimates in the most critical situations, he did not leave the battlefield even after being wounded, and for that positive trait he won the respect and love of comrades-in-arms, fellow-soldiers and subordinates.

H. Andresyan resigned and left Armenia after the Ceasefire Agreement was signed in Bishkek on 12 May, 1994. He died on 9 November, 1999, in Moscow. He was buried in the courtyard of the Surb Khach (“Holy Cross”) Church in Rostov-on-Don.

Lieutenant General H. H. Andresyan was posthumously awarded the Order of the Combat Cross of the 1st degree by the Decree of the President of the Republic of Armenia in May, 2000.

Ի գիտություն հեղինակների և ընթերցողների

ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Գոկոտրակա-կան և թեկնածուական ստեղծագործությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները: Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

К сведению авторов и читателей

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

For the information of the authors and readers

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Տ. Մ. Անյրոնյան*
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Ջ. Դ. Ասարյան*
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*
Տեխնիկական բաժնի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*

Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի,
Ն. Ս. Մկրտչյանի, Լ. Հ. Պապիկյանի, Զ. Վ. Փիրոյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ա. Ա. Խաչարյանի, Ս. Ռ. Հակոբջանյանի,
Ա. Հ. Սարուխանյանի*

Մրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝ *Մ. Ա. Ավետիսյանի,
Ա. Հ. Հակոբյանի, Ա. Ա. Մարտիրոսյանի*

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆԵՑՄՈ ՎՈՂՈՑ, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94
Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>
Պաշտոնական բլոգ-կայք՝ <http://razmavaraget.wordpress.com>
Էլ. փոստ՝ haykakanbanak@mil.am

© ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2015 թ.


Ստորագրվել է տպագրության 12.10.2015: Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70x100 1/16:
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,25 մամուլ: Տպաքանակը՝ 500:
Տառատեսակները՝ «Արիալ», «Թայմս» և «Բալթիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:
Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «Լեզալ Պլյուս» և «Լիմուշ» տպարաններում



ՀՀ Պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը
հանրապետության հարավարևմտյան սահմանագոտում

2015 թ. հունիս



ՀՀ
РА
РА

ԱդրՀ
ԱՅՐ
ԱԶՐ

ԼՂՀ
ԻԿՐ
ՆԿՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ